

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Յ Ո Ւ Ս Ի Ս Ա Փ Ա Յ Լ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

2 (6)

2020

ԵՐԵՎԱՆ

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2020

***Հրատարակության է երաշխավորել Հյուսիսային համալսարանի
գիտական խորհուրդը***

Գլխավոր խմբագիր՝ Ճուղուրյան Ա.Գ.(տնտ.գիտ.դոկ.)

Խմբագրական խորհուրդ

Մակիյան Մ.Բ.(տնտ.գիտ.թեկ.), Ասատրյան Գ.Ե. (փիլ.գիտ.դոկ.),
Ավետիսյան Ս.Ս.(տնտ.գիտ.դոկ.), Երիցյան Ս.Ս. (բան.գիտ.դոկ.),
Հակոբյան Գ.Վ.(բան.գիտ.դոկ.,դոցենտ), Ղամբարյան Ա.Ս.(իրավ.գիտ.դոկ.),
Միրզոյան Վ.Ա.(փիլ.գիտ.դոկ.), Ներսիսյան Ա.Ա. (պատմ.գիտ.դոկ.),
Սահակյան Ա.Կ.(սոց.գիտ.դոկ.), Ֆլջյան Լ.Հ.(բան. գիտ.դոկ)

СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ
NORTHERN UNIVERSITY

ЮСИСАПАЙЛ

НАУЧНЫЙ ЖУРНАЛ

2 (6) 2020

Главный редактор Джугурян А.Г. (доктор экон. наук)

Редакционная коллегия

Макичян М.Б. (канд. экон. наук), Аветисян С.С. (доктор экон. наук),
Акопян Г.В. (канд. филол. наук) Асатрян Г.Е. (доктор филос. наук),
Гамбарян А.С. (доктор юрид. наук), Ерицян С. С. (доктор филол.
наук), Мирзоян В.А. (доктор филос. наук), Нерсисян А.А. (доктор
ист. наук), Саакян А.К. (доктор социол. наук), Флджян Л.Г. (доктор
филол. наук)

HYUSISAPAYL

SCIENTIFIC JOURNAL

2 (6) 2020

Editor-in-chief: Tshuguryan A.G. (Doctor of Science in Economy)

Editorial Collegium

Makichyan M.B. (PhD in Economy), Avetisyan S.S. (Doctor of Science in
Economy), Akopyan G.V. (PhD in Philology), Asatryan G.E. (Doctor of
Science in Philosophy), Ghambaryan A.S. (Doctor Science in Law),
Eritsyan S.S. (Doctor of Science in Philology), Mirzoyan V.A. (Doctor of
Science in Philosophy), Nersisyan A.A. (Doctor of Science in History),
Sahakyan A.K. (Doctor of Science in Sociology), Fljyan L.H. (Doctor of
Philology)

ՀՈՒՄԱՆԻԶՄԸ ԱՐԴԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Գրիգոր Ասատրյան

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Հյուսիսային համալսարան
egorovicgrigorij@gmail.com

Մարդկությունը թևակոխել է պատմական զարգացման սկզբունքորեն նոր, անսովոր դարաշրջան: Նոր ժամանակների առավել բնորոշ գիծը հասարակական զարգացման դինամիզմի աննախադեպ աճն է, աշխարհում կատարվող խոր ու արմատական փոփոխությունները, որոնք շոշափում են կյանքի բոլոր ոլորտները, մարդկային կեցության բուն հիմքերը:

Մակայն այդ փոփոխություններն ու զարգացումներն իրենց մի շարք կողմերով հակասական են ու մտահոգիչ: Նոր՝ տեխնածին քաղաքակրթությունը կյանքը դարձրել է անհամեմատ ավելի հարմարավետ, բայց բնավ ոչ ավելի մարդկային: Մարդկությունը հայտնվել է գեղոնիզմի, կոնֆորմիզմի և այլնի գայթակղության առջև: Արմատներ են գցում ընչաքաղցությունն ու սպառողական հոգեբանությունը, տիրապետող են դառնում անգուսպ անհատապաշտությունն ու եսասիրությունը՝ ընդդեմ ալտրոիզմի ու կոլեկտիվիզմի:

Անհանգստություն ու տագնապ է հարուցում նաև սոցիալ-քաղաքական ու կրոնաէթնիկական հակադիր ուժերի բախման թատերաբեմ դարձած արդի աշխարհի պատկերը: Ստորադասվում ու անտեսվում են փոքր երկրների ու ժողովուրդների շահերը, ռոնահարվում են նրանց իրավունքները: Մարդիկ օտարանում են միմյանցից, կտրվում հոգևոր արժեքներից, դաս չեն քաղում նույնիսկ անցյալի առավել ողբերգական էջերից. իրավացի էր Հեգելը, ով վկայակոչելով պատմությունն ու փորձը, տարակուսած նշում էր, որ ժողովուրդներն ու նրանց կառավարությունները ոչինչ չեն սովորել պատմության դասերից՝ դրանք դիտելով ժամանակների ընդհանուր շղթայից դուրս: Արմատավորվում է բռնության, կոպիտ ուժի ու դաժանության պաշտամունքը, որը եսասիրության, ընչաքաղցության, հարստացման ծարավի և ներկա աշխարհի արժեքների սանդղակի վերին տեղերում հայտնված մյուս նեգատիվ դրսևորումների հետ զուգակցված՝ տարանջատում է մարդկանց, ջլատում նրանց ուժերը, ստեղծում համընդհանուր առճակատման մթնոլորտ:

Այս համատեքստում հումանիզմը որպես հիմնարար աշխարհայացքային սկզբունք և մշակութային ինքնատիպ երևույթ 3-րդ հազարամյակի արժեքային համակարգում ձեռք է բերում համամարդկային բացառիկ նշանակություն, դառնում արդի դարաշրջանում ծավալվող

սոցիալ-տնտեսական ու քաղաքական պրոցեսների առաջադիմականության ու կենսունակության որոշման գլխավոր չափանիշ:

Հումանիզմը բացառիկ դեր է խաղացել անտրոպոսոցիոգենեզի բոլոր փուլերում, մարդկային հասարակության զարգացման բոլոր աստիճաններում: Նա իր ուրույն կնիքն է դրել արդի քաղաքակրթության ամբողջ նկարագրի վրա՝ ծառայելով որպես կենարար աղբյուր, որի բարերար ազդեցությամբ է զարգացել համաշխարհային պատմությունն իր ամբողջության մեջ:

Սակայն սոցիալական կյանքի մի շարք նեգատիվ իրողությունների, հումանիզմի հակոտնյանների, նոր հազարամյակի բարդ ու սուր հիմնախնդիրների ճնշման տակ անցյալի գիրկն է անցնում Վերածննդի դարաշրջանի և Լուսավորչականության խոր ու խանդավառ լավատեսությունը, որը դարեր շարունակ ոգեշնչում էր իր հետևորդներին՝ ինչպես լիբերալիզմի գաղափարախոսությանը, այնպես էլ սոցիալիստական ուսմունքներին: Եվ ավանդական, դասական հումանիզմը մեր օրերում հայտնվել է ճգնաժամի մեջ:

Մարդկության անցած ուղին վկայում է, որ պատմական յուրաքանչյուր դարաշրջանում մարդկային հասարակությունը հայտնվում է իրեն սպառնացող այնպիսի վտանգների դեմ-հանդիման, որոնք նա պետք է անպայման չեզոքացնի՝ ապահովելու համար քաղաքակրթության հետագա առաջընթացը: Յուրահատուկ օրինաչափություն դարձած այս միտումն առանձնահատուկ սրությամբ է դրսևորվում հատկապես համաշխարհային պատմության ներկա փուլում, որն առանձնանում է նոր ժամանակներում մարդկությանը նետված մարտահրավերների աննախադեպ մասշտաբներով ու վտանգավորությամբ:

Եվ գտնվելով հոգևոր-բարոյական ռեֆլեքսիայի կենտրոնում՝ հումանիզմը հայտնվել է բախտորոշ ընտրության առջև, որից և կախված է այն հարցի լուծումը, թե որքանով մարդը կդառնա ավելի մարդկային, կծառայի իր վեհ կոչմանը:

Այդ հարցի լուծումը մեծապես պայմանավորված է այն հիմնախնդիրների բնույթով, որոնց հետ բախվում է մարդկությունը ներկա դարաշրջանում:

Արդի գիտատեխնիկական ու տեխնոլոգիական առաջընթացն անկասելիորեն տանում է դեպի գլոբալ աշխարհի ձևավորում: Գլոբալացումը ներկա աշխարհում դարձել է համաշխարհային զարգացման տոտալ, մշտական գործոն, որի հիմքում ընկած է գիտատեխնիկական հեղափոխության նոր՝ տեղեկատվական փուլը: Գիտատեխնիկական հեղափոխությունը ներթափանցելով տեղեկատվության ոլորտ՝ անմիջականորեն շոշափում է մարդկային գործունեության բոլոր տեսակների համար կարևոր նշանակություն ունեցող այնպիսի պրոցեսներ, ինչպիսիք

են գլոբալ մասշտաբներով տեղեկատվության ստեղծումը, մշակումը, պահպանումն ու փոխանցումը: Տնտեսական, սոցիալական ու քաղաքական կյանքում արմատական փոխակերպումների հետ մեկտեղ, այն լուրջ փոփոխություններ է առաջ բերում նաև հոգևոր ոլորտում, մարդկանց գիտակցության ու հոգեբանության մեջ:

Ներկայումս, երբ մարդկությունն ապրում է գլոբալ փոփոխությունների, սոցիալ-քաղաքական խոր տեղաշարժերի և տեխնոլոգիական հեղափոխության ժամանակաշրջան, որն արդեն մոտ ապագայում կարող է հասցնել քաղաքակրթության զարգացման արմատական, որակական փոփոխությունների, աշխարհի նոր սոցիալական պատկերի ստեղծման, բացառիկ նշանակություն են ձեռք բերում և առաջին պլան մղվում ժամանակակից գլոբալ հասարակության բնութագրման, այժմյան քաղաքակրթության ճգնաժամային երևույթների արմատների բացահայտման, մարդկության զարգացման ռացիոնալ ուղիների որոնման, հասարակական առաջընթացին ուղեկցող նեգատիվ դրսևորումների կանխման և այդ ամենի հետ կապված՝ համաշխարհային պատմության արդի փուլի պահանջումներին համահունչ աշխարհայացքային կողմնորոշիչների, համամարդկային նոր ուսմունքի մշակման հարցերը:

Արդի քաղաքակրթության ճգնաժամային երևույթներին, սոցիալական նոր իրականությանը, 3-րդ հազարամյակի մարտահրավերներին դեմ-հանդիման մարդկությունն զգում է մի կողմից անցյալի հումանիստական ժառանգության յուրացման, դասական հումանիստական արժեքների իմաստավորման¹, մյուս կողմից՝ հումանիզմի պրոբլեմի նկատմամբ նոր մոտեցումների, հումանիստական նոր պարադիգմայի մշակման կարիք, որը ելներ մեր դարաշրջանի սպեցիֆիկ առանձնահատկություններից, սոցիալ-պատմական նոր իրողություններից, մարդ-

¹ Հումանիզմի ամբողջական պրոբլեմը մենք հանգեցնում ենք նրա 3 առավել կարևոր, հիմնարար ասպեկտների: Դրանցից առաջինը հումանիզմի ընդհանուր-աշխարհայացքային, տեսական-փիլիսոփայական ասպեկտն է, որը ելնում է մարդու՝ որպես բնության բարձրագույն ստեղծագործության, բացարձակ արժեքի, Տիեզերքի յուրահատուկ կենտրոնի ըմբռնումից: Պրոբլեմի երկրորդ ասպեկտը հումանիստական հրամայականն է և հանգում է աշխարհում այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք ապահովեն մարդկային անհատի ազատ ու անկաշկանդ զարգացումը, նրա ֆիզիկական ու հոգևոր պոտենցիալների լիակատար դրսևորումը: Երրորդը հումանիզմի բարոյագիտական ասպեկտն է, որի առանցքն է կազմում անհատական ու հասարակական գիտակցության մեջ հումանիզմի գաղափարների սերմանումը, հումանիստական սկզբունքների ու նորմերի հետևողական արմատավորումը ազգերի ու ժողովուրդների, բոլոր մարդկանց փոխհարաբերություններում, հումանիստական էթիկայի պահանջների անվերապահ կատարումը բոլոր անհատների ու ամբողջությամբ վերցրած՝ հանրության կողմից:

կության առջև ծառացած մեծ ու մասշտաբային հիմնախնդիրներից, մարդու և հասարակության միջև կապերի նոր բնույթից և առաջարկեր ձգնաժամային հասարակությունից դուրս գալու ռացիոնալ ելքեր, մատնանշեր արդի դարաշրջանի հիմնախնդիրների լուծման հուսալի ուղիներ և միջոցներ: Այդ նոր ուսմունքը մենք անվանում ենք «բանական հումանիզմ»:

Իսկ ի՞նչն է կազմելու արդի հումանիզմի գլխավոր բովանդակությունը, ի՞նչ հիմնարար սկզբունքների ու արժեքային կողմնորոշիչների վրա է խարսխվելու «բանական հումանիզմը»:

Նախ, «բանական հումանիզմը» պետք է հանդես գա որպես հուսալի ու ազդեցիկ հակակշիռ՝ ընդդեմ ժամանակակից հասարակության մեջ նկատվող այն հախուռն ու տարերային միտումների, որոնք տանում են դեպի հումանիզմի սկզբունքների ու հումանիստական արժեքների անտեսում, հասարակական հարաբերությունների, իր ամբողջության մեջ հասարակական կյանքի դեհումանիզացիա, նրա ներդաշնակության խախտում:

Հումանիստական նոր պարադիգմայի միջուկը նրա աշխարհիկ բովանդակությունն է, որը կողմնորոշված է դեպի իրականությունը, մարդկային կյանքը:

Դա գիտական, մատերիալիստական աշխարհայացք է, որն ամուր կերպով խարսխված է մտածող բանականության, ratio-ի պատվանդանի, արդի գիտության նվաճումների վրա և հանդես է գալիս ընդդեմ հակաինտելեկտուալիզմի ու իռացիոնալիզմի զանազան դրսևորումների: Գիտականությունն ու ռացիոնալությունը² կազմում են արդի հումանիզմի

² Ռացիոնալությունն առհասարակ բառիս ոչ սովորական, այլ լայն առումով, մեր համոզմամբ, ընկած է ոչ միայն սոցիալական իրականության, «մարդկային աշխարհի» հիմքում, այլև կազմում է ամբողջ գոյավորի, ունիվերսումի անբաժանելի հատկանիշը: Այս առիթով նկատենք, որ ունիվերսումը գոյություն ունի և շարունակում է իր ընթացքը շնորհիվ այն բանի, որ նրա հիմքում ընկած է «բանական սկզբունքը», «ռացիոն», որին անտիկ հույները գրեթե նույն իմաստով, սակայն տարբեր անվանումներով կոչում էին մի դեպքում՝ «լոգոս» (Հերակլիտ Եփեսացի (մոտ 520 – մոտ 460 մ.թ.ա.), ում մոտ այն հանդես էր գալիս որպես «կեցության օրենք», «սուբստանցիոնալ համաշխարհային սկզբունք», «կոսմոսի հոգի» և այլն), երկրորդ դեպքում՝ «նուս» (Անաքսագոր Կլազոմենացի (մոտ 500 – 428 մ.թ.ա.), ով «նուսը» դնում էր աշխարհի առաջացման ակունքներում, այն համարում համընդհանուր շարժիչ ուժ, որը կազմակերպում է տարերքին), մեկ այլ դեպքում՝ «էդոս» (Պլատոն Աթենացի (427-347 մ.թ.ա.), ով մինչփիլիսոփայական նշանակությունից զատ՝ այն դիտում էր որպես հավերժական նախատիպ՝ պարադիգմա, «գաղափար» տերմինի հոմանիշ, տրանսցենդենտ մտահասանելի ձև, որը գոյություն ունի իրեն ենթակա առանձին իրերից դուրս, հանդիսանում է հավաստի գիտական գիտելիքի առարկա), նոր

ուժի ու կենսունակության աղբյուրը: Ռացիոնալությունը որպես համա-
մարդկային նոր ուսմունքի առավել կարևոր հատկանիշ ձեռք է բերում
հատուկ ու անփոխարինելի արժեք: «Եթե մենք նվիրվենք բանա-
կանության լույսի որոնմանը,- գրում է Ա.Շվեյցերը,- ապա չենք իջնի
մինչև այն սերնդի աստիճանը, որն ընդունակ չի ոչ մի սխրանքի, այլ
կիսանդավառվենք մեծ ու խոր իդեալների մեծ ու խոր բուռն զգաց-
մունքով»³: Այդ պատճառով մարդկության նոր դարաշրջանը պետք է
սկսվի նոր հումանիստական աշխարհայացքից, որը պետք է լինի
«մտածող աշխարհայացք», քանզի «Միայն մշտապես մտածող աշ-
խարհայացքին դիմելիս կարող են արթնանալ մարդու բոլոր հոգևոր
ընդունակությունները»⁴, միայն մտածող աշխարհայացքի խորացման
ուղիով է հնարավոր դուրս գալ թավուտ անտառից, որտեղ մենք մոլորվել
ենք⁵: Եվ ընդհանրապես՝ «ցանկացած իրական առաջադիմություն
աշխարհում կանխորոշված է վերջին հաշվով ռացիոնալիզմով»⁶:

Ժամանակների փոփոխության մեջ՝ «ռացիո» (լատիներեն՝ ratio -
բանականություն) (Ռենե Դեկարտի (1596-1650թթ.) և ֆրանսիական մյուս
լուսավորիչների մոտ)՝ որպես «ինտելեկտի» հոմանիշ և այլն: Եվ ընդհանրապես
հավատն առ բանականության ուժը, նրա ամենագորությունը վառ
արտահայտություն գտան հատկապես ֆրանսիական լուսավորիչների
ուսմունքում՝ իրենց կնիքը դնելով այդ ամբողջ դարաշրջանի վրա. մտածող
բանականությունը հռչակվեց որպես ամբողջ գոյավորի միակ չափանիշը. ամեն
ինչ պետք է կանգնեց բանականության դատաստանի առաջ և՛ կամ պետք է
արդարացնեի իր գոյությունը, ապրելու իր իրավունքը կամ հեռանալ ու
մատնվել չգոյության: Հենց այդ պատմական երևույթի և դրա հետ սերտորեն
կապված ֆրանսիական մեծ հեղափոխության մասին էր ոգեշնչված գրում Հեգելը.
«Այն օրից, երբ երկնքում փայլատակում է արեգակը և նրա շուրջ պտտվում են
մոլորակները, դեռ երբեք չէր պատահել, որ մարդը գլխի վրա կանգնեի, այսինքն՝
հենվեր իր մտքի վրա և մտքի համաձայն էլ կառուցեր իրականությունը:
Անաքսագորասն առաջինն է ասել, որ Նոս-ը, այսինքն՝ բանականությունն է
կառավարում աշխարհը, բայց միայն այժմ առաջին անգամ մարդը հասավ այն
բանն ընդունելուն, թե միտքը պետք է կառավարի հոգևոր իրականությունը: ...
Դա մի հոյակապ արևածագ էր: Բոլոր մտածող էականները բերկրանքով ողջունեցին
նոր դարաշրջանի սկսվելը: Վեհ հրճվանքն էր իշխում այդ ժամանակ, և ամբողջ
աշխարհը համակվեց խանդավառությամբ, կարծես առաջին անգամ կատարվեց
աստվածայինի հաշտեցումը երկրի հետ» (Гегель. Сочинения в 14 томах. М.-Л.,
1929-1959. Соч., т. 8, Философия истории. М.: Государственное социально-
экономическое издательство, 1935, стр. 413-414):

³ Швейцер А. Культура и этика (перевод с немецкого), М., “Прогресс”, 1973, стр. 83.

⁴ Նույն տեղում, էջ 82:

⁵ Նույն տեղում, էջ 84:

⁶ Նույն տեղում:

Արդի հումանիզմի կարևոր հատկանիշներից է նրա համա-մարդկային, պլանետար ուղղվածությունը, որի համար բնորոշ է ինչպես հումանիստական աշխարհայացքի հիմնարար սկզբունքների կիրառումն ու տարածումը համաշխարհային մասշտաբի իրադարձությունների վրա, այնպես էլ այն, որ նա իր մի շարք չափումներով բաց է՝ հարաբերվելու համար ամենատարբեր փիլիսոփայական, բարոյական, էկոլոգիական, քաղաքական և այլ դոկտրինաների ու ծրագրերի հետ: Այդ առումով շատ կարևոր է գլոբալ էթիկայի նորմերի մշակումը գլոբալ հանրության համար, որը թույլ տար նրա անդամներից յուրաքանչյուրին՝ վեր բար-ձրանալ առօրյա անձնական շահերի նեղությունից ու սահմանա-փակությունից և առաջին պլան մղել համամարդկային շահերն ու սկզբունքները:

Արդի հումանիզմի իդեալը համակողմանիորեն զարգացած անհատն է՝ օժտված գիտական, դիալեկտիկական-մատերիալիստական աշխարհայացքով, համամարդկային շահերի գիտակցմամբ, բարոյական մաքրությամբ, հոգևոր հարստությամբ ու ֆիզիկական կատարելությամբ: Այս առումով հատուկ նշանակություն է ձեռք բերում անհատի հումա-նիստական գիտակցության սահմանների ընդլայնումը, մարդկայնության իսկական հնարավորությունների բացահայտումն այն հաշվով, որ նա արիություն ունենա իր վրա վերցնելու պատասխանատվությունն աշխարհի ճակատագրի, համայն մարդկության ճակատագրի համար, հասնի մարդկայնության այնպիսի հասուն մակարդակի, երբ համայն մարդկության հիմնախնդիրներն ու հոգսերը դառնում են անձնական հիմնախնդիրներ ու հոգսեր:

Հումանիստական նոր պարադիգմայի մյուս կարևոր առանձնա-հատկությունը տարբեր ազգերի ու ժողովուրդների, մշակույթների ու քաղաքակրթությունների փոխհարաբերությունների նոր ըմբռնումն է, նրանց շփումների ու համագործակցության նկատմամբ ոչ ավանդական մոտեցումը, դրանց դերի ու նշանակության նորովի իմաստավորումը:

Ազգային, մշակութային մեկուսացման ձգտումը, ուրիշ մշա-կույթների նկատմամբ նիհիլիստական, մերժողական վերաբերմունքը, առավել ևս՝ անհանդուրժողականությունը հակասում են նոր ժամա-նակների ոգուն, մշակույթների զարգացմանը: Ոչ մի մշակույթ իր ինքնատիպությամբ ու արժեքավորությամբ հանդերձ՝ ինքնաբավ ու կատարյալ չէ, չի կարող մեկուսանալ ու պարփակվել սեփական պատյանի մեջ և իր սեփական նեղ սահմաններից դուրս գալու, մյուս մշակույթների հետ շփման ու համագործակցության կարիք է զգում: Հենց մյուս մշակույթների հետ ակտիվ շփման ու համագործակցության միջոցով կարող է բացահայտվել այն ստեղծագործական ներուժը, որն իր մեջ պարունակում է տվյալ մշակույթը:

Այս համատեքստում ուշագրավ է հումանիզմի և գլոբալացման փոխհարաբերության հարցը: Գլոբալացումը բարդ ֆենոմեն է՝ իրեն հատուկ բազմաբնույթ դրսևորումներով: Որպես հոգևոր-բարոյական իմաստից զուրկ տոտալ երևույթ, գլոբալացումը շատ հաճախ իր ուղին հարթում է որպես բիրտ, կույր ու անդեմ սոցիալական տարերք՝ զուրկ հումանիստական բովանդակությունից, անհաղորդ ու անտարբեր մարդկային կյանքի հոգևոր կողմի, ոչ միայն առանձին անհատների, այլև ամբողջ ազգերի ու ժողովուրդների ճակատագրի նկատմամբ:

Ուստի չափազանց կարևոր է՝ թույլ չտալ, որպեսզի գլոբալացումն իր հետ բերի սերունդների հոգևոր կյանքի աղքատացում, մշակույթների և քաղաքակրթությունների համահարթեցում, նրանց ունիֆիկացում, ազգային (էթնիկական) և կրոնական (կոնֆեսիոնալ) առանձնահատկությունների ու ինքնատիպության ջնջում, լեզվամշակութային բազմազանության վերացում:

Այս համատեքստում բացառիկ դեր է վերապահված հումանիզմի գաղափարներին, որոնք ընդունակ են հուսալի կամուրջներ գցել սոցիալական, մշակութային, էթնիկական ու կրոնադավանաբանական տարանջատիչ գծերի վրա՝ դրանով իսկ իրենց նպաստը բերելով տարբեր երկրների համագործակցությանն ու ժողովուրդների բարօրությանը:

Միայն հումանիզմի կենարար գաղափարներով, փոխըմբռնման ու համերաշխության ընդհանուր ոգով տոգորված քաղաքակրթությունների ու մշակույթների, արդի հասարակության բոլոր առողջ ու կենսունակ ուժերի համատեղ ջանքերով է հնարավոր պատենշ դնել գլոբալացման նեգատիվ դրսևորումների, նրա «կողմնակի արդյունքների» դեմ, գլոբալացման կույր ու տարերային պրոցեսներն ուղղել ռացիոնալ ու արգասավոր հուն:

Դա, անշուշտ, կարող է իր նպաստը բերել նաև 2000 թվականի «Հազարամյակի հռչակագրում» ձևակերպված զարգացման նպատակների իրականացմանը, մի փաստաթուղթ, որը բոլոր երկրներն ընդունել են որպես կոդմուրոշիչ՝ 21-րդ դարում ավելի ներդաշնակ ու կատարյալ աշխարհի կառուցման համար:

Նոր պայմաններում, երբ մարդկությունը հայտնվել է տեխնաձին քաղաքակրթության արժեքների վերաիմաստավորման ու դրանք նորերով փոխարինելու անհրաժեշտության առջև, և մարդու համար գլխավորը դառնում է նրա վերափոխիչ գործունեությունը, աշխարհի նկատմամբ նրա արժեքային նոր վերաբերմունքը՝ խիստ արդիական է դառնում նաև բոնության, որպես սոցիալական ուժի նկատմամբ վերաբերմունքի հարցը՝ բոնության մերժման ու հասարակական կյանքից նրա դուրսաղման առումով:

Բռնության մերժման հիմքում ընկած է այն կոնցեպտուալ սկզբունքը, համաձայն որի մարդկային հոգին հանդիսանում է բարու և չարի բախումների ասպարեզ: Այդ պատճառով մարդու մեջ շեշտը դնել միայն չարության վրա, նշանակում է հանիրավի նսեմացնել նրան: Մյուս կողմից՝ ոչ օբյեկտիվ ու միակողմանի կլինեք մարդուն անսահման բարություն և միայն բարություն վերագրելը: Այս հակասության լուծումը տալիս է մարդու բարոյական ամբիվալենտության⁷ ընդունումը, որի դեպքում շեշտը դրվում է մարդու մեջ եղած բարի սկզբունքի, դրա մշակման ու խորացման վրա:

Բռնության մերժման ու սոցիալական կյանքից նրա դուրսմղման սկզբունքը դառնում է հումանիստական նոր ուսմունքի հենասյուներից մեկը, իսկ հումանիստական իդեալի ճակատագիրը կապվում է ճնշման ու գերիշխման գաղափարից հրաժարվելու և ազատության ընդունման հետ: Բռնությունը, անհանդուրժողականությունն ու առճակատումը հուսալի խորհրդատուներ չեն, նրանք չեն կարող հանգեցնել ճիշտ ու արդարացի լուծումների: Նման եղանակով կոնֆլիկտը չի լուծվում, այլ ժամանակավորապես «հարթվում» է ուժի դիրքերից, որպեսզի այլ պահի նորից ասպարեզ գա՝ բայց արդեն ավելի բարդացած ու սրված, ավելի ծանր ու վտանգավոր հետևանքներով հղի:

Իսկ դա նշանակում է, որ սոցիալական կոնֆլիկտներից ու կոլիզիաներից ելքը պետք է փնտրել ոչ թե բռնության, բիրտ ուժի կիրառման, այլ հանդուրժողականության ու կոմպրոմիսների մեջ: Եվ Յ.Հաբերմասի այն դրույթը, որ եթե 19-20-րդ դարերում մարդը դրսևորել է իրեն որպես անհաշտ, առճակատող, ապա մեր օրերում նա պիտի դառնա համաձայնություն փնտրող, կոմպրոմիսի ձգտող էակ: Եվ նրա վերաբերմունքը այդպիսին պետք է լինի ոչ միայն առանձին վերցրած մարդկանց, այլև համայն մարդկության, բոլոր մշակույթների ու քաղաքակրթությունների նկատմամբ, քանզի տարբեր մշակույթների ու քաղաքակրթությունների միջև երկխոսությունը մեր ժամանակներում ավելի ու ավելի է դառնում ինչպես նրանց խաղաղ գոյակցության, այնպես էլ փոխըմբռնման ու համագործակցության, փոխադարձ ներթափանցման ու հարստացման անփոխարինելի միջոց:

Այս պահանջների ոգով պետք է ընթանա նաև հակադիր ու

⁷ Ամբիվալենտություն (լատ.՝ ambo - երկուսը և valentia - ուժ) - ապրումների երկակիություն, երբ միևնույն առարկան մարդու մոտ միաժամանակ առաջացնում է հակադիր զգացմունքներ, օրինակ՝ սեր ևատելություն, հաճույք և տհաճություն. Ընդ որում զգացմունքներից մեկը երբեմն ենթարկվում է դուրսմղման և սրողվում է մյուսով (տե՛ս Советский энциклопедический словарь, М., “Советская энциклопедия”, 1984, стр. 48):

իրարամերժ գաղափարների պայքարը:

Արդի դարաշրջանում ծավալվող գլոբալ պրոցեսների առումով չափազանց կարևոր է նաև հումանիզմի դիրքերից ինտեգրման այն միտումների վերլուծությունը, որոնք տանում են դեպի նոր, մարդասիրության ու ժողովրդավարության սկզբունքների վրա հիմնված հասարակության, սկզբունքորեն նոր քաղաքակրթության ձևավորումը, որը դարեր ու հազարամյակներ շարունակ եղել է բոլոր նշանավոր փիլիսոփայական ուղղությունների ու հոսանքների երազանքը:

Եվ պատահական չէ, որ վերլուծելով նոր քաղաքակրթության ձևավորման հետ կապված պրոցեսները, ակադեմիկոս Ի.Տ.Ֆրոլովն այն համոզմունքն է հայտնում, որ հասարակական զարգացման նոր պայմաններում գնալով ավելի մեծ նշանակություն ձեռք կբերեն ոչ այնքան տեխնոլոգիական կամ աշխարհաքաղաքական, որքան անտրոպոլոգիական, մարդաբանական գործոնները՝ մարդու, մշակույթի, կրթության ու բարոյականության զարգացումը: Այստեղից էլ՝ հումանիստական փիլիսոփայության գլխավոր կոչումը՝ իր ամբողջ ստեղծագործական ներուժն ուղղել մարդու «վեհացմանը», նրա միջառարկայական, կոմպլեքսային ճանաչմանը գիտության ու արվեստի միջոցներով՝ այս առումով արմատապես փոխելով առաջնահերթությունների ամբողջ համակարգը մշակույթի ու սոցիալական ոլորտներում: Ոչ թե տարբեր փիլիսոփայական ուղղությունների, ուսմունքների ու դպրոցների արհեստական, մեխանիկական համախմբումը, «միասնական մետահամակարգի» մեջ դրանց միաձուլումը, այլ գաղափարական անհանդուրժողականությունն ու առճակատումները հաղթահարող նրանց ընդհանուր հումանիստական ուղղվածությունն ու մարդասիրական պաթոսը կարող են հանգեցնել յուրահատուկ համամարդկային փիլիսոփայության, «փիլիսոփայական էկումենիզմի» ձևավորմանը: Եվ որպես դրա արդյունք՝ կիրականանա մարդկային կեցության ներքին խորհուրդը՝ կձևավորվի համայն մարդկության հոգևոր միասնությունը, որի մեջ ձեռք կբերվի և հումանիստական փիլիսոփայության բարձրագույն սինթեզը:

Սակայն այդ նոր ուսմունքը, լինելով պատմական զարգացման ընթացքում սերունդների կողմից մշակված մարդասիրական ավանդույթների ու համամարդկային արժեքների կրողը և պատմական նոր պայմաններում, սոցիալ-քաղաքական, մտավոր ու մշակութային նոր միջավայրում դրանց զարգացնողն ու հարստացնողը՝ միայն այն դեպքում կարող է հաջողությամբ իրականացնել իր պատմական առաքելությունը՝ ապահովել մարդկության առջև ծառացած սուր ու բախտորոշ խնդիրների լուծումը, անկոնֆլիկտ, խաղաղ ու ներդաշնակ աշխարհի ստեղծումը, եթե նա ամուր կերպով հենվի ճշմարիտ հումանիստական արժեքների, բանականության, արդարության ու սիրո

սկզբունքների վրա:

Հումանիզմին է վիճակված նաև աշխարհի՝ որպես մարդկային քաղաքակրթության ընդհանուր օրրանի մասին անտրոպոցենտրիստական հայացքի հաստատումը, մարդկանց մեջ այն գիտակցության սերմանումը, որ իրենք՝ աշխարհայացքային, էթնիկական, կրոնական, մշակութային և սոցիալ-պատմական զարգացման այլ հանգամանքներով պայմանավորված տարբերություններով ու առանձնահատկություններով հանդերձ՝ պատկանում են մարդկության միասնական ընտանիքին, կրում են համամարդկային միևնույն գաղափարները, արժեքներն ու իդեալները և միմյանց հետ կապված են պատմական ընդհանուր ճակատագրով, որ “Gens una sumus”⁸ և որ “Homo homini deus est”⁹:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածը նվիրված է հումանիստական աշխարհընկալման համատեքստում արդի սոցիալտնտեսական պրոցեսների վերլուծությանը, դրանց և մեր դարաշրջանի կենսական պահանջմունքների, հասարակական առաջադիմության իմանենտ օրինաչափությունների, արդի հումանիզմի գլխավոր սկզբունքների և հիմնարար արժեքների առնչությունների հետազոտությանը: Հոդվածում քննական վերլուծության են ենթարկվում արդի հումանիզմի առավել վտանգավոր հակոտնյաները, նոր դարաշրջանի մարտահրավերներն ու սպառնալիքները:

Հիմնաբառեր. հումանիզմ, արդի սոցիալ-քաղաքական պրոցեսներ, համամարդկային իդեալներ, հումանիզմի հակոտնյաներ, գլոբալացում, բռնության պաշտամունք, մշակույթների համահարթեցում, ազգային ինքնություն:

⁸ «Մենք բոլորս մի ընտանիք ենք»:

⁹ «Մարդը մարդու համար աստված է»:

ГУМАНИЗМ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССОВ

Асатрян Григорий

доктор философских наук, профессор Северного университета

Статья посвящена исследованию вопроса о созвучности современных социально-политических процессов насущным потребностям нашей эпохи, имманентным законам общественного прогресса, основополагающим принципам и базовым ценностям современного гуманизма. В ней подвергаются критическому анализу наиболее опасные антиподы гуманизма – вызовы и угрозы нового тысячелетия.

Ключевые слова: гуманизм, современные социально-политические процессы, общечеловеческие идеалы, антиподы гуманизма, глобализация, культ насилия, нивелировка культур, национальная самобытность.

HUMANISM IN THE CONTEXT OF MODERN SOCIO-POLITICAL PROCESSES

Asatryan Grigory

Doctor of philosophical science, Northern University

The article is devoted to the study of the question of the consonance of modern socio-political processes with the urgent needs of our era, the immanent laws of social progress, the fundamental principles and basic values of modern humanism. It critically analyzes the most dangerous antipodes of humanism - the challenges and threats of the new millennium.

Key words: humanism, modern socio-political processes, universal ideals, antipodes of humanism, globalization, the cult of violence, cultural leveling, national identity

ԽՐԻՍՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՍՈՑԻԱԼ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Վալերի Միրզոյան

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՊՏՀ պրոֆեսոր

valerimirzoyan@yahoo.com

Մկրտիչ Ա. Վանեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայոց հոգևոր և աշխարհիկ պատմության ամենապայծառ դեմքերից է: Հասարակական-քաղաքական երևելի գործիչ, խոհուն ուսուցիչ, եռանդուն հրատարակիչ, նվիրյալ հովվապետ, հայ ժողովրդի և հայ եկեղեցու շահերի անհողորդ պաշտպան՝ թե՛ թուրքական կառավարության սանձազերծած ջարդերից, թե՛ ռուսաստանյան իշխանությունների չդադարող բռնաճնշումներից: Հասարակ մարդկանց սիրով և երախտագիտությամբ շնորհած «Հայոց Հայրիկ» անգուգական պատվանդանն այդ մեծ մարդու կյանքի և գործի լավագույն գնահատականն է¹⁰: Իսկ նրա տեսական ժառանգությունը հիմք է տալիս ասելու, որ Խրիմյան Հայրիկը լայն աշխարհայացքի տեր է եղել, ներհուն վերլուծաբան¹¹. դրա մասին են վկայում ամենից առաջ սոցիալ-փիլիսոփայական բնույթի նրա ընդգրկուն դիտարկումները. դրանք ոչ միայն պատմական արժեք ունեն, այլև այսօր էլ չեն կորցրել իմացական-մեթոդաբանական նշանակությունը:

¹⁰ Խրիմյան Հայրիկի կյանքի և բազմաբնույթ գործունեության, նաև նրան վերաբերող գիտական հրապարակումների համակողմանի վերլուծությունը տե՛ս **Է. Կոստանյան**, Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, 2-րդ հրատ., Եր.: ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008:

¹¹ Դժվար է, թերևս, ավելի խոր ու սպառիչ բնութագրել Խրիմյան Հայրիկ մտածողի երևույթը, քան դա արել է **Ալեքսանդր Շիրվանզադեն**. «Խրիմյանը իր ժամանակից դուրս էր, չեմ ասում վեր կամ վար, այլ դուրս: Նա ուրիշ աշխարհի և ուրիշ շրջանի մարդ էր: Քրիստոսի ժամանակ նա կլիներ մեկը նրա առաքյալներից, Սոկրատի շրջանում նա կլիներ փիլիսոփա» (Ալ. Շիրվանզադե, Խրիմյան Հայրիկ // Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. ութերորդ, Եր. : Հայպետհրատ, 1961, էջ 510):

1. Համակեցության հրամայականը

*Աշխարհս առանց իշխանութեան
չի կառավարուիր:*

Հանրային կյանքի կարգավորման հիմնախնդիրների ամբողջական դիտարկման առաջին իսկ փորձից հարկ է լինում պատասխանելու պետության ծագման, էության և գործառույթների հարցին: Իսկ պատասխանների պակաս չկա՝ Պլատոնից մինչև Ժամանակակից փիլիսոփաները և քաղաքագետները:

Բոլոր դեպքերում ելակետային դրույթը պետության ծագմանն է առնչվում, թեպետ մինչև օրս տեսական սպառնալից բացատրություն դա չի ստացել: Որպես մարդկանց համակեցությունը կարգավորող առանցքային կառույց, քաղաքական իշխանության կազմակերպման բարձրագույն ձև՝ պետությունը ծագել է շուրջ հինգ հազար տարի առաջ, մինչդեռ մարդիկ հարյուր հազարավոր երկար ու ձիգ տարիներ ապրել եւ կառավարվել են մինչպետական՝ ցեղատոհմային կազմակերպվածության պայմաններում: Խրիմյան Հայրիկն այն հեղինակներից է, որ պետական իշխանության ծագումը բացատրում է հանրային կյանքի գործառույթան եւ զարգացման ընդոժին օրինաչափություններից: Իհարկէ, Աստված ստեղծել է մարդուն, նրա տնօրինությանն է հանձնել բովանդակ աշխարհը՝ արդար եւ առաքինի կյանքով ապրելու եւ իր Արարչին փառաբանելու համար: Հիշեցնելով Աստվածաշնչի այս պարզաբանումը՝ Խրիմյանն անում է հետեւյալ լրացումը. «Մական կը յաւելում ասել մանավանդ թէ՝ մարդ մարդուն համար կարգեր է, զի մարդոյն կեանք ընկերական է. մարդն ինքնին առանձին առանձին ոչինչ է, եւ ոչինչ զանազանութիւն չունի վայրենի կենդանիներէն, որոց բնակութիւն՝ լեռներու, խորշերու եւ անտառներու մէջն է»¹²: Հետեւաբար, կամոքն Աստծո՝ մարդու զարգացումը ոչ թէ անկախ է նրա հանրային զարգացումից, այլ դրա ուղղակի արգասիքն է. «Մարդոյն յառաջդիմութիւն՝ իւր ընկերական կեանքէն է.... Մարդոյն ընկերական կեանքէն

¹² Խրիմյան Հայրիկ, Սիրաք եւ Սամուէլ // Երկեր, Եր.: Երևանի համալս. հրատ., 1992, էջ 313:

յառաջ եկաւ աշխարհաշինութիւն. մարդիկ աշխարհիս վերայ տիրապէս տիրեցին եւ տիրապէս կատարեցաւ Աստուծոյ հրամանն»¹³:

Ասվածի լոյսով հասկանալի է դառնում պետական իշխանության ծագման հիմքերին վերաբերյալ Խրիմյանի ելակետային դրույթը, որն ունի փիլիսոփայական նրբագեղ աֆորիզմի ձև. «Մարդիկ հաւասար կը ծնին, անհաւասար կ'ապրին եւ հաւասար կը մեռնին»¹⁴: Մակերեսային մոտեցմամբ՝ այս դրույթը մեկնաբանվել է իբրև ընդվզում մարդկային հասարակության ոչ բանական կառուցվածքի դեմ, մինչդեռ հեղինակի միտքը ճիշտ հակառակն է, այն է՝ մարդկանց միջև անհավասարության հաստատագրումը մեծագործ Արարչի իմաստուն լուծումն է, «աշխարհիս մարդկային ընկերութեան հզօրագոյն կապն անհաւասարութեան օրէնքն է»¹⁵:

Իսկապէս, եթէ ուշադիր դիտենք ոչ միայն մարդուն և մարդկային աշխարհը, հորդորում է ընթերցողին Խրիմյանը, ապա դուրին կհամոզվենք, որ համայն բնությունը, կենդանի և անկենդան աշխարհի ամեն մի մասնիկ աչքի է ընկնում անհավասարության հատկանիշով: Վերջինիս շնորհիվ է, որ ամենուր ապահովվում է ինքնաշարժման և ինքնազարգացման հնարավորությունը. եթէ լիակատար հավասարությունը անշարժություն է, քանզի հավասար մարդիկ միմյանց կարիքը չեն զգում, ապա անհավասարությունը, մի կողմից՝ նրանց միջև փոխադարձ կախվածության կապեր է ստեղծում, մյուս կողմից՝ մղում մրցակցության, պայքարի, առաջադիմության: «Սորա մէջ կ'երեւի Արարչին անհուն զօրութիւն, անհուն իմաստութիւն եւ անհուն հանճար, որ ստեղծեալ իրաց թէ արտաքին ձեւն ու պատկեր եւ թէ ներքին բնական զօրութիւններ, ամենայն ինչ, իրարու անման, զանազան ու անհաւասար, եւ այս անհաւասարութեն մէջ ամենայն ինչ չափով ու կշռով համեմատ կարգադրելով՝ անհաս եւ անհաւասարն Աստուած կը յօրինէ եւ կը վարէ տիեզերք»¹⁶:

Մարդկանց անհավասար վիճակն ինքնին նրանց միջև գոյացնում է իշխելու և հպատակվելու փոխհարաբերություններ, որոնց հիմքում մարդկանց ֆիզիկական և մտավոր տարբերություններն են. «Ոմանք աչքի հետ մտաւոր լոյս ունին՝ ընկերին կ'առաջնորդեն, եւ ոմանց մտքին լոյս

¹³Տեւ. էջ 313 – 314:

¹⁴Տեւ. էջ 322:

¹⁵Տեւ. էջ 323:

¹⁶ Տեւ. էջ 322:

նուազ լինելով՝ կը ստիպուին այլոց ետեւէն երթալ, ոմանք զօրութիւն ստանալով կը տիրեն, եւ ոմանք տկար լինելով կը հպատակին»¹⁷:

Այստեղ Խրիմյանը պատահական չէ երկու օրինակ համադրել. առաջին դեպքում «առաջնորդ – հետևորդ» կապն է, երկրորդ՝ դեպքում՝ «տիրող – հպատակվող»: Նա հստակորեն տարբերում է դրանք, որպէս դեպի ընդհանուր առաջադիմություն մղող բարերար մրցակցություն և որպէս անհավասարության «յոռի ծնունդ»: Անհավասարությունից բխող և շարունակաբար անհավասարություն վերարտադրող մրցակցությունը հանրային կյանքի առաջընթացի շարժիչ ուժն է, մարդկանց նպատակասլաց գործողությունների մղող հիմնական դրդապատճառը: Ավելիին ձգտողներին Խրիմյանն անվանում է «յառաջադիմութեան մրցանակ տանողներ» և մեզ է հրամցնում առաջընթաց զարգացման մի լայն համայնապատկեր. «Թագաւոր կը ձգտի իւր գահն իւր աթոռակիցներէն բարձր դնել, եւ մերթ եւս աշխարհակալել: Իշխանը կը ձգտի իւր իշխանակից ընկերէն յառաջ անցնիլ, զօրապետն կը ձգտի իւր զինակիցներէն աւելի յաղթանակ տանել, հարուստն կը ձգտի իւր հաւասարէն աւելի եւս հարստանալ, ազքատն կը ձգտի իւր թշուառութենէն ազատիլ: Բովանդակ ժողովուրդ կը ձգտի աշխարհիս հրապարակին վերայ մէն մի իւր ընկերէն անցնիլ, կամ հաւասար երթալ եւ կամ եթէ չկարէ առաւելուլ՝ գէթ յետս մնալով չնուազիլ»¹⁸:

Բայց առաջադիմության այս հզոր շարժումն ունի նաև իր ստվերոտ կողմերը, «ամէն լոյս իր խաւարն ունի, ամէն գեղեցիկ իւր տգեղ մասն ունի»¹⁹: Որո՞նք են դրանք՝ նախանձ, բռնություն, հարստահարություն, ամենակուլ ազահություն, «մեծամիտ տիրապետութեան ոգի», զանազան մոլություններ, որ ապականում են հանրության բնականոն կյանքը: Այս ամենը զսպելու համար, ըստ Խրիմյանի, փորձ արվեց օրենսդրություն մտցնելու, և առաջինը Լիկուրգոսն էր, որ դա արեց Սպարտայում: Հետագա բոլոր օրենսդիրներն էլ ձգտել են իշխանության միջոցով, պետության ուժով ապահովագրել հանրային կյանքը անհավասարության նշյալ հոռի հետևանքներից, ուստի և Խրիմյանն ամփոփում է իր միտքը

¹⁷ Տեւ, էջ 329:

¹⁸ Տեւ, էջ 325:

¹⁹ Տեւ, էջ 326:

հետևյալ կերպ՝ «իշխանություն մարդոց անհաւասար կեանքէն, խռովար ոգիէն, տիրողական բուռն ձգտումէն եւ զօրութենէն ծներ է»²⁰:

Այսպիսով, մարդկանց համակեցությանը բնորոշ անհավասարությունը, իր ներքին տրամաբանությամբ, հանգեցնում է ընդհանուր, բոլորի վրա տարածվող իշխանության հաստատման անհրաժեշտությունը. սա փաստորեն «պետության» ըմբռնումն է, թեպետ Խրիմյանը մշտապես գործածում է «երկրի իշխանություն» բնութագրումը:

Արդ, մարդկանց համակեցությունը հնարավոր է միասնական իշխանական կամքին ենթարկվելու շնորհիվ: «Մարդկային ընկերություն բնաւ կարելի չէ որ առանց իշխանութեան, առանց օրինաց, առանց դատաստանի եւ հատուցման այս աշխարհիս վրայ ապրի եւ խաղաղ կեանք վարէ, ինչպէս երկնից թռչուններ եւ լեռներու ազատ երեկայրիներ եւ այլն: Չէ թէ աշխարհիս այլ եւ այլ ազգեր, այլ նոյն իսկ մի ազգ եւ մի համագգի ընտանիք առանց հայրական իշխանութեան հնար չէ կառավարել»²¹:

Ընդհանուր առմամբ, եթե հակիրճ ամփոփենք Խրիմյանի մտքերը մարդկանց համակեցության կարգավորման մեջ իշխանության գործադրման անհրաժեշտության մասին, ապա երեք փաստարկ են առանձնանում:

Նախ՝ Արարչի կամքը. հենց Աստված ինքը մարդուն «տիրող իշխան կարգեց երկրին վերայ», բոլոր կենդանիներին, անգամ մարդուց ավելի ուժեղներին, դրեց նրա իշխանության տակ: Երկրորդ՝ պատմության վկայակոչումը. իրոք, «աշխարհի պատմությունը ցոյց կուտայ, որ իշխանութեան առաջին խանձարուրն ընտանիքն է». հայրը բնական իրավունքով է իշխում, հետո ընտանիքը մեծանում է, ընտանիքները բազմանում են, առաջանում է տանուտերական իշխանություն, փոքր շէները մեծանում են, մեծ բնակավայր դառնում, մեծ իշխանություն է ձևավորվում, տիրում շատ քաղաքների ու գավառների և այլն, մինչև «աշխարհակալութեան ծայրագոյն դիրք»: Երրորդ փաստարկը, որ հանգամանորեն քննեցինք, մարդկանց բնական անհավասարությունն է, մրցակցությունը, «տիրողական բուռն ձգտումն», որոնք պետք սանձահարել պետության ուժով²²:

²⁰ Տե՛ս էջ 329:

²¹ Տե՛ս էջ 331:

²² Տե՛ս անդ, էջ 329 – 333:

Եթե այս երեք հիմնադրույթը զուգահեռենք պետականագիտության սկզբնաղբյուրներին, կնկատենք, որ առաջինը պետության ծագման աստվածաբանական տեսակետն է, հիմնավորված Թովմաս Աքվինացու, իսկ հայ մտքի շրջանակներում՝ Գրիգոր Տաթևացու երկերում: Երկրորդը՝ ընտանիքից եւ ընտանիքում իշխանության ձևավորումը, նահապետական հայեցակարգն է՝ նման Արիստոտելի դատողություններին: Իսկ երրորդը կարելի է դիտարկել որպես «հանրային դաշինքի» հայեցակարգի այն տարբերակը, որ հանդիպում է Թովմաս Հոբսի դրույթներում:

Հավելենք, որ Խրիմյանին հայտնի է համակեցության կարգավորման հարցում «ծայրահեղ ազատամիտների» դիրքորոշումը, ըստ որի «եթե մարդկային ընկերությունն ազատ անիշխան ապրեր, եւ իշխանութեան ծանրակիր լուծ չը կրեր իւր պարանոցին վերայ, մարդն ինքնիշխան լինէր, եւ չը պարտէր երբեք տուրք, հարկ, զինուոր, եւ այլ բազմապատիկ օրինական եւ ապօրինի բռնի պահանջներ վճարել»²³: Հակադրվելով անիշխանականության գաղափարին՝ նա խստացնում է մարդու բնույթի հոռի լինելու ելակետը. եթե պետությունը վերանա, ապա կվերանա քաղաքակրթությունը: Օրինակ՝ Ֆրանսիայում, «երբ անիշխանութիւն կը տիրէր՝ այդ կրթեալ եւ ուսեալ ժողովուրդը, խուժան կը դառնար եւ ամէն բան կը տապալէր, թէւ այն բան՝ իւր հայրենեաց փառք ու պարծանք լինէր»: Ուստի՝ չի կարելի մարդուն դուրս հանել «իշխանութեան եւ օրինաց շրջափակ վանդակէն». հնարավոր է առյուծին անգամ հանդարտեցնել, բայց «մարդոյն կատաղութեան երբեք յագուրդ չիկայ»²⁴:

Այսկերպ՝ ամփոփման մեջ արձանագրում ենք երեք հայեցակարգի հակիրճ համադրումը. «Ուրեմն իշխանութիւն եւ օրէնք վերին տեսչութեան յաւիտենական կարգադրութիւնն է, որպէս զի մարդիկ երկիւղածութեամբ եւ բանավարութեամբ ապրին ընկերական կեանքին մէջ»²⁵: Իսկ թե որքանով են մարդիկ իսկապես բանավարությամբ կարգավորում իրենց ընկերական կյանքը, Խրիմյան Հայրիկը դիտարկում է համակեցության կազմակերպման երկու սուբյեկտների՝ պետության (իշխանության) եւ ժողովրդի փոխադարձ իրավունքների եւ պարտականությունների հարաբերակցության օրինակով:

²³ Տե՛ս, էջ 330 – 331:

²⁴ Տե՛ս, էջ 332:

²⁵ Տե՛ս, էջ 333:

2. «Իշխանություն – ժողովուրդ» փոխհարաբերության կարգավորումը

Իշխանության ծագման պարզաբանմանը հետեւում է հանրային կյանքի կարգավորման երկու կողմերի՝ պետության (իշխանության) եւ ժողովրդի փոխադարձ իրավունքների եւ պարտականությունների հանգամանալից քննարկումը²⁶:

Արդ, պետության առաջին պարտականությունն է ըմբռնել սեփական գոյության և գործառության երկկողմանի պայմանավորվածությունը. իհարկե, իշխանությունը տրված է «աստուածապետական զորութենէն իբրեւ ավանդ», բայց իշխանավորներն իրենք հաշվետու են ոչ միայն Աստծո, այլև ժողովրդի առաջ, եթե իշխանությունը «սահմանադրապէս ընտրուած է»:

Ահա թե ինչու իշխանության «մեծ ու նուիրական պարտիքն» է ժողովրդի բարօրության մասին հոգատարությունը: Դա իր գոյության հիմքն է. չէ՞ որ «իշխանութեան արժողը՝ ժողովուրդի պատուանդանին վերայ հաստատուած է, եւ երբ ժողովուրդ կործանի՝ անշուշտ իշխանութիւնն եւս կանգուն չի մնար»:

Պետությունը պետք է սահմանի և պահանջի հարկեր՝ «չափով եւ արդարությամբ». եթե ծանր լինեն, ապա տուժելու է ոչ միայն ժողովուրդը, այլև իշխանությունը: Սա անխուսափելիորեն բխում է պետության և ժողովրդի երկմիասնությունից. «ժողովուրդն իբրև գործող անդամ կը համարուի կառավարութեան. երբ անդամներ ուժաթափին՝ գլուխն եւս նրա հետ կ'ուժաթափի»:

Օրենքների հավասար գործադրումը նույնպես իշխանության «ամենամեծ» պարտքն է. հարկ է, որ «երկրին օրէնք անաչառ ճշդութեամբ հաւասարապէս գործադրէ տկարին եւ զօրաւորին վերայ, իշխանին եւ ժողովուրդին վերայ»: Կարևոր է հատկապես պաշտոնավորների օրինազանցությունը զսպելը՝ «չը թողուլ, որ զօրաւորներ հետտեն օրէնքին դէմը», օրինականության պահպանմանը կոչվածների օրինամերժության դեմն առնելը՝ «չը թողուլ....եւ նոքա, որ կարգեալ են օրէնք պաշտպանելու՝ նոքա զեղծանին օրինաց մէջ եւ առ ոչինչ համարին զայն»: Այս պարագայում արդեն իշխանությունը պիտի հանդես գա որպէս «օրինաց վրէժ-

²⁶ Տե՛ս անդ, էջ 333 – 336:

խնդիր ու նախանձաւոր», պատժի օրինազանցներին, «առաւել վարիչ պաշտօնեաներուն»: Եվ զարմանալիորեն պարզ մի եզրակացություն, անողորձ օրինաչափության սահմանում՝ եթե իշխանությունը չվերացնի ապօրինությունները, ապա դրանք կվերացնեն իրեն՝ իշխանությանը:

Պետության բարոյադաստիարակչական գործառույթը ևս ուշադրության կենտրոնում է. իշխանությունը պետք է լինի «առաքինութեան պաշտպան», սանձահարի մոլությունները, ժողովրդին ապականող օտարամուտ գեղծումները: Իհարկէ, եկեղեցին, քարոզն ու խրատն իրենց տեղն ու դերն ունեն, սակայն դրանց հարկ է հաւելել իշխանության ուժը, «սաստն եւ սուր», «ձեռնհաս կը լինի գեղծումներ քաղաքային օրէնքով բառնալ»:

Խրիմյանը մեծ տեղ տեղ է հատկացնում պետության տնտեսական գործառույթին. հանրային կյանքի կարգավորման, անհատի բարեկեցության, ազգի առաջադիմության մասին նրա դատողություններում կարմիր թելի պէս անցնում է «տնտեսելու» կարևորությունը, հայրենի պաշարները օրենսդրորեն պաշտպանելու և խելամտորեն տնօրինելու անհրաժեշտությունը: Ահա վասիկ մի ձևակերպում, որի արտահայտչականությունը միահյուսված է գիտական հստակությանը. «Իշխանութեան պարտիքն է մեծ իմաստութեամբ տնտեսել երկիրը. չքողով, որ իւր հարստութեան գետերը երթան թափին օտար ծովերու մէջ, ի վերջոյ երկրին ջուրը ցամքի, դառնայ ծարաւ մի անապատ, երկրին հարստութեան գետեր երկրին մէջ պահելու համար՝ պետք է զայն շրջապատել օրէնքով եւ այն միջոցներով, զոր քաղաքային տնտեսութիւն կ'ուսուցանէ»²⁷:

Եվ անգամ հաջորդ՝ խաղաղապահական գործառույթը՝ «խաղաղութիւն սիրել, խաղաղութեամբ կառավարել», Հայրիկը քննարկում է՝ կոչ անելով չմոռանալ «նախատեսութիւնը», հիշել նաև, որ «շատ բարի է եւ երկրին շահ, թէ մեծ եւ թէ փոքր զոհողութեամբ խաղաղութիւն հաստատել քան թէ պատերազմով երկրաւեր լինել»:

Վերջապէս՝ կրթադաստիարակչական գործառույթը. «Իշխանութեան առաջին եւ վերջին մեծ պարտիքն է լոյս, գիտութիւն եւ կրթութիւն տարածել ընդհանուր երկրին մէջ»: Միավորում են իշխանավորները, թէ տգետ ժողովրդին ավելի դյուրին է կառավարել. այդկերպ իշխանությունը իրեն է կործանում. «Նոյն ժողովուրդի թաղուած գերեզմանին մէջ կը թաղուի իշխանութիւն, եթէ ջանայ նախ ժողովուրդը թշուառութեան

²⁷Տե՛ս, էջ 334 – 335:

գերեզմանին մէջ թաղել, եւ բռնութեան ծանր կափարիչով փակել նորա բերանը»²⁸:

Այս թվարկմանը հետևում է ժողովրդի պարտականությունների քննարկումը, ընդ որում բացառիկ հաջող է բնորոշված կողմերի ներքին պայմանավորվածությունը. «Ինչ որ իշխանութեան պարտիքն էր, այն է ահաւասիկ ժողովրդին իրաւունք, եւ ինչ որ իշխանութեան համար իրաւունք է, այն է տիրապէս ժողովրդին պարտիք»²⁹:

Իշխանությանը պատվելու և հնազանդվելու պարտականությունը թելադրվում է, ամենից առաջ, հավատքով: «Քրիստոս եւ քրիստոնէական կրօնի ուսուցիչներ առ հասարակ կը պատուիրեն ճանչնալ իշխանութիւնը, պատուել, հնազանդիլ, երկնչել. եւ տալ կայսերին՝ կայսեր եւ այլն»³⁰: Խրիմյանի մեկնաբանությամբ չի պահանջվում կույր հնազանդություն, ամեն իշխանության անվերապահ ենթարկում: Նա նշում է, ժամանակակից եզրաբանությամբ ասված, իշխանության օրինականության աղբյուրը: Ինչպէս գիտենք, օրինական է համարվում, ըստ Մաքս Վեբերից եկող ավանդույթի, այն իշխանությունը, որն ընդունում են իշխալները և պատրաստ են կամովին ենթարկվելու: Չպետք է զարմանալ, որ հանդիպում ենք իշխանության և պետության ծագման աստվածաբանական հայեցակարգին՝ խրիմյանական տպավորիչ ոճով մատուցված. «Ժողովուրդին առաջին պարտիքն է ճանչնալ եւ հավատալ, թէ իշխանութեան գավազանը երկնքէն դէպ ի երկիր ձգուէր է. նորա վերին ծայրը տիեզերքը վարող պետական աթոռին կցուած է, եւ միւս վարի ծայրը աշխարհիս վերայ հաստատուած է»³¹:

Ժողովրդի պարտականությունն է օրենսդրության իմացությունը. «ճանչնալ նաև երկրին ընդհանուր օրէնքները, քաղաքային օրէնքներ, դատաստանի օրէնքներ, տրոց եւ հարկի օրէնքներ, կալուածական օրէնքներ եւ այլն»: Իսկ թէ ինչո՞ւ, տրվում է երկու պատասխան: Մեկը բխում է ողջախոհությունից՝ սեփական իրավունքները պաշտպանելու, պաշտոնավորների իշխանազանցության դեմն առնելու համար. «որպէս զի օրինավորներ ժողովուրդի անգիտութեան եւ ապշութեան համար չը համարձակին նոյն իսկ օրէնքով հարստահարել, որոնց օրինակ բազում

²⁸Տե՛ս, էջ 336:

²⁹Տե՛ս, էջ 337:

³⁰Տե՛ս, էջ 338:

³¹Տե՛ս, էջ 337:

անգամ եւ բազում տեղ կը տեսնամք աշխարհին մէջ»: Խրիմյան Հայրիկի մյուս պատասխանը մեզ վերադարձնում է «իշխանություն – հասարակություն» փոխհարաբերությանը. ինչպե՞ս պիտի դա կարգավորվի, եթե իշխանավորները կամայական վարվեն, կամ էլ քաղաքացիները չենթարկվեն իշխանավորներին: Այլ կերպ ասած՝ որտե՞ղ է ավարտվում մի կողմի պարտքը և սկսվում՝ մյուսի իրավունքը: Ներդաշնակ փոխհարաբերությունների ապահովման լավագույն եղանակը երկուստեք օրենքներին ենթարկվելն է, քանի որ ամեն կողմի «պարտիք եւ իրաւունք այս օրենքներէն կ'որոշին, եւ օրենքն է որ կը չափէ եւ կը կշռէ ժողովուրդին եւ իշխանութեան իրաւունք եւ պարտիք»³²: Սա է, իրոք, իրավական պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների կարգավորման հիմնարար սկզբունքը:

Նվազ արդիական չէ հետևյալ դատողությունը. «իշխանություն – ժողովուրդ» գույզի մեկ կողմը մյուսին պարտքուպահանջ կարող է ներկայացնել, եթե ինքն իր սեփական պարտականություններն անթերի է կատարում: Ահավասիկ մի ձևակերպում, որ կարող է համարվել մարդկանց համակեցության կառավարման իդեալական տիպար. «Երբ պետական աթոռի վերայ նստող թագաւոր արդարութեամբ կը գործէ, իշխանն՝ իրաւունքով կ'իշխէ, դատաւորն օրենքով կը դատի, ժողովուրդն՝ օրինաց կը հնազանդի»: Եվ բնական է, որ կառավարողի և կառավարվողի համապատասխանության հիմնադադափարը առարկայացված է քահանայի և հավատացյալ ժողովրդի վարքագծով. «Արդարութիւն կը գործեն ու կը բարձրանան, երբ քահանան ու ժողովուրդ կը կատարեն եկեղեցւոյ օրինաց պարտքերը: Քահանան պաշտօնասէր կը լինի, ժողովրդասէր կը լինի. եւ գիտութիւն չի մերժեր, տեսուչ հովին ու հօտ կը ճանչնան զիրար. միւսն անձնադիր լինի, արթնութեամբ հսկէ ու հովուէ. եւ միւսն կամակար լսէ նորա ձայնին»³³: Սրանից ածանցյալ է մեկ այլ ըմբռնում. եթե մի կողմը չի կատարում պարտականությունները, դրանով ոտնահարում է մյուսի իրավունքները: Ուրեմն՝ իշխանությունը կարող է քաղաքացիներից պահանջել օրինապահ վարք, եթե ինքն է այդպես վարվում, ժողովուրդը՝ իշխանական մարմինների պարտականությունների կատարում, եթե ինքն է իրենը կատարում:

³² Տե՛ս, էջ 338:

³³ Տե՛ս, էջ 395:

«Իշխանություն – ժողովուրդ» կապի լույսով քննության են առնվում նաև կողմերի «գեղծումները»՝ պարտականությունները պատշաճ չկատարելը: «Երկրին իշխանութիւնը կը գեղծանի, եթէ այդ պարտիքներ չկատարելով ընդհակառակն վարի, եթէ թողու օրինաց արդարութիւն եւ միայն բռնի եւ սրով իշխէ»³⁴: Ժողովուրդն է գեղծում, երբ «ժողովուրդի խղճի գիտակցութեան խայթ իսպառ կը բթանայ», «կ'ստահակի ժողովուրդ, երկրին եւ ազգին օրէնքները հնազանդութեամբ չի յարգեր, կը հետսէ եւ անիշխան վարիլ կ'ուզէ»: Զեղծումները կարող են հանգեցնել համակարգային խաթարման. «երբ ազգի եւ երկրի կառավարութեան անձնիր կարգեր գերիվայր լինելով կը շփոթին», «տէրն իբրեւ ծառայ եւ ծառան իբրեւ տէր», «երբ անարգն իբրեւ պատուական կը յարգուի եւ պատուական կ'անարգուի, երբ տգէտք ու խաբէբայք կը տիրեն, ժողովուրդի հաւատարիմներ կը մերժուին»³⁵: Թեպետ մեղքը մեկինն է, վնասը դարձյալ երկկողմանի է. «Զի երկրի վարիչներ կը գործեն մեղք, երկիր եւ ժողովուրդ կը տուժէ եւ կը կործանէ..., առաջնորդներ կը խոտորին եւ ժողովուրդ մոլորելով կը հետնի»³⁶:

Առավել ևս պարտավորեցնող է իշխանության դերը այդ վարիչների առաջխաղացման հարցում. իշխանությունը խաթարում է իրերի բնականոն վիճակը, երբ պայմաններ է ստեղծում, որ անարժաններն ու տգետները կառավարեն արժանավորներին և գիտուններին: «Իշխանութիւն կեղծանի իւր վարչութեան մէջ, երբ անընտրող կը լինի, արժանաւորին եւ անարժանին յարգ մի կշռով կը չափէ. մերթ եւս պատիւ եւ բարձ կ'ընծայէ նմա, որ երկրին շինութեան հիման մի քար չէ դրեր. կը թողու լաւն ու կարող, եւ ժողովուրդին կառավար կը դնէ այնպիսիներ, որոց միտքը թափուեր է կառավարութեան ուսմունքէն եւ օրէնքէն, որք առաւել կարօտ են կառավարուելու քան թէ կառավարելու»³⁷: Իսկ ո՞րն է ելքը գեղծումների պարագայում: Եթե Ղազար Փարպեցին, ճիշտ նույն հարցադրմանն ի պատասխան, նշում էր պարսիկ տերերի կառավարչական հոռի վարքագիծը³⁸, ապա Խրիմյանի եզրակացություններն ավելի վերացարկված են. չկան ուղղակի աղերսներ թուրք կամ ռուս տերերի

³⁴Տե՛ս, էջ 336:

³⁵Տե՛ս, էջ 392 – 393:

³⁶Տե՛ս, էջ 394:

³⁷Տե՛ս, էջ 337:

³⁸Տե՛ս **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Եր.: Երևանի համալս. հրատ., 1982, էջ 419 – 423:

քաղաքականության հետ: Առաջարկված է միակ քաղաքակիրթ լուծումը՝ իշխանափոխություն. «Երբ իշխանութիւն մի իւր իրաւունք ժողովուրդէն լիովին կ'ստանայ եւ առ ժողովուրդն ունեցած պարտիքներ կը մոռնայ, այլ եւս ժողովուրդ ինչ միջոցաւ կարող է այդ անվճար եւ մոռացեալ իրաւունքը ձեռք բերել»³⁹:

Ժողովրդավարության ուղնուծուծը սա է. եթե ժողովուրդը ընդունում է իշխանությանը, ենթարկվում, ապա կողմերի փոխհարաբերությունները բնականոն են, իրավունքները և պարտականությունները՝ հավասարակշռված: Աստիճանաբար կուտակվում են զեղծումներ, իշխանությունը զրկվում է օրինականությունից (կամ՝ ժողովուրդն է այդպես համարում), կատարվում է իշխանափոխություն: Այդպես վերարտադրվում է հանրային բնականոն կյանքը քանի պահպանվում է Խրիմյան Հայրիկի ձևակերպած ուղղորդող սկզբունքը՝ մի կողմի իրավունքը մյուսի պարտականությունն է, և եթե մի կողմը ցանկանում է ունենալ իրավունքներ, պիտի անշեղորեն կատարի պարտականությունները:

3. Հայոց ընտանեվարության սկզբունքները

Հայ ընտանիքի թեման խորհրդածությունների մի ասպարեզ է, որ մեր գեղարվեստական գրականության մեջ վատ չի արտացոլված. հավելենք դյուցազներգությունը, առածանին, հեքիաթները, առակները, ավանդապատումը: Մինչդեռ գիտական իմացությունը սահմանափակվում է առավելապես ազգագրական ուսումնասիրություններով: Այնպես որ՝ Խրիմյանի 1876 թվականին գրված «Դրախտի ընտանիք» գիրքը մեզանում ընտանիքի կառավարման՝ ընտանեվարության հիմնարար սկզբունքների ձևակերպման անդրանիկ փորձն է: Ինքն էլ է տարակուսում, թե ինչու են պատմիչները շրջանցել ընտանեկան կյանքը՝ նկարագրել լոկ պատերազմներ, քաջագործություններ, աղետներ և այլն⁴⁰: Ընդ որում «Դրախտի ընտանիքը» բնավ էլ սոսկ կենսափորձից բխող խրատների հավաքածու չէ. հեղինակի մոտեցումը համահանրային (սո-

³⁹ Խրիմյան Հայրիկ, Միրաք եւ Սամուէլ, էջ 336:

⁴⁰ Տե՛ս Խրիմյան Հայրիկ, Դրախտի ընտանիք // Երկեր, Եր.: Երևանի համալս. հրատ., 1992, էջ 198 – 199:

ցիետալ) է. հետազոտության օբյեկտը դիտվում է հանրային կյանքի մյուս ասպարեզների հետ կապերի և միջնորդավորումների մեջ:

Աստվածաշնչյան մի իմաստություն այլափոխելով՝ Խրիմյան Հայրիկը ձևակերպում է իր հավատո հանգանակը. «Ազգն ընտանեկան արդարութեամբ կը բարձրանայ եւ ընտանեկան մեղքով կը նուագի»⁴¹: Այս եզրակացությամբ նա ավարտում է բավական ծավալուն աշխատությունը, որի գաղափարները համառոտակի հետևյալն են: Մարդը, ազգը, ժողովուրդը ապրուստով չեն սահմանափակվում, այլև ապրում են բարոյականությամբ, հոգևոր կյանքով, երջանկության ձգտումով, իսկ այդ ամենի օրրանը ընտանիքն է: «Ժողովուրդը եթէ կը յառաջդիմէ՝ իւր առաջին քայլը ընտանեաց սրահէն կ'առնու, եթէ կը լուսաւորի, իւր լոյսը ընտանեկան ճրագէն է, եթէ կը միանայ, իւր ոգին եւ կապն ընտանիքն է, եթէ կը զօրանայ իւր ուժ եւ բազուկն ընտանիքն է, եթէ կը հարստանայ, իւր գանձարան եւ գանձապետն ընտանիքն է, եթէ իւր տուն եւ սեղան բարելից եւ առատ է, արդիւնաբեր անդաստանը ընտանիքն է,... եթէ իւր գաւակները բարեկիրթ քաղաքացի պատրաստել կ'ուզէ, իւր բարեկրթութեան առաջին համալսարան ընտանիքն է»⁴²: Իսկ բուն ընտանեկան կյանքի բարգավաճման հիմքը, «լոյս եւ առաջնորդ» երեք գործոն են՝ ուսումը, դաստիարակությունը եւ խելամիտ տնտեսավարումը: Գիրքն անվանելով «յորդորական ճառ»՝ Խրիմյանն ավարտում է առաջաբանը դրանց հիշեցումով՝ «լուսով հաց գտէք, դաստիարակութեամբ բարի ընտանիք կազմեցէք, իսկ իմաստուն տնտեսութեամբ հոգացէք միանգամայն ձեր ներկան եւ ապագան»⁴³:

Ընտանիքի այս՝ համակարգաստեղծ գործառույթի արձանագրումից պիտի, բնականաբար, բխեր հաջորդ միտքը, այն է՝ հանրային բազում խաթարումները, վերջիվերջո, չկարգավորված ընտանեկան կյանքից են ծագում. «Ժողովուրդ եթէ կը զեղծանի՝ ներքին իւր զեղծման սկզբնաւորութիւնը ընտանիքէն է, եթէ բարոյական կենդանի կեանք չունի՝ մեռելութիւն ընտանիքէն է. եթէ դէպի կորուստ կը դիմէ, իր կորստեան ճամբայ բացող ընտանիքն է..., եթէ աշխարհիս կեանքի ճանապարհին մեջ ուղղութիւն չունի, յոռութիւն ընտանիքէն է. եթէ Եւրո-

⁴¹Տե՛ս, էջ 306:

⁴²Տե՛ս, էջ 207:

⁴³Տե՛ս, էջ 185:

պիոյ կախարդիչ նորասիրութիւնք զինքը պիտի կողոպտեն անխնայ, թող զգաստ լինի եւ տեսնայ որ մեծ կողոպտիչ ձեռք իր ընտանիքն է»⁴⁴:

Հասկանալի է, ուրեմն, թե որքան մեծ պիտի լինի համազգային, համապետական ուշադրությունը ընտանիքի խնդիրների հանդեպ: Ներընտանեկան բարքերը, արժեքները, «այր – կին», «ավագ – կրտսեր» փոխհարաբերությունները կարգավորող նորմերը պայմանավորում են տարբեր իրավիճակներում մարդկանց դերակատարումները, այդ կերպ հանգեցնում Խրիմյանի նշած կա՛մ բարեբեր արգասիքի, կա՛մ չարաբեր հետևանքների: Ինչպե՛ս է կազմավորվում և կառավարվում հայ ընտանիքը, ընտանեկարության ի՞նչ սկզբունքներ, ի՞նչ խնդիրներ կան. Խրիմյան Հայրիկի շատ լուծումներ գործադրելի են 21-րդ դարի հայ ընտանիքի կառավարման համար:

«Տուն եւ ընտանիք մի փոքրիկ թագաւորութեան երկիր ու սահման է. որոյ նահապետական աթոռին վերայ կը նստին ծնողք. հայր իբրև թագաւոր, եւ մայրն իբրեւ թագուհի. եւ կը կառավարեն հպատակ ընտանիքը»: Եվ ինչպես կառավարման ամեն տեսակ, այստեղ էլ կան որոշակի օրինաչափություններ, իշխանական ազդեցության լծակներ: Ո՞ր լծակներն են գերադասելի: «Սոյն ընտանեկան պալատին ու թագաւորութեան մէջ, ոչ ոստիկան կայ, ոչ սուր, ոչ բռնութիւն, ոչ գաւազան այլ ամենուն տեղ հայրական սէր եւ մայրական գորովն է. դաստիարակ եւ խրատ՝ ծնողաց կենդանի օրինակն է»⁴⁵:

Հայ ընտանիքի լավագույն տիպար մշակելիս հեղինակը անդրադառնում է նահապետական ընտանիքին, Աստվածաշնչին, սակայն մշտապես հաշվի է առնում ժամանակի գործոնը (նկատելով նորամուծությունների թե՛ բարերար, թե՛ վնասակար կողմերը): Նահապետական ընտանիքի կառավարման հիմքում են հետևյալ գործոնները՝ «տան կառավար նահապետին հայրական պատկառանք», «մեծ տանտիկնոջ ժրագործ տնտեսութիւն», «գաւակաց ակնածութիւն եւ մեծարանք առ ծնողս», «հարսներաց հլու հնազանդութիւն», «կրօնի երկդիւղածութիւն եւ աստուածապաշտութեան հաւատք»: Սրանց ներգործությունը բնութագրվում է որպես «բնական օրէնք», որն ավանդաշտ միջավայրում չի հանդիպել խոչընդոտների: Թեպետ նահապետական ընտանիքի

⁴⁴Տե՛ս, էջ 208:

⁴⁵Տե՛ս, էջ 206:

«մնացորդ նշխարները դեռ հայկական աշխարհին մեջ կ'երեւին»⁴⁶, պետք է, սակայն, ելնել իրողությունից: Ավելին, կան սովորույթներ, որոնք հնացել են, չեն համապատասխանում ժամանակի ոգուն (օրինակ՝ նորատի կնոջ չխոսկանության պահանջը նա համարում է միայն վնասակար):

Հայրական սերն ու մայրական գորովը, ծնողների անձնական վարքուբարքը, հիրավի, զավակների համար վարքագծի ընդօրինակման լավագույն հիմքն են: Բայց նույնքան ազդեցիկ են եւ, ավա՞ղ, հույժ վնասակար ծնողների հոռի հատկությունները՝ եսականությունը, ազա-հությունը, երկերեսանիությունը, ստախոսությունը եւ այլն: Այդպէս՝ ծնողի չարաղետ վարքը ոչ միայն այդ պահին է վնասակար լինում, այլեւ անդրադառնում է զավակների հետագա կյանքի վրա: Խրիմյանի շարադրած առականման պատմություններից մեկն այսօր է՛լ, թերեւս, պիտանի խրատ է ոմանց համար: «Երբեմն մի ընտանեաց հայր, որ շատ հարուստ է, եւ իր սնտուկներ լիք են ոսկիներով, բայց երբ ինքն բնաւորութեամբ սաստիկ ազահ եւ կծծի է, ամենախիստ ժլատութեամբ կը տնտեսէ իւր տան ծախքեր, եւ կապրի չքաւոր աղքատի պէս, դու լսեր ես թէ այդ ազահ մարդու ընտանիք ինչ կաղօթեն, Աստուած առ սորա հոգին, մենք ազատուինք սորա խստասիրտ տնտեսութենէն: Երբեմն Աստուած կը լսէ այդպիսի աղօթքն եւ կառնէ ազահ տանտիրոջ հոգին. պահ մի կուլան ընտանիք, մինչեւ կատարուի թաղման մեծ հանդէսը, երբ կը փակին ազահին մարմին գերեզմանին մէջ, այնուհետեւ կը բանան ոսկելից սնտուկներն, շոայլութիւն, մսխանք, պերճութիւն կուգայ կը տիրէ ազահին տան վերայ, շատ չի տեսեր, շոայլութեան ժամանակ կարճ է, շուտով կը դատարկուին ոսկւոյ սնտուկներն, կերթայ շոայլութիւն՝ կուայ կը տիրէ մշտնջենաւոր աղքատութիւն»⁴⁷:

Ընտանեկան միության առանցքը, ընտանիքի հիմքը ամուսինների սերն է. սա հեղինակի հավատո հանգանակն է. «Ամուսնութեան բուն օրէնքը բնական սերն է, որ մարդու բնութենէն անբաժանելի է»: Մյուս հիմքը նրանց համապատասխանությունն է: Սա «համապատշաճ օրէնք» է՝ «բովանդակ տիեզերքը համեմատութեան չափով կը կառավարուի»⁴⁸:

⁴⁶Տե՛ս, էջ 206, 211:

⁴⁷ **Խրիմյան Հայրիկ**, Պապիկ եւ Թոռնիկ // Երկեր, Եր.: Երևանի համալս. հրատ., 1992, էջ 158 – 159:

⁴⁸ Խրիմյան Հայրիկ, Դրախտի ընտանիք, էջ 200, 222:

Անդրադառնալով ամուսինների հարաբերություններին՝ Խրիմյանը նորովի է մեկնաբանում աստվածաշնչյան «կնոջ գլուխ այրն է» ասույթը, որ սովորաբար մեկնաբանվում է որպես մի կողմում՝ իշխելու իրավունք, մյուսում՝ հնազանդվելու պարտականություն: Նորույթը «իրավունքներ – պարտականություններ» դիալեկտիկայի մասնավորեցումն է. Տղամարդուն նախապատվություն է տրված, բայց դա սոսկ իրավունք չէ: Բհարկե, գլուխը բարձր է մարմնից. «Երանի՜ թե այդպես լիներ, այր մարդիկ ճանչնային իրենց նախապատուրեան պարտիքը, ճանչնային ամուսնական սիրոյն անգին արժանաւորութիւնը եւ զայն չփոխէին նիւթական դրամին եւ ընչից հետը»⁴⁹:

Խրիմյանը հիշեցնում է, որ հայ կինը միշտ ազատ է եղել, ուստի գուր են ունենք սեռերի իրավահավասարության պահանջն ընկալում որպես եվրոպական արժեք. «Եւրոպիոյ իրաւագիտութիւնը զայն նոր չի հնարեց, այլ միայն վերանորոգեց»⁵⁰: Կնոջ հնազանդության պահանջը հեռու է «տեր – ստրուկ» կամ «գորապետ – զինվոր» փոխհարաբերության մեջ երկրորդ կողմի վարվելակերպից. «կին ոչ հպատակ է, ոչ զինուոր է եւ ոչ ստրուկ ծառայ: Կինն իւր ամուսնոյն ազատ ընկեր ու հաւասար լծակիցն է ամենայն իրաւամբ»⁵¹:

Խորապես ըմբռնելով խնդիրը՝ Հայրիկը նրբագեղ վճռակ է մեզ նվիրում. «Այո՛, կնոջ պարտիքն է կատարեալ հնազանդութիւն առանց բնաւ ստրկանալոյ»⁵²: Ամուսինն էլ չպետք է բռնանա կնոջ վրա, եթե հասկանա («տիրապէս ճանչնայ»), ամուսնության էությունը. «ամուսնական կապակցութիւնը մի թիւ է, երկու չէ»: Բռնանալ կնոջ վրա՝ նշանակում է բռնանալ սեփական «եսի» վրա: Խելամիտ ամուսինը չի նսեմացնում կնոջը, չի շեշտադրում այրական առավելությունները:

Ավելին, սեռերի դաշնությունն ամուսինն է պարտավոր ապահովել. «Եթէ կը համարի զինքն իբրեւ հանճարեղ, իմաստուն, խոհական, քաղաքագէտ, աշխարհավար եւ այլն, իւր պարտիքն է իբրեւ նախաթոռ բազմելով ընտանեկան գերդաստանին գլուխն՝ կինն եւս իւր խորհրդակից առնելով կառավարին ի միասին ընտանեկան կեանքը»⁵³: Իսկ եթե

⁴⁹Տե՛ս, էջ 226:

⁵⁰ Տե՛ս, էջ 220:

⁵¹ Տե՛ս, էջ 245:

⁵² Տե՛ս, էջ 248:

⁵³ Տե՛ս, էջ 247:

տղամարդը գերիշխող է հանրային կյանքում, սահմանափակել է կնոջը ներընտանեկան կյանքով, ապա իրավունք չունի բողոքելու, թե կինը չի հետաքրքրվում ամուսնու արտաընտանեկան հոգսերով: «Կնոջ անհոգության պատճառը մեծ մասամբ այր մարդիկ եղած են, որ կամ այրական, ինքնահաւան հպարտութեամբ կնոջ կարելություն չտալով՝ նա սովորեր է անհոգ մնալ, կամ մեծամտութեամբ ստրկություն եւ նուաստություն կը համարին կնոջ խորհուրդ տալ, կամ առնուլ, եւ կամ օրուան ձախորդ անցքեր պատմել եւ ցոյց տալ իւր վիճակի կացութիւնը»:

Եվ խնդրի լուծումը դարձյալ բխում է մի կողմի պարտականությունը մյուսի իրավունքն է խրիմյանական հիմնադրույթից. «Ուրեմն պարտագանգ է այր, որ իւր կեանքի ու գործոց վիճակը թագուցանելով, չի թողուր որ իւր կենակիցն՝ իւր հետ հաւասար ընտանեկան կեանքին վերայ հոգածէ: Պարտագանգ է կինը, որ իւր ամուսնոյն հոգածութեան բաժանորդ չի լինիր»⁵⁴:

«Ներընտանեկան պատկառանքը» ևս լուծվում է միևնույն սկզբունքով. եթե մեծերը ցանկանում են, որ փոքրերը վայելուչ վարք ունենան, պետք է օրինակ ցոյց տան, հարգանք պահանջելով՝ հարգանքով վերաբերվեն. «պատկառանքը միայն փոքրերուն պարտիք չէ, այլ եւ նոյն իսկ մեծերն պարտաւոր են զգուշաւոր պատկառանք վարվիլ փոքրերուն հետը»⁵⁵:

Որպես սույն թեմայի ամփոփում՝ վերադառնանք գրքի առաջաբանին: Խրիմյան Հայրիկի մտահղացմամբ՝ «Դրախտի ընտանիքը» մի յուրատեսակ հայելի է «ի պէտս հայոց ընտանեաց», որի մեջ ամեն ընտանիք, այր մարդիկ եւ հայոց տիկնայք կարող են տեսնել իրենց իրական պատկերը, նկատել նաև «ընտանեկան զեղծմունքները», եւ ինքնաճանաչմամբ հզորացած՝ դիմել դեպի առաջադիմություն և քաղաքակրթություն: Ներընտանեկան կյանքի բարեփոխմանն ուղղված բազում խորհուրդներն եւ պատգամները հարյուր հիսուն տարի էլ անց օգտակար են, բայց, թերևս, ամենապիտանին չափավորության պահանջն է: Կարծեք գուշակելով 21-դարի իրողությունը, երբ մարդկությունն աստիճանաբար դառնում է սպառողական մոլուցքի զոհը, Homo Sapiens տեսակից վերածվում է Homo Consumens-ի, մեր մտահոգ Հայրիկը հրամայելու պէս հորդորում է. «Թող չափ դնեն դարձեալ ընտանեկան այն

⁵⁴ Տե՛ս, էջ 252, 253:

⁵⁵ Տե՛ս, էջ 292 – 293:

ամեն պետքերուն. գիտնալով թե պետքերն անսպառ են, գորս օր ըստ օրէ կը հնարէ Եւրոպիոյ ձեռարուեստ հանճարը, եւ մարդոյն ցանկութիւն եւ հաճոյքը անհուն անսահման են, եթէ չափ չի դնենք՝ մարդ մի անգէտ մանուկ է, կը վազէ միշտ դէպի սիրուն խաղալիքները»⁵⁶:

4. «Ինքնաշխատ յառաջադիմութիւն»

Վերադառնանք Խրիմյան Հայրիկի դատողութիւններին ելակետին՝ մարդկանց համակեցության հիմքում ընկած է նրանց անհավասարութիւնը, ինչը ստեղծում է փոխադարձ կախվածություն, հիմք դառնում համագործակցության, իր հերթին գոյանում է իշխանություն՝ անհավասարութիւնից ածանցյալ հոռի երեւոյթները զսպելու համար: Դա մարդու տեսակային առավելությունն է մյուս կենդանիների հանդէպ՝ միավորվելը, հանրային կյանքով ապրելը: Աստված ոչ միայն ստեղծել է մարդուն և կարգել «իշխող տիրապետ» այլ կենդանիների վրա, այլև սահմանել է առավելության կարգը, մարդկային հասարակության առաջադիմության այդ բանալին: Մեկը մյուսին գորակցելով, բայց և միմյանց հետ մրցակցելով՝ մարդիկ առաջ են տանում գիտությունը, զարգացնում տնտեսությունը, բարելավում կենցաղը, ձգտում հարգանք վայելել, փառք ու պատիվ ձեռք բերել: «Այս աշխարհի մարդոց առաքինութեան ասպարէզն է», որտեղ ամեն ոք հնարավորություն ունի ինքնադրսևորվելու: Այս կենսափիլիսոփայությունը շատ տպավորիչ է ձևակերպված. «Ուստի աշխարհիս վերայ մարդոյն կոչումն, պատիւ, փառք, արժանաւորութիւն՝ իւր գործքերու կշիռն է. նա ինչ վիճակի մէջ կը լինի թող լինի. նորա նուիրական պարտիքն է ճանչնալ իւր կոչումն, ճանչնալ մարդկութեան վայելուչ կեանք, ճանչնալ նաեւ թէ ինքն այս աշխարհիս վերայ դիպուածով եւ ունայնաբար չէ եկեր, այլ մեծամեծ պարտիքներ կատարելու համար ծներ է, քանի որ կեանք ունի՝ պետք է գործէ, վասնզի մահն ու գերեզման գիշեր կը բերեն, յորում այլ եւս մարդ կարող չէ գործել»⁵⁷:

Իսկ ո՞րն է համակեցության ցանկալի ձևը: Այս հինավուրց հարցին Խրիմյանի պատասխանը բխում է իր ձևակերպած «անհավասարության օրենքից», որով հակադրվում է հավասարաբարական (էգալիտարիստական)

⁵⁶Տե՛ս, էջ 184:

⁵⁷ Խրիմյան Հայրիկ, Սիրաք եւ Սամուէլ, էջ 315, 314:

ուտոպիաների հեղինակներին: Նա լիովին հասկանում է վերջիններիս փաստարկման բնույթը. տեսնելով ծայրահեղ հարստության և աղքատության պատկերը, աշխատավորների թշվառությունը, ապերջանիկ կյանքը՝ այս դիրքորոշման կողմնակիցները մարդկանց անհավասարությունը բնորոշում էին որպես մեծագույն չարիք և փորձում հիմնավորել լիակատար հավասարություն: Մինչդեռ Խրիմյանի համար հենց անհավասարության հանգամանքն է առաջադիմության «մղիչ ու շարժիչ գործությունը»: Եվ սա աստվածադիր կարգ է. «նախախնամող կարգադրիչ իմաստութիւնը կամեցեր է, որ այդ անհաւասարութեան կապով մարդկային ընկերութիւն կանգուն եւ կենդանի մնայ»⁵⁸: Եթե մարդիկ հավասար լինեին, ոչ մեկը մյուսի կարիքը չէր զգա, չէին առաջանա կապեր, հանրային կյանքն էլ չէր գոյանա, մարդիկ կմնային անասնական մակարդակին: Կենդանիներն անփոփոխ են արարչագործության պահից՝ «սկզբանէ անտի ուր որ են՝ անդ կան ու կը մնան»: Այնինչ մարդիկ մշտական պայքարի մեջ են: Արդյունքը առաջադիմությունն է, գիտության և մշակույթի ծաղկումը:

Լավ, մի՞թե աստվածահաճո են կողոպուտը, թալանը, հարստահարությունը, խաբեությունը և մրցակցությանն ուղեկցող մյուս երևույթները: Կարո՞ղ ենք հեղինակին դասել «նախասահմանված ներդաշնակության» կողմնակիցների շարքը: Նման եզրակացությունը սխալ կլիներ, ինքն էլ կանխել է դա:

Նախ՝ Աստված մարդուն տվել է ընտրելու ազատ կամք. «Մարդն ազատ անբռնադատ է. ինքն ազատարար կ'ընտրէ իւր ճանապարհ. կամ արդարութիւն գործելով՝ արդար կը լինի, կամ մեղք գործելով՝ մեղապարտ կը լինի»⁵⁹: Բարիքի և չարիքի հարցում մարդու ազատական վարքագծի բնութագիրը Խրիմյան Հայրիկը տվել է «Ժամանակ եւ խորհուրդ իւր» աշխատության մեջ (1876 թ.), երբ Գրիգոր Նարեկացու ոճով խոստովանում է բոլորիս մեղավորությունը. «Խոնարհելով Երկնից առաջ կը խոստովանիմք, Տէր, եւ մեր խղճի գիտակցութեամբ կը վկայեմք թէ՛ չարիքները չարարուեստ մարդկանց գիւտըն է եւ մարդն է հեղինակ չարեաց ու բարեաց. զի նորա սրտին մեջ կայ ու կը դարանի չարութեան եւ

⁵⁸Տե՛ս, էջ 324:

⁵⁹ Տե՛ս, էջ 391:

բարութեան գանձ. եւ երբ ուզէ զայն ազատարար ի դուրս կը բղխէ, որպէս ասաց Քրիստոս»⁶⁰:

Երկրորդ՝ կան, իսկապէս, նաև անցանկալի երևոյթներ՝ ածանցյալ մրցակցութիւնից՝ նախանձ, ընչամոլութիւն, բռնութիւն, բազում թշվառութիւններ «կ'ապականեն ընկերական կեանք»: Բայց սոցիալական անհավասարութեան այդ «յոռի ծնունդները» հաղթահարելի են՝ օրինականութեան հաստատմամբ: Այստեղ էական է Խրիմյանի տարբերումը՝ «ճշմարիտ» և «սուտ» քաղաքակրթութիւնների: «Քաղաքակրթութեան ազատ օրէնք թոյլ կուտան, որ իւրաքանչիւր մարդ ինքնաշխատութեան արդիւնքն՝ ինքն ազատապէս վայելէ, բաւական է որ արդար լինի մարդ իւր աշխատութեան մէջ: Բաւական է եւ երջանիկ կը լինի ժողովուրդ, եթէ երկրին օրէնք եւ իշխանութիւն հսկէ, որ աշխատող ժողովուրդին վաստակն ապահովի եւ նա կարենայ ազատութեամբ միայն իւր վաստակն վայելել եւ չէ թէ հարուստի վաստակէն բաժին ընդունել: Ո՞րչափ շնորհակալ կը լինի բաւականասէր ժողովուրդն, եթէ հարուստն եւս իւր արդար վաստակովն բաւականանայ եւ չկռփէ ու չհարստահարէ գանաւագ ժողովուրդն»⁶¹:

Այստեղ վերադարձ կա «իշխանութիւն – ժողովուրդ» կարգավորմանը՝ մեկի պարտքը մյուսի իրավունքն է, և կարելի է պահանջել մյուսից միայն սեփական պարտքը կատարելով: Ժողովուրդն աշխատանքային պարտքն է կատարում՝ ակնկալելով իշխանութեան աշխատանքը, այն է՝ արդար վաստակը վայելելու պայմանների ապահովում:

«Ինքնաշխատ յառաջադիմութեան» գաղափարը լայն ընդգրկում ունի: Ո՛չ անձը, ո՛չ էլ ազգը չեն կարող առաջադիմել, արժանավայել ապրել, եթէ հույսը դնում են սոսկ արտաքին օգնության վրա: Այս պահանջ-պատվիրանը քանիցս շեշտադրվում է. «Պէտք է խելամտի ու ճանչնայ ժողովուրդ թէ՛ իւր կեանքն արդիւնաւորողն՝ միմիայն իւր ինքնաշխատութեան ձեռքն է.... Մի ազգ եւ ժողովուրդ՝ եթէ իւր կեանք եւ բախտ ուրիշէ կ'ակնկալէ, շատ բնական եւ յայտնի է թէ՛ իբրեւ երազայոյս պահ մի գիշերուան ծանր քունին մէջ կը խայտայ եւ առաւօտ ոչ ինչ կը գտնէ»⁶²: Առանց «անյուսահատ ինքնաշխատութեան» մնում է ապավինել

⁶⁰ <http://digilib.aua.am/>

⁶¹ Խրիմյան Հայրիկ, Միրաք եւ Սամուէլ, էջ 327:

⁶² Տե՛ս, էջ 368:

բախտին: Իսկ կարո՞ղ է անգործունյան արգասավոր լինել. «Որչա՞փ զարմանալի է, երբ մարդիկ առանց գործելոյ, ժամանակէն գործ եւ յաջողութիւն սպասեն, որպէս թէ ժամանակն աշխարհի տնտեսն ու մատակարարն է, եւ կամ թէ մեր ազարակի մէջ վարձաւոր մշակ»⁶³:

Պետք է ոչ միայն անտրտունջ աշխատել, այլն արդյունավետ տնտեսավարել: Այսպէս կամրջվում է համակեցության երկու պայմանը՝ «մարդու ինքնաջան զօրութիւն» և «ընկերական միութեան զօրութիւն»⁶⁴:

Եվ դարձյալ արդիական է մի բանաձև. «Թէ բուն հարստութեան աղբիւր մարդոյն գործունեայ աշխատութիւնն է, այսպէս նաեւ հարստութեան գանձարանային հսկող պահապանն՝ արթուն տնտեսութիւնն է: Մարդիկ աշխարհիս վերայ մէն մի իւր կարգին եւ վիճակին մէջ առանձին առանձին տնտեսապետ են, եւ ամէն մէկ հաշիւ ու համար, պարտիք եւ իրաւունք ունին: Թագաւոր՝ իւր աշխարհին տնտեսապետն է, իշխան՝ ժողովուրդին, հարուստն՝ իւր կալուածոց, աղքատն՝ իւր տնակին, քաղաքացին՝ իւր արհեստին եւ շահավաճառութեան, գյուղացին՝ իւր հողագործութեան, եւ իւրաքանչիւր գերդաստան ու ընտանիք՝ առտնին տնտեսութեան»⁶⁵: «Արթուն տնտեսավարումը»՝ որպէս ինքնաշխատ առաջադիմությունն արդյունավորող պայման, խորթ է ինչպէս ազահությանը, այնպէս էլ զեխությանը. ուստի խուսափել է պետք ծայրահեղ «անչափավորությունից», գտնել միջին ճանապարհը, «մեծ իմաստութեան չափ ու կշիռ պէտք է ուղիղ տնտեսութեան մէջ», «իմաստուն խոհականութիւն պէտք է, գիր ու հաշիւ, ուղիղ ճշդութիւն պէտք է», «տնտեսական ճարտարամտութիւն»⁶⁶:

Վերջին հանգամանքը, այսինքն՝ ճշգրիտ գործավարությունը, բացարձակ անհրաժեշտություն է արդյունավետ տնտեսավարման համար, ահա թե ինչու Խրիմյանը քանիցս հիշեցնում է դրա կարևորությունը. «Մեր կեանքի տնտեսութիւն՝ պէտք է զրով ու հաշուով լինի, որովհետեւ մարդոյս միտք մոռացկոտ է, այս ատուր բան վաղը կը մոռնայ. գիրն ու հաշիւ հնարուած է, որ մեր մտքի բան անմոռաց պահէ: Ով որ գիր ու

⁶³Տե՛ս, էջ 400:

⁶⁴ Տե՛ս, էջ 373:

⁶⁵ Տե՛ս, էջ 357:

⁶⁶ Տե՛ս, էջ 361, 371:

հաշիւ չունի, նորա տնտեսութիւն խանգարուած է, եւ ինքն իւր բոլոր առեստորի մէջ միշտ կը վնասի»⁶⁷:

Արդյունավետ տնտեսավարելու կարևորությունը հեղինակը քանիցս կրկնում է թե՛ առանձին աշխատողի, թե՛ ընտանիքի և թե՛ ամբողջ ժողովրդի համար, «անձանձրոյթ կրկնում» այդ պահանջը «Հայոց անտնտես ժողովուրդի» համար⁶⁸: Ընդհակառակը, «ուղիղ տնտեսությունից» խոտորվելը, «ուղիղ տնտեսության օրենքը» չկատարելը հանգեցնում են աղքատության և թշվառության: Ինքնաշխատ առաջադիմությամբ, ինքնաջան գործությամբ, շիտակ տնտեսավարությամբ բարգավաճելը, որպէս «միակ պայման ու ճանապարհ», Խրիմյանն ավանդել է մեզ իբրև անձնային ու հանրային կյանքի «ամենակարևոր դաս»:

Որպէս ամփոփում նկատենք, որ Խրիմյան Հայրիկի սոցիալփիլիսոփայական այս դիտարկումները ներքնապէս կապված են՝ որպէս ամբողջական հայեցակարգի առանցքային տարրեր: «Ինքնաշխատ առաջադիմությունն» անձի (ազգի, այլ հանրութի) և հասարակության փոխհարաբերությունների կարգավորման լավագույն եղանակն է. անձն այնքանով իրավունք ունի ակնկալելու և պահանջելու շրջապատից, որքանով իր հիմնական պարտականությունն է կատարում, ինչն էլ նրա աշխատանքային վաստակն է, անձնական ներդրումը ընդհանուր համակեցության մեջ:

«Իշխանություն – ժողովուրդ» փոխհարաբերությունները կարգավորվում են «մեկի պարտականությունները մյուսի իրավունքն են» սկզբունքով, և միայն պարտականությունների պարտադիր կատարմամբ է մի կողմը իրավունք ստանում մյուսից ակնկալելու պարտականությունների կատարում: Իսկ վերջինիս հիմնական եղանակը դարձյալ «ինքնաշխատությունն» է: Եվ որքան ավելի լավ է մի կողմը կատարում իր պարտականությունները, այնքան ավելի հիմք ունի մյուսից ակնկալելու համարժեք վարքագիծ: Ուրեմն, երկուստեք պարտականության կատարմամբ է, որ ապահովվում է «ինքնաշխատ առաջադիմություն» թե՛ պետության, թե՛ հասարակության համար:

Նույնը ներընտանեկան կյանքում. այստեղ նույնպէս գերադասության-ստորադասության կապերի կարգավորումը պահանջում է

⁶⁷ Խրիմյան Հայրիկ, Պապիկ եւ Թոռնիկ, էջ 169:

⁶⁸ Խրիմյան Հայրիկ, Սիրաք եւ Սամուէլ, էջ 358:

պարտականության և իրավունքի ներդաշնակ համամասնություն, իսկ վերջինս ապահովելու գլխավոր միջոցը ինքնաշխատությունն է՝ այրը՝ իր տեղում, կինը՝ իր, ավագը՝ իր չափով, կրտսերը՝ իր: Սեփական աշխատանք-պարտականությունները պատշաճ կատարելով է միայն, որ մի կողմը կարող է ակնկալել ու պահանջել մյուսի պարտականությունների կատարում:

Այսկերպ՝ հանրային կյանքում կարող են լավագույնս իրականանալ կարգավորման և ինքնակարգավորման գործընթացները, լինի «պետություն – հասարակություն» ընդգրկուն փոխհարաբերությունը, «անհատ – հասարակական միջավայր» կապը, թե ներընտանեկան բարդ աշխարհը:

Խրիմյան Հայրիկի այս մտքերը քաղված են հիմնականում նրա «Սիրաք և Սամվել» գրքից, սա երեսակայական հոր փիլիսոփայական մտքերն են և բարոյական խրատները՝ ուղղված իր երեսակայական որդուն: Ո՞րն է առավել կենսական խորհուրդը, որ այսօր էլ հայոց երկուհարյուրամյա Հայրիկը կտար իր հեռավոր հոգեզավակներին: Ճանաչել աշխարհը և սեփական կոչումն այդ աշխարհում: «Մարդիկ կան, որ կը շրջին աշխարհիս վերայ, կը տենան որ չեն տեսնար. այս մարդիկ մտաւորական լոյսէն զուրկ են, միայն աշխարհի արտաքին երեսն իբրեւ ստուեր կը տեսնան, եւ չը գիտեն աշխարհի ներքին կյանք, բնական եւ բարոյական օրենքներ, վարիչներ եւ շարժման զօրութիւններ եւ այլն»⁶⁹: Ահա և հրամայելու պէս խորհուրդ է հնչում. «Ջանադիր եղիր, որդեակ իմ, որ մտաւորական լոյսդ պայծառ լինի, եւ որչափ պայծառանայ մտքիդ լոյս՝ այնչափ պայծառ ու պարզ կը տեսնաս աշխարհ եւ աշխարհի բաները, դու ստուերի նման չես անցեր աշխարհէս եւ աշխարհս ստուերի նման չես տեսնար»⁷⁰:

Հիրավի, Մկրտիչ Ա. Վանեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հասարակական-քաղաքական գործչի, խորունկ տեսաբանի, հայ ժողովրդի շահերին անմնացորդ նվիրված մտավորականի ներքին հզոր լույսը օգնում է մեզ՝ նրա երախտապարտ զավակներին՝ պարզ ու պայծառ տեսնելու այսօրվա աշխարհը և կարգավորելու մեր հանրային կյանքը իր խորհուրդների և պատգամների ոգով:

⁶⁹Տե՛ս, էջ 312:

⁷⁰Տե՛ս, նույն տեղում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մկրտիչ Ա. Վանեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսը հասարակական-քաղաքական երևելի գործիչ է եղել, խոհուն ուսուցիչ, եռանդուն հրատարակիչ: Հոգվածում քննարկվում են մեծ մտածողի սոցիալ-փիլիսոփայական բնույթի որոշ դիտարկումները: Դրանցից են, մասնավորապես, պետության գոյացման երեք հիմքերի ըմբռնումը՝ Աստծո կամք, ընտանիքի ընդլայնում և մարդկանց անհավասարություն: Վերջինս նաև մեկնաբանված է որպես մարդկանց համակեցության առաջընթացի աղբյուր: Արժեքավոր են և արդիական նաև հայ ընտանիքի կառավարմանը վերաբերող Խրիմյան Հայրիկի մշակած սկզբունքները: Նույնքան հրատապ են նրա կոչերը, ուղղված թե՛ անհատին և թե՛ ժողովրդին՝ գնալու «ինքնաշխատ առաջադիմության» ճանապարհով:

Հիմնաբառեր. Խրիմյան Հայրիկ, մարդկանց համակեցություն, պետական իշխանության ծագման պատճառները, անհավասարությունը՝ առաջընթացի հիմք, «իշխանություն – ժողովուրդ» փոխհարաբերությունը, հայոց ընտանեկանության սկզբունքները, «ինքնաշխատ յառաջադիմություն»

СОЦИАЛЬНО-ФИЛОСОФСКИЕ НАБЛЮДЕНИЯ ХРИМЯНА

АЙРИКА

Валерий Мирзоян

доктор философских наук, профессор

Хримян Айрик (Мкртич I Хримян, Мкртич I Ванеци) – Католикос всех армян, педагог, издатель, общественно-политический деятель. В статье анализируются некоторые его социально-философские наблюдения. Исследуется, в частности, интерпретация Хримяном возникновения государственной власти тремя причинами: божественной волей, расширением семьи, неравенством среди людей. Последний момент, согласно, Хримяну, является также основным источником прогрессивного развития человеческого общежития. Концепция взаимоотношения власти и народа основывается на принципе балансирования прав и обязанностей сторон. Не потеряли свою актуальность разработанные им принципы самоуправления армянской семьи. Особо важен призыв Хримяна как к

личности, так и к народу, в целом, саморазвиваться через собственный труд.

Ключевые слова: Хримян Айрик, общежитие людей, причины возникновения государственной власти, неравенство – источник прогресса, взаимоотношение «власть – народ», принципы самоуправления армянской семьи, саморазвитие через собственный труд.

KHRIMYAN HAYRIKS SOCIO-PHILOSOPHICAL OBSERVATIONS

Valeri Mirzoyan

Doctor of philosophical science, professor

Khrimyan Hayrik (Mkrtich I of Van) – Catholicos of All Armenians, teacher, publisher, social and political figure. The article analyzes some of his socio-philosophical observations. In particular, Khrimyan's explanation of the emergence of state power by three reasons is examined: divine will, expansion of the family, and inequality among people. The last moment, according to him, is also the main source of the progressive development of human society. The concept of the relationship between the government and the people is based on the principle of balancing the rights and obligations of the parties. The principles of self-government of the Armenian family that he developed did not lose their relevance. Of particular importance is Khrimyan's appeal to both the individual and the people as a whole to self-develop through their own labor.

Key words: Khrimyan Hayrik, human society, causes of state power, inequality as a source of progress, relationship "power – society", relationship "power – people", principles of self-government of the Armenian family, self-development through own labor.

СИСТЕМНОЕ МЫШЛЕНИЕ КАК ОСНОВА ИННОВАЦИОННОЙ ЭКОНОМИКИ

Лусине Флджян

Доктор филологических наук, профессор, Северный университет,
Армения

fljyan@mail.ru

Кристине Григорян

Кандидат филологических наук, доцент, Ереванский филиал
Московского государственного университета имени М. Ломоносова

Парадигма экономики стремительно меняется в связи с теми процессами, которые происходят вокруг нас: молниеносное развитие технологий, глобализационные процессы во всех сферах социальной жизни заставляют профессионалов, вовлеченных в процесс развития программ в высших образовательных учреждениях по всему миру, пересмотреть их содержание и сделать те изменения, которые в состоянии обеспечить осуществление качественного высшего образования и подготовить выпускников-профессионалов, которые будут конкурентоспособны на рынке труда на протяжении всей жизни и смогут развивать инновационную экономику как основу благосостояния народа. К сожалению, именно предубежденность в том, что мышлению надо учить прямо, а не косвенно, через все возможные академические курсы, которые входят в образовательные программы в разных странах мира, и в Армении, в том числе, существенно тормозит развитие инновационной экономики.

Для правильного планирования высшего образования и обеспечения развития инновационной экономики на основе подготовки новых кадров, которые будут в состоянии обеспечить прогресс, необходимо ответить на очень важный вопрос: каким будет выглядеть мир через десять, двадцать, пятьдесят, сто лет, и готово ли высшее образование сформировать у людей те необходимые навыки и умения, которые обеспечат успех выпускника на местном и международном рынке труда не только сегодня, но и через многие десятки лет? Какие продукты будут необходимы будущему поколению? В каком направлении должны двигаться ученые, чтобы сделать завтрашний день людей более обеспеченным, безопасным и интересным? Ответить на эти вопросы мы можем только лишь с гипотетическими оговорками, так как, многое из того, чего мы знаем сегодня, и оно является на данном этапе актуальным, может стать уже устаревшим и неактуальным завтра. Никакой университет не в состоянии разработать и предугадать самые передовые

профессиональные навыки, которые будут нужны будущим агрономам, юристам, экономистам, инженерам через четверть века, но каждый вуз должен и обязан привить навыки, которые помогут любому человеку самому предугадать развитие и обеспечить собственный карьерный и жизненный успех. Вузы должны и обязаны привить те навыки, которые помогут людям предвидеть проблемы и строить стратегии по их быстрому и эффективному устранению самостоятельно, и они должны пересмотреть свои программы, чтобы их выпускники были в состоянии оперировать системным и инновационным мышлением на протяжении всей жизни. В какой-то степени мы можем приравнять навык системного мышления к навыку самосовершенствования и внутренней потребности получить образование на протяжении всей жизни.

Только лишь одно суждение по отношению к будущему является точным – основу развития в настоящем и в недалеком и далеком будущем будет составлять инновационная экономика или экономика, основанная на знаниях. Что она из себя представляет и как планировать экономику, чтобы обеспечить ее рост и развитие? Почему многие страны сильно отстают от других в инновационном развитии?

Ответ на данный вопрос необходимо искать как минимум в двух ипостасях: если государство не заинтересовано в продвижении сильных университетов, где разрабатываются и продвигаются инновационные идеи, которые впоследствии внедряются в экономику и производство, то понятно, что темпы развития инновационной экономики будут медленными и неэффективными. Если оно заинтересовано, но не делает существенных в него вложений, то опять отставание будет главным признаком экономики данной страны. Возьмем, к примеру, Китай. Еще двадцать лет назад трудно было представить, что сразу несколько китайских университетов войдут в число ста самых сильных университетов мира, а университет Тинхуа по международному рейтингу высшего образования Таймс 2021 окажется на 20-ом месте. В недалеком 2011-ом году университет был 58-ым, а уже через 10 лет передвинулся на 38 позиций вперед. По данным рейтингов 2019 года 73 китайских вузов входят в лучшие 1000 университетов мира. (World University Rankings: 2021). В 2017-2018 учебном году в Армении насчитывалось 56 высших учебных заведений. (Образование и культура. Данные Ежегодника 2019-ого года Государственного статистического комитета Армении: 15). Ни один армянский вуз не входит в число даже самых лучших 1000 университетов, что заставляет нас задуматься и подумать о кардинальном изменении методологии и контента высшего образования и требований, которые предъявляются к выпускникам

высших учебных заведений страны. Эстония, которая уступает по численности населения Армении, в разных мировых рейтингах имеет три университета, и среди них Тартусский университет, который находится в промежутке от 251 до 301-ого места одновременно в двух мировых рейтингах: международном рейтинге высшего образования Таймс (2021), а Таллинский университет и Таллинский университет технологий находятся в числе тысячи лучших университетов по рейтингу Таймс (2021). Есть еще и третья важная причина, тормозящая развитие – неготовность к постоянному самосовершенствованию со стороны интеллектуальных ресурсов, вследствие чего знания устаревают с течением времени и препятствуют как карьерному росту выпускников, так и развитию экономики страны в целом. Результатом отсталости трудовых ресурсов в образовательном плане становится отсутствие или ограниченное количество инновационных предприятий, которые способны генерировать новые идеи и внедрять их в самые разные сферы экономического и социального развития отсталых стран. Отсюда наша озабоченность в том, что развитые страны все время будут стремиться вперед, а отсталые страны еще больше отставать от общемировых инновационных процессов, что приведет к еще большей асимметрии развития между развитыми и финансово-устойчивыми и бедными странами, которые почти всегда будут иметь проблемы в плане инвестиций в высшее образование.

Второй вопрос непосредственно относится к сущности инновационной экономики, которая на протяжении десятилетий претерпела ряд существенных содержательных изменений. Первым этапом формирования теории инновационной экономики следует считать концепцию постиндустриального общества, получившую распространение во второй половине XX века, в первую очередь, в работах Дж. Гэлбрейта, Д. Бэлла и Э.Тоффлера. Первый этап привел к таким изменениям, как:

- доля инновационно-информационного сектора многократно возросла и достигла в развитых странах 45-65%;
- инновационно-информационный сектор стал мощным источником, генерирующим современное социально-экономическое развитие;
- наметилось изменение в механизме и траектории экономического прогресса;

Следующим этапом в формировании теории инноваций и инновационной экономики стали теории самоорганизации (И. Пригожин, И. Стенгерс) и синергетики (Г. Хакен). Согласно теории самоорганизации, инновационная активность обеспечивается лишь при

условии высокой гибкости структуры, поэтому самоорганизация системы начинается с формирования структуры, в которой каждому источнику внешних импульсов соответствует элемент, генерирующий внутренние инновации. Инновационная экономика основывается на развитии инноваций, определяемых развитием научной мысли, на разработке механизма рационального природопользования. Инновационная экономика – это продукт знаниевого общества, при котором хозяйства, предприятия, отрасли, страны, мир развиваются с помощью генерации инноваций, трансформированных из фундаментальных наук для получения сверхприбыли за счет присвоения интеллектуальной ренты. Инновационная экономика – это искусство ведения хозяйства, при котором обеспечивается рост благосостояния народа без ущерба интересов будущих поколений при инновационном развитии производительных сил, производственных отношений на основе знаний (Цитируется по Делия В. П. Маилиян И. А. Инновационное мышление предпринимателя и инновационная экономика”).

Существует ряд серьезных барьеров, которые препятствуют инновационному развитию, и среди них, такие факторы, как отношение общества к коммерциализации идей, авторитаризм, который игнорирует законы развития рынка, ограниченная мобильность населения, правовые ограничения, сложность использования инноваций широкими массами, коррупция и другие явления. Для оценки инновативности стран применяются разные рейтинги. Индекс инноваций Блумберг-2018, который используется в мире для составления рейтинга стран с инновационной экономикой, учитывает семь критериев: “расходы на научно-исследовательскую деятельность и ее плотность, добавленная стоимость производства, производительность, эффективность образования, концентрация высокотехнологичных и исследовательских предприятий и компаний и количество зарегистрированных патентов” (Фомченков: 2018). Как очевидно, наряду с другими показателями, Блумберг-2018 учитывает показатель эффективности образования, а также долю людей с высшим образованием в стране. Очевидно, что увеличение критической массы людей с высшим образованием является одним из необходимых критериев развития инновационной экономики.

Примечательно, что если раньше только лишь некоторые страны уделяли внимание на исследование и развитие (США, Япония, ряд европейских государств), то с 1996-ого по 2016-ые годы расходы на исследования и инновации удвоились в целом в два раза во всем мире (Global Innovation Index 2018 Emergizing the World with Innovation 2018:7). Согласно данным Глобального инновационного индекса

Армения занимает в этом списке всего лишь 74-ое место, уступая таким странам, как Тунис (41-ое место), Лесото (59-ое место), Шри-Ланка (69-ое место).

Орлова Л.Н. в статье “Инновационная экономика: факторы и противоречия развития, уровни формирования” выделяет основные и второстепенные признаки инновационного развития хозяйственных систем, и высокую интеграцию науки, образования, производства и рынка причисляет к категории прочих условий или вторичных факторов (Орлова:2015: 8), с которым мы можем лишь частично согласиться, так как она, по сути, является как внутренним (эндогенным) так и внешним (экзогенным) фактором и условием развития. В Армении почти нет интеграции науки, образования, производства и рынка, что и является одним из серьезным факторов, препятствующих продвижению Армении наверх по лестнице глобального инновационного развития.

Как видно, инновационная экономика непосредственно связана с уровнем развития науки и образования, и особенно высшего образования. Для развития наукоемких технологий, повышения качества жизни и стабильности общества пересматривается роль интеллектуальных факторов. “Мир пришел к тому, что постоянная и результативная инновационная активность становится неотделимой частью практически любого вида человеческой деятельности” (Сушков:2014). Резкий рост спроса на новые решения заставляет пересмотреть содержание программ высшего образования на всех трех его уровнях – бакалавриате, магистратуре и докторских программах. Но для того, чтобы понять, что именно надо изменить, и как правильно строить учебные программы, необходимо прежде всего проникнуть в суть такого понятия, как системное мышление.

Общеизвестно, что система высшего образования является составляющим компонентом способа производства, который состоит из способа производительных сил и производственных отношений, и основу производства составляет человек или человеческий капитал. От интеллектуального потенциала развития человека зависят качество и производительность труда.

Что является причиной замедления процессов развития экономики, которые тормозят процесс внедрения инноваций?

Прежде всего, экономика отсталых стран слабо адаптируется к внешним шокам (увеличение цен на энергию, газ), которые заметно сокращают объемы экономики, то есть, экономика сверхчувствительная к внешним воздействиям, не может самоорганизовываться и принимать инновационные решения, которые позволят обогнуть негативное влияние внешних факторов. Слишком

долгий поиск решений приводит к разного рода стагнациям, за которыми обязательно следует экономический кризис. Пространственная реорганизация регионов и появление зон отставания или “проблемных зон” также может замедлить процесс развития экономики страны в целом. Процесс нивелирования требует внедрения новых инноваций и концентрации “интеллектуального капитала” именно в этих регионах. В реальности, в Армении данный фактор почти не рассматривается государственными организациями, ответственными за равномерное развитие всех регионов, в результате чего регионы Армении в заметной степени отстают в своем развитии от столицы. На это влияет также тот фактор, что многие высшие учебные заведения и исследовательские институты по большинству направлений развития различных секторов экономики сконцентрированы преимущественно в Ереване.

“Сегодня для успеха в работе недостаточно владеть знаниями или хорошо видеть свой кусочек цепи». Необходимо переходить к мышлению, которое бы охватывало систему целиком, формировало эти системы из отдельных элементов и позволяло видеть то, как конкретные изменения влияют на совокупность ключевых процессов. От фрагментарного восприятия мы движемся к работе с системами, выстраиванию и поддержанию связности в работе. Уже сегодня мы имеем дело с постоянными изменениями, поэтому умение видеть взаимосвязи разных элементов будет приводить к значимым прорывам в работе” (Ананьева Т).

Что такое мышление? Это, прежде всего, осознанность, то есть то, что мы не просто интуитивно воспринимаем то, что происходит вокруг нас, а четко осознаем, о чем мы мыслим; мы в состоянии рассказать другим людям ход нашего мышления, и мы можем научить других людей мыслить аналогично. Мышление тесно связано с абстрагированием, то есть умением компактно мыслить. Мышление связано с адекватностью, то есть то, как мы мыслим, соответствует тому, что действительно происходит в реальном мире. Для чего нам нужна осознанность в мышлении? Без нее мы не сможем понять и осознать свою ошибку, улучшить наше мышление, не сможем выучить другой способ мыслить и двигаться дальше по направлению к исправлению допущенных ошибок. Рациональность также является важным компонентом мышления, без которого мы не сможем рассуждать по правилам, и каждый раз будем прибегать к интуиции, которая не является достаточным инструментом или средством, чтобы избегать ошибок и правильно строить наши рассуждения. Однако, если человек прибегает в мышлению с абстрагированностью,

осознанностью, рациональностью, еще не значит, что он уже знает как системно мыслить.

Поиск инноваций требует достаточно широкой профессиональной эрудиции и умения синтезировать знания из различных областей наук, то есть практически использовать методы системного анализа и синтеза знаний. Системное мышление - синтетическое “многоэкранное” восприятие объектов реального мира в качестве систем и осознанное понимание многообразия информации, сводимой к целостной картине мира.

Системное мышление необходимо для развития интеллектуального, структурного и отношенческого капитала, требований, предъявляемым к ним обществом и государством. Один из примеров понимания системного мышления показал Г.О. Греф на своей лекции для слушателей бизнес-школы “Сколково” По его мнению, системное мышление – это способность сочетать анализ (понимаемый как умение глубоко заныривать в детали) и синтез (понимаемый как умение вовремя выныривать из этих деталей) (Греф Г. Лекция для слушателей бизнес-школы “Сколково”). Однако рассказ о том, как нырять и выныривать не дает нам объяснения как выработать это умение и правильно употреблять его в жизни, в бизнесе, экономике.

Если к грефовскому пониманию привязать классическое понимание системы как системы взаимодействующих частей, где целое – это нечто большее, чем его части, то получается, что иерархичность частей и структур в системе и их целостное восприятие составляют основу системности, но опять-таки не системного мышления. Классическое понимание системы, которое представлено Берталанди и другими авторами, уже кажется устаревшим, так как системность как статический объект, как сумма взаимосвязанных частей, уже не является чем-то актуальным, и деятельное восприятие системы в ее восприятии с теми заинтересованными лицами или бенефициариями, сегодня составляет сущность нового понимания системности, системного подхода, и естественно, системного мышления.

Казалось, маленькое изменение в интерпретации системного подхода, которое было развито инженерами, постепенно начало проникать в бизнес, технологии и сферу управления, и были четко описаны в международных стандартах системной инженерии: в ISO/IEC/IEEE 15288:2015 (E), в которых указывается, что новый стандарт 2015 года, по сравнению со старым, учитывает не только специфические технические практики, но и потребности и требования стейкхолдеров, управление знаниями и другие факторы (Стандарты

системной инженерии: 2015). Так называемый системный подход 2.0 заменил старое понимание системности и повлек за собой изменения не только в системной инженерии, но и других отраслях знания. По сути, системные инженеры – люди, которые должны обеспечить успешность системы, то же самое касается и системно-мыслящих людей любой профессии, которые в какой-то мере должны отвечать за развитие системы. Не случайно, системные инженеры получают самую высокую зарплату в мире по данным CNN Money и PayScale (цитируется по Турханову А. “ Системная инженерия и системное мышление”).

Инновация требует широкого сочетания всех академических предметных областей. Согласно опросам, проведенных в 24 европейских странах, на настоящем этапе, 50%-ов инновационных высокопрофессионалов имеют инженерное образование или образование в точных науках; в бизнесе и финансовой сфере инновационные профессионалы в основном имеют образование в бизнесе, социальных науках и юриспруденции; среди тех, кто имеет инновационную работу - 60%-ов выпускники, имеющие инженерное образование, 58%-ов из них - в области сельского хозяйства, 50%-ов - выпускники педагогических профессий.

Как необходимо прививать системное мышление в рамках вузовской программы через практически все академические курсы?

Системное мышление должно проявляться в развитии следующих навыков и умений:

- рассмотреть явление, процесс, ситуацию как систему;
- выделить базовые элементы системы;
- рассмотреть систему не только в статике, но и в динамике; генерировать идеи, творчески применять ранее усвоенные знания в условиях системного анализа и синтеза;
- критически оценивать ситуацию в условиях системного подхода к анализу явлений; процессов;
- рефлексии в условиях реализации системного подхода к анализу явлений, процессов;
- анализировать и прогнозировать развитие системы;
- дать объективную самооценку эффективности системного мышления;
- самосовершенствования компонентов системного мышления (Шрагина Л.).

Фактически, перечисление вышеизложенных навыков и умений в процессе обучения показывает, что на современном этапе для высшего образования главным является не вопрос “Чему учить?”, а “Как учить?” Получается, что основным требованием системного

мышления является установление связи между элементами системы, а также между системой и внешней средой в рамках любого академического курса.

Заключение

Треугольник “образование-наука-инновация” держится именно на эксплуатации всех его частей с помощью выработки и развития системного или “многоэкранного” мышления как прямо, через собственно развитие системного мышления, как отдельной дисциплины, так и косвенно, с помощью различных методов употребления данного типа мышления в учебных курсах, исследовательских и проектных работах, семинарах и круглых столах с представителями невузовских предприятий. Необходимо пересмотреть те педагогические требования, которые предъявляются ко всем без исключения академическим курсам: необходимо проделать огромную работу, чтобы соединить продуктивную инновацию, интеллектуальные навыки, содержание образования и методы преподавания. Пересмотр отношения к образованию как источнику инноваций и двигателю инновационной экономики требует консолидации всех усилий академической и неакадемической сферы, которые прямо или косвенно соприкасаются с высшим образованием, и Армения должна сделать это в кратчайшие строки, чтобы преодолеть отсталость развития экономики и обеспечить различные ее отрасли высококвалифицированными кадрами, обладающими системным и инновационным мышлением, которые будут готовы к принятию самых эффективных решений, которые будут конкурентноспособны на международном рынке и которые будут способны к эффективному регулированию экономики, развитию страны. Производство знаний и среда, производящая знания, должны быть инновационными, если мы нацелены на создание инновационных продуктов и услуг, которые продвинут страну на новый уровень экономического развития.

Абстракт: В статье обсуждается важность развития системного мышления студентов в высшей школе для обеспечения прогресса инновационной экономики. Системное мышление, как основной «мягкий» профессиональный навык, должен быть включен во все курсы обучения, чтобы помочь потенциальным профессионалам выявить и как можно быстрее решить системные проблемы образования и общества, в целом.

Литература

1. Ананьева Т: 10 ключевых компетенций двадцать первого века: чему учить и чему учиться? <http://tananyeva.com/10-klyuchevyh-kompetentsij-dvadtsat-pervogo-veka-chemu-uchit-i-chemu-uchitsya/>
2. Греф Г. Лекция для слушателей бизнес-школы “Сколково” https://www.youtube.com/watch?v=ngxw_k-9mms
3. Делия В. П. Маилян И. А. Инновационное мышление предпринимателя и инновационная экономика”, http://www.ruace.ru/library/Presentations/Deliya_V_etc.pdf
4. Образование и культура. Ежегодник 2019-ого года Государственного статистического комитета Армении, стр. 15, <https://www.armstat.am/file/doc/99516753.pdf>
5. Орлова Л.Н. “Инновационная экономика: факторы и противоречия развития, уровни формирования”, Интернет-журнал «Науковедение», Том 7, №3 (2015), <https://naukovedenie.ru/PDF/83EVN315.pdf>
6. Стандарты системной инженерии: ISO/IEC/IEEE 15288:2015 (E), <http://system-school.ru/standarts>.
7. Сушков В. 16 навыков мышления инновационного лидера, 2014, http://www.xtriz.com/publications/Souchkov_InnovatorThinking_Skills.htm
8. Турханов А. Системная инженерия и системное мышление. http://system-school.ru/engineering_and_thinking
9. Фомченков Т. Взяли школой. Россия вошла в топ-25 инновационно развитых стран, Российская газета-Столичный выпуск N 7483 (20), <https://rg.ru/2018/01/30/rossiia-voshla-v-top-25-innovacionno-razvityh-stran.html>
10. Шрагина Л. Системное мышление в контексте педагогики и психологии мышления, <https://psyfactor.org/lib/shragina3.htm>
11. Bertalanffy L.von. General System Theory, Foundations, Development, Applications, George Braziller, 1969. – 153 pages.
12. Global Innovation Index 2018 Emergizing the World with Innovation, 11th Edition // Edited by Soumitra Dutta, Bruno Lanvin, and Sacha Wunsch-Vincent, Ithaca, Fontainebleau, and Geneva, 2018, 430 pages, https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2018.pdf
13. Three Top Ranked Universities in Estonia, https://www.mastersportal.com/ranking-country/8/estonia.html?fbclid=IwAR0j4VCYsZxgMoe1nvd7y2J_ddTcxbxKDA5RcATwxwI7GdZ_-7FUc4Te6so

14. World University Rankings, 2021,
https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2021/world-ranking#!/page/0/length/25/sort_by/rank/sort_order/asc/cols/stats

15. Universities of Estonia in World University Rankings, 2021
https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2021/world-ranking#!/page/0/length/25/locations/EE/sort_by/rank/sort_order/asc/cols/stats

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՈՐԱՐԱՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Լուսինե Ֆլյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
 պրոֆեսոր, Հյուսիսային համալսարան

Քրիստինե Գրիգորյան, բանասիրական գիտությունների
 թեկնածու, դոցենտ Երևանում Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական
 համալսարանի մասնաճյուղ

Հոդվածը քննարկում է բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների համակարգային մտածողության մշակման կարևորության խնդիրը՝ նորարարական տնտեսության հաջող զարգացումն ապահովելու նպատակով: Համակարգային մտածողությունը, որպես հիմնական «փափուկ» վերմասնագիտական հմտություն, անհրաժեշտ է ներդնել բոլոր դասընթացների մեջ՝ օգնելու ապագա մասնագետներին հնարավորինս արագ հայտնաբերելու և լուծելու համակարգային խնդիրները:

Հիմնաբառեր. համակարգային մտածողություն, համակարգային մոտեցում, նորարարական տնտեսություն, կրթություն, զարգացում:

SYSTEMS THINKING AS THE BASIS OF INNOVATIVE ECONOMY

Lusine Fljyan, Professor, Doctor of Philology,
Northern University, Armenia

Kristine Grigoryan
Associate Professor, Candidate of Philological Sciences, Branch of
Lomonosov Moscow State University in Yerevan

The article dwells on the importance of the cultivation of systemic thinking of students at higher education institutions to ensure the successful development of the innovative economy. The systemic thinking as a basic soft skill needs to be implemented in the core of all the courses to help the future specialists to identify the systemic problems and resolve them in the fastest possible period of time.

Key words: systemic thinking, systemic approach, innovative economy, education, development.


ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԻ
ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ում

Աստղիկ Պողոսյան
Հյուսիսային համալսարանի հայցորդ
ast.poghosyan@gmail.com

Մասնագիտական կրթական ծառայությունների մատուցումը ծախսատար գործընթաց է, և պահանջում ոչ միայն կարճաժամկետ, այլև երկարաժամկետ ֆինանսավորման պաշարների ձևավորում: Համալսարանների գործունեությունը ընդգրկում գործառույթներ է ենթադրում, կրթական ծրագրերի իրագործումից բացի ներառելով նաև գիտահետազոտական աշխատանքներ, ինչպես նաև հանրային կարիքները սպասարկող ծառայություններ: Իսկ սա ենթադրում է, որ բուհի գործունեության ֆինանսավորումը չի կարող սահմանափակվել սոսկ մեկ աղբյուրով, և այն պետք է լինի դիվերսիֆիկացված: Այս առումով, տեսության մեջ և գործնականում միշտ էլ քննարկման առիթ են դարձել, թե ֆինանսավորման որ աղբյուրներն են դոմինանտ լինելու մասնա-

գիտական կրթական համակարգի կայուն գործունեությունն ապահովելիս:¹

Այսպես, Գերմանիայում գործող մասնագիտական կրթական համակարգը գրեթե ամբողջովին ֆինանսավորվում է պետության կողմից, իսկ Հայաստանի Հնարապետությունում մատուցվող մասնագիտական կրթական ծառայություններում գերակշիռ մաս են կազմում մասնավոր կրթավճարները, որոնք իրականացվում են սովորողների ընտանեկան բյուջեից: ԱՄՆ-ում, համալսարանական կրթության ֆինանսավորման հիմնական մասն իրականացվում է ուսանողական վարկերի հաշվին: Բնականաբար, ՀՀ բուհական համակարգում սովորող ուսանողության և գիտաշխատողների համար ցանկալի կլինեք ամբողջությամբ օգտվել կրթության հանրային ֆինանսավորման աղբյուրներից, որոնք կատարվում են պետության կողմից, որն ի դեպ արվում էր Խորհրդային Միությունում: Սակայն մակրոտնտեսական առումով, անգամ եթե երկիրն ունենա անհրաժեշտ և բավարար բյուջետային ռեսուրսներ, այնուամենայնիվ որոշակիորեն սահմանափակումներ են գործելու ամբողջական պետական ֆինանսավորմամբ համալսարանական գործունեության ապահովման ոլորտում:




Գծապատկեր 1. Պետական ֆինանսավորմամբ թողարկվող մասնագետների հավասարակշռումը կրթության շուկայում²

¹ Модели финансирования вузов, под.ред. Беякова С.А., М., Технопечать 2005, 274 с.

² Կազմվել է հեղինակի կողմից:

Այսպես, երբ ամբողջականորեն հանրային միջոցներով է իրականացվում բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորումը, ապա դրանով իսկ ավելանում է ուսանողների թվաքանակը, սակայն, մյուս կողմից, նվազում է աշխատաշուկայում աշխատողների պահանջարկը (տես կոր D, գծապատկեր 1), որն, ի վերջո, պետությանը ստիպում է լրացուցիչ միջոցներ չտրամադրել մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ֆինանսավորմանը: Սակայն, մյուս կողմից, կտրուկ նվազեցնելով հանրային միջոցներով մասնագիտական կրթության ֆինանսավորումը՝ պետությունը կարող է հասնել նրան, որ բուհի շրջանավարտների կրճատմամբ աշխատաշուկայում աճի համապատասխան մասնագետների թվաքանակը (տես կոր O, գծապատկեր 1), և արդյունքում նորից անհրաժեշտություն առաջանա ավելացնելու կրթության պետական ֆինանսավորումը:




Գծապատկեր 2. Բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը³

³ Education at a Glance, How much public and private investment in educational institutions is there, OECD 2011, pp. 296-311.

Հետևաբար, տնտեսապես զարգացած երկրները, անգամ ունենալով անհրաժեշտ և բավարար ռեսուրսներ, չեն ձգտում մասնագիտական կրթության ֆինանսավորմանը անընդհատ լրացուցիչ միջոցների տրամադրման, և աշխատուշուկայում մասնագետների առաջարկի և պահանջարկի համարժեքությամբ ապահովման պարագայում՝ հավասարակշիռ վիճակ են ստեղծում հանրային ռեսուրսների հաշվին համալսարանական ուսանողների կրթությունը ֆինանսավորելիս (տես գծապատկեր 1, Q և F կետեր):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջազգային պրակտիկայում գրեթե բացակայում է բացարձակապես հանրային ռեսուրսներով մասնագիտական կրթության ֆինանսավորումը, և հիմնականում կիրառվում են ֆինանսավորման տարբերակված աղբյուրներ, որոնցից առանցքային են համարվում ուսանողական վարկերը և ուսանողական ընտանիքների կողմից կատարվող մասնավոր կրթավճարները (2): Այնուհանդերձ, որպես կանոն, զարգացած տնտեսություն ունեցող երկրներում հանրային ռեսուրսները դոմինանտ են համարվում մասնագիտական կրթության ֆինանսավորման համակարգում, քանի որ որակյալ մարդկային կապիտալի ձևավորումը այստեղ համարվում է առաջնահերթություն, և գտնվում է պետության հոգածության ներքո:⁴




Գծապատկեր 3 Մեկ ուսանողին ընկնող բարձրագույն կրթության տարեկան ծախսերի ֆինանսավորումը (եվրո):⁵

⁴ Клячко Т.Л. Модели финансирования высших учебных заведений, <https://cyberleninka.ru/article/n/modeli-finansirovaniya-vysshih-uchebnyh-zavedeniy/viewer>

⁵ Eurostat & Eurostudent 2014, p. 68.

Հատկանշական է արձանագրել նաև այն հանգամանքը, որ մասնագիտական կրթության ֆինանսավորման չափը պայմանավորվում է նաև տարբեր երկրներում մատուցվող կրթական ծառայությունների ինքնարժեքով: Բնականաբար, տնտեսապես զարգացող երկրներում այդ ինքնարժեքը համեմատաբար ցածր մակարդակի վրա է գտնվում, բայց անգամ նույնիսկ այս պարագայում զարգացած երկրները տարբեր մոտեցումներ են ձևավորում բարձրագույն մասնագիտական ծառայությունների ֆինանսավորմանը: Այսպես, եվրոպական բարձրագույն կրթության միասնական տարածքում ընդգրկված տնտեսական զարգացվածություն ունեցող տարբեր երկրներում մեկ ուսանողին ընկնող բարձրագույն կրթության տարեկան ծախսերի ֆինանսավորումը կարող է տարբերվել կրկնակի անգամ: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, թե համալսարանները որքանով են կարողանում ապահովել կրթական ծառայությունների մատուցման մրցակցային որակ, որն անշուշտ փախկապակցված է կրթության ֆինանսավորման չափերի հետ:

Ինչ վերաբերվում է Հայաստանի Հանրապետությունում գործող բարձրագույն մասնագիտական կրթական համակարգին, ապա հարկ է նշել, որ պետական ֆինանսավորումը ՀՆԱ-ի կազմում զգալիորեն զիջում է զարգացած երկրների համանուն ցուցանիշին (տես գծապատկեր 4): Եթե մասնագիտական կրթության պետական ծախսերը տնտեսապես զրգացած երկրների ՀՆԱ-ում կազմում են 6-8%, ապա ՀՀ-ում այն չի գերազանցում 3%-ի սահմանագիծը:



Գծապատկեր 4. Կրթության պետական ֆինանսավորման և կրթական ծառայությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)⁶


⁶ ԱՎԾ պաշտոնական կայք, //armstat.am

Այսինքն, մեր հանրապետությունում ձևավորվել է մի իրավիճակ, երբ պետությունը բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման հիմանական բեռը թողնում է մասնավոր ոլորտի վրա, որն էլ բուհերի ֆինանսական վիճակը կախվածության մեջ է դնում ուսանողական կրթավճարներից: Ավելին, վերջին տարիների ՀՀ բյուջեի կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա ծախսային մասում կրթական ծախսերի կրճատման միտում է նկատվում (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ պետական բյուջեում կրթության ծախսերի դինամիկան (հազ. դրամ)⁷

Ցուցանիշներ	2018 թ.	2019 թ.	2020 թ.
Բյուջեի ծախսեր, այդ թվում	1,465,200,573.2	1,648,063,122.3	1,855,697,119.5
Կրթություն	127,158,715.2	141,094,211.5	156,113,674.3
Կրթական ծախսերի տեսակարար կշիռ (%)	8,67	8,52	8,36



Գծապատկեր 5 Համալսարանական գործունեության ֆինանսավորման կառուցվածքը ՀՀ-ում:⁸

⁷ ՀՀ օրենքը պետական բյուջեի մասին, 2018, 2019, 2020:

⁸ Կազմված է հեղինակի կողմից կատարված հետազոտությունների հիման վրա:

Գնահատելով ՀՀ պետական բուհերի գործունեության ֆինանսական կառուցվածքը նորից արձանագրվում է այն փաստը, որ պետական ֆինանսավորումը իր տեսակարար կշռով երկրորդ տեղում է (23%), առաջին տեղը զիջելով ուսանողական կրթավճարներին (տես գծապատկեր 5): Դրան զուգահեռ, վերջին տարիներին բակալավրիատի կրթական ծրագրում վճարովի հիմունքներով սովորող ուսանողների տեսակարար կշռի աճը դեռ շարունակվում է (տես աղյուսակ.2):

Հատկանշական է նաև, որ ՀՀ պետական բուհերը վերջին տարիներին միշտ էլ հայտնվում են ՀՀ ՊԵԿ-ի կողմից հրապարակվող խոշոր 1000 հարկատուների ցանկում, որը մասնագիտական գրկանությունում չի դիտարկվում որպես ֆինանսական անարդյունավետ կառավարման երևույթ:⁹ Հեղինակները գտնում են, որ պետության կողմից պետական բուհերի գործունեությունը չպետք է դիտարկվի որպես հարկման ոլորտ, այն էլ այն չափի, որ համալսարանները համարվեն խոշոր հարկատուներ: Փաստարկվում է, որ դրանով ձևավորվում է մի իրավիճակ, երբ պետությունից լրացուցիչ ֆինանսական աջակցության ակնկալիքներ ներկայումս ՀՀ բուհերը չունեն, այլ ընդհակառակը՝ համալսարանները իրենց ֆինանսական միջոցների հաշվին պետության հարկային մուտքեր են ապահովում:

Աղյուսակ 2

Բակալավրիատի կրթական համակարգում վճարովի և պետաֆաթվերով ընդունելության տեղերի դինամիկան ՀՀ պետական բուհերում¹⁰

Դիմորդներ	2016/2017	2017/2018	2018/2019	2019/2020
Պետաֆաթվերով	23%	26%	21%	22%
Վճարովի համակարգ	67%	74%	79%	78%
	100%	100%	100%	100%

Գրականության մեջ նաև կարծիք է հայտնվում, որ ավանդական աղբյուրներից բացի (մասնավոր կրթավճարներ, պետական ֆինանսավորում, ուսանողական վարկեր), ՀՀ բուհերը պետք է որոնեն նաև այլընտրանքային աղբյուրներ, ինչպիսիք են ինդաումենթը, գիտահետազոտական աշխատանքների առևտրայնացումը, գործատուների կողմից խնամակալության ինստիտուտի կիրառումը, դրամաշնորհները, որոնք լայն կիրառում ունեն միջազգային պրակտիկայում:¹¹


⁹ Ճուղուրյան Ա., Խաչատրյան Ն. Կրթական ծառայությունների եկամուտների կառավարման հիմնախնդիրները բուհերում, Հանրային կառավարում, գիտական հանդես 3-4, 2013, էջ 98-105:

¹⁰ ԱՎԾ պաշտոնական կայք, //www.armstat.am

¹¹ Gevorgyan V., Situational evaluation issues of cash flow in universities, Finance and accounting, IATS scientific journal, 2(6), 2020, pp. 155-164.

Փորձը ցույց է տալիս, որ ՀՀ բուհերը դեռևս գործում են Խորհրդային Միությունից ժառանգած սկզբունքներով և որպես կանոն, մատուցում են կրթական ծառայություններ, հնարավորինս շրջանցելով գիտահետազոտական ոլորտը: Այն գիտահետազոտական աշխատանքները, որոնք կատարվում են ՀՀ բուհերում, հիմնականում կրում են ձևական բնույթ և իրատեսական չեն, քանի որ փոխկապակցված չեն գործող գիտական շուկայի հետ, և չեն զարգացնում գիտահետազոտական գործարքների առևտրայնացումը, որը կարող է բուհերին ապահովել լուրջ ֆինանսական ներհոսքեր: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ համալսարաններում իրականացվող գիտահետազոտական արդյունքները հիմնականում մնում են թղթի վրա և չեն վաճառահանվում, քանի որ խզված են տնտեսության ոլորտից:

Այնինչ, արևմտյան համալսարանները ներկայումս մեծ ուշադրություն են դարձնում հետազոտական գործունեության առևտրայնացմանը, դրանով իսկ լրացնելով իրենց ֆինանսական պաշարները: Այսպես, եվրոպական բարձրագույն կրթական տարածքին անդամակցող մի շարք երկրներում համալսարանների հետազոտական գործունեության արդյունքները շատ ավելի զգալի են ՀՆԱ-ում, քան կրթական գործունեությունը (տես գծապատկեր 6):



Գծապատկեր 6 Բարձրագույն կրթության և հետազոտությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2013 թ. (%)¹²

¹² The European Higher Education Area in 2014: Bologna Process Implementation Report, p. 25.

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արևմտյան բուհերում գիտության արդյունքները հիմնականում շուկայամետ են, ունենալով իրենց հասցեատերերը և սպառողները, հակառակ դեպքում, գիտության վերջնարդյունքները և դրանց վրա ծախսվող ռեսուրսները ուղղակի կփոշիանան: Բուհերում իրկանացվող հետազոտական վերջնարդյունքները կոնկրետ ժամանակահատվածում հասցեատեր չունենալու պատճառով կարող են հնանալ և հետագայում պարզապես կորցնել ներդրման գրավչությունը, ինչը որ ներկայումս տեղի է ունենում ՀՀ համալսարաններում:¹³

Արևմտյան բուհերում համալսարանական գործունեության ֆինանսավորման լուրջ գործիք է համարվում ինդուամենթը, որը մի քանի հարյուր տարվա պատմություն ունի: Բուհերը բարերարների և հաջողակ շրջանավարտների ներդրումներով ստեղծում են նպատակային ֆոնդեր, որոնք հանձնվում են հավատարմային կառավարման: Ներդրված գումարներով ձեռք են բերվում կայուն եկամտաբերությամբ ակտիվներ, որոնց տոկոսները ուղղվում են միմիայն բուհերի գործունեության ֆինանսավորմանը: Ստացվում է այնպես, որ համալսարանների նախաձեռնությամբ իրականացնելով ինդուամենթ, ձևավորվում է երկարաժամկետ օգտագործման կապիտալ, որի մայր գումարը անընդհատ աճում է նվիրատվությունների հաշվին, իսկ տոկոսային եկամուտը տրամադրվում է բուհերին: Ընդ որում, բուհերը անգամ իրենք են այդ կապիտալին մասհանումներ կատարում, իրենց կողմից արդեն իսկ իրականացված գիտահետազոտական արդյունքների վաճառահանումից:

Փորձը ցույց է տալիս, որ արևմտյան բուհերում, որոնց արդեն հաջողվել է ինդուամենթի շնորհիվ կուտակել հսկայածավալ կապիտալ, իրականացվել է գիտակրթական ծրագրերի շուրջ 20-25%-ի ֆինանսավորում, հենց այդ նպատակային կապիտալի եկամտաբերության հաշվին: Ընդ որում, շատ դեպքերում նպատակային կապիտալի օգտագործման ֆինանսական հատույցը կազմում է շուրջ 3%: Այսպես, ԱՄՆ-ում գործող թվով 80 համալսարանների կողմից ինդուամենթով ձևավորված նպատակային կապիտալի արժեքը գերազանցում է 1 միլիարդ ԱՄՆ դոլար սահմանագիծը: Միայն Հարվարդի համալսարանը, ներդրումային այդ ֆոնդից տարեկան ստանում է շուրջ 3,3% ֆինանսական եկամուտ, կամ 950 մլն ԱՄՆ դոլար, որով իրականացնում է տարբեր գիտակրթական ծրագրերի ֆինանսավորում:¹⁴ Ինդուամենթի պրակտիկան ներկայումս

¹³ Ճուլդուրյան Ա., Մխիթարյան Ա., Ասպիրանտուրայից դոկտորանտուրա, Հյուսիսայան համալսարանի հրատ., Երևան, 2016, էջ 24-27:

¹⁴ Гончарова М.А. Развитие эндюамент-фондов и их социально-экономический потенциал в контексте модернизации высшего образования в России, http://www.tsutmb.ru/nayk/nauchnyie_meropriyatiya/int_konf

կիրառվում է նաև Ռուսաստանի Դաշնությունում, որտեղ այդ գործընթացը ստացել է իր օրենսդրական կարգավորումը և հարկային արտոնությունները, որի արդյունքում շատ բուհեր կարողանում են լրացուցիչ ֆինանսավորում ստանալ:¹⁵

Ընդհանուր առմամբ, ինդուամենթ կիրառող բուհերը բացի ֆինանսական լրացուցիչ հնարավորություններ ձեռք բերելիս, կարողանում են նաև ունենալ մի շարք այլընտրանքային առավելություններ, որոնցից են.

- հաջողակ գործարարություն ծավալող շրջանավարտների հետ շփումների ակտիվացում և դրանց ֆինանսական հնարավորությունների օգտագործում՝ ի շահ բուհի զարգացման (ներկայումս աշխարհի բուհերի շուրջ 7 մլն շրջանավարտներ ներգրավված են այդ գործընթացում),¹⁶
- բուհերի կողմից երկարաժամկետ գիտակրթական ծրագրերի ֆինանսավորման կայունություն ապահովում, երբ ձևավորված նպատակային կապիտալը երաշխավորում է երկարաժամկետ ֆինանսավորման կայունություն,
- գործարար աշխարհի հետ բուհերի գործունեության սերտաճման կապերի ամրապնդում, ինչպես նաև միջազգային գիտակրթական ծրագրերին մասնակցության ֆինանսական կարողությունների ձեռքբերում:

Հարկ ենք համարում արձանագրել, որ ՀՀ-ում բուհերը դեռևս չեն կարողանում ինդուամենթի գործիքակազմը կիրառել, ելնելով մի շարք պատճառներից: Նախ, ինդուամենթի գործընթացը դեռևս իր լիարժեք օրենսդրական կարգավորումը չի ստացել մեր հանրապետությունում: Բացի այդ, հայաստանյան բուհերը թերևս հիմնականում լուծում են օերատիվ և կարճաժամկետ ֆինանսավորման խնդիրներ, և չունեն երկարաժամկետ ուղղվածությամբ անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ, որոնք կտրամադրվեին ինդուամենթով ձևավորվող կապիտալին: Վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ բուհերը հիմնականում չեն կարողանում իրենց գործունեությունը թիրախավորել երկարաժամկետ գործունեության նպատակադրումներին, քանի որ և հեռանկարային ծրագրերի ֆինանսավորման ուղղությամբ դժվարությամբ են ռեսուրսներ հայթայթում:¹⁷


¹⁵ Федеральный закон № 275-ФЗ «О порядке формирования и использования целевого капитала некоммерческих организаций» (принят 30.12.2006).

¹⁶ История фондов целевого капитала. URL.

<http://9000innovations.ru/analitika/endaument-mechty-rossiyskih-vuzov>

¹⁷ Գևորգյան Վ., Բուհի ֆինանսական պաշարների գնահատման բարելավման ուղիները, Պատմություն և քաղաքագիտություն, գիտական հանդես, 5(10) 2020, էջ 126-132

Ընդհանուր առմամբ, մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման միջազգային փորձի վերլուծության հիման վրա մեր կողմից հնարավոր է համարվում ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ֆինանսավորման աղբյուրների ձևավորումը ներկայացնել հիմնականում երկու ուղղությամբ՝ հանրային և մասնավոր, այսինքն կիրառել համալսարանական գործունեության ֆինանսավորման տարբերականացում (տես գծապատկեր 7): Ընդ որում, ֆինանսավորման հանրային և մասնավոր չափաբաժինների փոփոխությունները պարբերաբար տեղի կունենան, կախված երկրի սոցիալ-տնտեսական զարգացումներից:



Գծապատկեր 7 Բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ֆինանսավորման աղբյուրները¹⁸

Եզրակացություններ

Այսպիսով, մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձի ներդրման հնարավորությունները ՀՀ բուհական համակարգում պետք է իրագործվեն հետևյալ ուղղություններով:

Առաջին. անգամ տնտեսապես զարգացած երկրներում, որոնք հանրային ռեսուրսներով ինքնաբավ են անվճար մասնագիտական կրթություն մատուցելիս, հիմնականում կիրառվում է համամալսարանական համակարգի ֆինանսավորում տարբերականացված աղբյուրներով, որով անուղղակիորեն կարգավորումներ են իրականացվում կրթական շուկայում առկա պահանջարկի ու առաջարկի ոլորտում: Ուստի Հայաստանի Հանրապետությունը, նույնպես պետք է ուղիներ որոնի բարձրագույն մասնագիտական կրթության դիվերսիֆիկացված ֆինանսավորման աղբյուրների օպտիմալացման համար:

¹⁸ Կազմվել է հեղինակի կողմից:

Երկրորդ. միջազգային բուհերը իրենց հեռահար և ծախսատար գիտակրթական ծրագրերն իրականացնելիս ձևավորում են հանրային ֆոնդեր, իրականացնում են երկարաժամկետ դրամաշնորհային ծրագրեր, իսկ կարճաժամկետ նպատակադրումների իրագործման համար հիմնականում օգտվում են պետական բյուջեի ֆինանսավորումից և մասնավոր կրթավճարներից: Հետևաբար, ՀՀ բուհական համակարգը, որը ներկայումս ձևավորում է ֆինանսական պաշարներ հիմնականում կարճաժամկետ գիտակրթական ծրագրերի իրականացման համար, պետք է փոխառնի նպատակային հանրային կապիտալի ձևավորման և օգտագործման միջազգային առաջավոր փորձը, որպեսզի կարողանա արտահամալսարանական միջոցներով իրագործի հեռահար ծախսատար ծրագրեր:

Երրորդ. ելնելով միջազգային համալսարանական գործունեության առաջավոր փորձից, հայաստանյան բուհերը իրենց գործունեության ծանրության կենտրոնը կրթական ոլորտից պետք է տեղափոխեն գիտահետազոտական ոլորտ և կատարեն շուկայամետ հետազոտություններ: Այն հնարավորություն կտա ՀՀ բուհերին ձևավորելու զարգացման լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ, վաճառահանելով հետազոտական գործունեության արդյունքները՝ գիտության հայրենական և միջազգային շուկաներում:

Չորրորդ. միջազգային փորձը ցույց է տալիս, որ համալսարանները ձգտում են սերտ կապեր սահմանել գործատուների հետ ոչ միայն շրջանավարտների աշխատանքի տեղավորման, կրթական ծրագրերի որակական բարելավումների գծով, այլև գործարար աշխարհից ֆինանսական ներարկումներ ստանալու ակնկալիքներով, և այդ նպատակով, բուհերի կառավարման խորհուրդներում մեծ տեսակարար կշիռ են զբաղեցնում գործարար միջավայրի ներկայացուցիչները

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մասնագիտական կրթական ծառայությունների ֆինանսավորմանը տարբեր երկրներում տարբեր մոտեցումներ են ցուցաբերվում՝ լիարժեք հանրային ֆինանսավորումից մինչև մասնավոր ֆինանսավորում: Հոդվածում քննարկվում է համալսարանական գործունեության ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձը և դրա ներդրման հնարավորությունները ՀՀ-ում: Ներկայացվում են առաջարկություններ բուհերի ֆինանսական պաշարների արդյունավետ կառավարման ուղղությամբ:

Հիմնաբառեր. կրթական ծառայություններ, կրթության ֆինանսավորում, ֆինանսավորման մասնավոր և հանրային միջոցներ, ծախսերի վերահսկողություն

ПУТИ ВНЕДРЕНИЯ МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА ФИНАНСИРОВАНИЯ СИСТЕМЫ ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ В РА

Астхик Погосян

Соискатель Северного университета

В разных странах существуют разные подходы к финансированию услуг профессионального образования, от полного государственного до частного финансирования. В статье рассматривается международный опыт финансирования деятельности вузов, возможности его внедрения в Армении. Предлагаются пути эффективного управления финансовыми ресурсами университетов РА.

Ключевые слова: образовательные услуги, финансирование образования, государственное финансирование, контроль расходов.

Astghik Poghosyan

PhD student, Northern University

WAYS OF INTRODUCTION OF INTERNATIONAL VOLUNTEER EXPERIENCE FINANCING OF PROFESSIONAL EDUCATION SYSTEM IN RA

There are different approaches to funding vocational education services in different countries, from full public funding to private funding. The article discusses the best international experience in financing university activities, the possibilities of its implementation in Armenia. Suggestions are presented for the effective management of the financial resources of the universities.

Keywords: educational services, education financing, private-public funding, expenditure control.

**ՀՀ ԲԱՐՃՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ատոմ Մխիթարյան,

ֆիզ.մաթ. գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն

atom.mkhitaryan@isec.am

ՀՀ բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող գործող օրենքներն ընդունվել են շուրջ 20 տարի առաջ և, վստահաբար, արդեն «հնացած են» ու չեն արտահայտում հասարակական հարաբերությունների արդի վիճակը, ավելին՝ խոչընդոտում են զարգացումները: Մասնավորապես, «Կրթության մասին» ՀՀ օրենք¹⁹ [1] ընդունվել է 1999 թվականին, իսկ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը՝ 2004 թվականին²⁰ [2]: Այն սահմանում է երկաստիճան բարձրագույն կրթություն՝ բակալավրիատ և մագիստրատուրա: 2005 թվականին Հայաստանը պաշտոնապես միացել է Բոլոնիայի գործընթացին²¹ [3], որը ենթադրում է եռաստիճան բարձրագույն կրթություն՝ ներառելով նաև դոկտորանտուրան (ասպիրանտուրա՝ այսօրվա ՀՀ գործող օրենսդրության մեջ օգտագործվող տերմինաբանությամբ): Մյուս կողմից, 2015 թվականին ընդունվել է նոր խմբագրությամբ Սահմանադրությունը, որն հստակորեն սահմանում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման՝ ինքնավարության և ակադեմիական ազատությունների կարևորությունը²² [4, հոդված 38]:

Վերջին տարիներին իրականացվել են ոլորտում առկա վիճակի վերլուծությանն ուղղված մի շարք հետազոտություններ²³ [5], որոնց

¹⁹ «Կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 1999 թվականի ապրիլի 14-ին, ՀՕ -297:

²⁰ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, ՀՕ- 62-Ն:

²¹ The Bologna Process and the European Higher Education Area, [The Bologna Process and the European Higher Education Area | Education and Training \(europa.eu\)](http://TheBolognaProcessandtheEuropeanHigherEducationArea|EducationandTraining(europa.eu)),

[European Higher Education Area and Bologna Process \(ehea.info\)](http://EuropeanHigherEducationAreaandBolognaProcess(ehea.info))

²² ՀՀ Սահմանադրություն, ընդունված համաժողովրդական հանրաքվեով 06 դեկտեմբերի 2015 թվական:

²³ «Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում», Զեկույց, Երևան, 2012,

արդյունքները հստակ մատնանշում են բարձրագույն կրթության համակարգի միջազգային չափանիշներին համահունչ զարգացումը խոչընդոտող օրենսդրական բացերը: Այսպես, գործող օրենքներով սահմանված համապատասխան դրույթները չեն նպաստում բարձրագույն կրթության համակարգի ու հաստատությունների մրցունակության բարձրացմանը, չեն ապահովում կամ մասնակի են ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության համար միասնական մոտեցումների և սկզբունքների կիրառումը, բուհ-հետազոտություն-տնտեսություն բնականոն կապը, ինչպես նաև սահմանադրական պահանջից բխող՝ բուհերի ինքնակառավարման հետագա զարգացման ապահովման նպատակով նրանց ինքնավարության, ակադեմիական ազատությունների, հաշվետվողականության և ֆինանսավորման անհրաժեշտ լիարժեք մեխանիզմները:

Վերը նշված օրենսդրական բացերը լրացելու և բարձրագույն կրթության ոլորտի համաչափ զարգացմանն ուղղված քաղաքականության ձևավորման և իրականացման հիմքերը և պայմանները ապահովելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ-ում օրենքի մակարդակով ամրագրել.

-բուհերին պետական աջակցության տրամադրման սկզբունքները և մեխանիզմները,

-բուհերի գործունեության թափանցիկության և հրապարակայնության համար անհրաժեշտ մեխանիզմները՝ ապահովելու դրանց պատասխանատվությունը և հաշվետվողականությունը պետության ու հասարակության առջև,

-գիտական կազմակերպությունների հետ բուհերի արդյունավետ համագործակցության մեխանիզմները,

-բարձրագույն կրթության երկաստիճանից եռաստիճանի անցումը,

-հեռավար ուսուցման կազմակերպման հնարավորությունը,

-ուսանողի լրիվ կամ մասնակի բեռնվածությամբ ծրագրերի իրականացման հնարավորությունը,

-երկու և ավելի բուհերի՝ համատեղ կրթական ծրագրի իրականացման հնարավորությունը, համատեղ դիպլոմների շնորհումը,

-հատկապես երկրորդ և երրորդ մակարդակներում առանձին դասընթացների և կրթական ծրագրերի՝ օտար լեզվով դասավանդելու

«Կառավարման խնդիրների լուծումը՝ Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների կենտրոնում», Զեկույց, Երևան 2013

«Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության վրա ազդող գործոնների ռիսկի վերլուծություն», Զեկույց, Երևան, 2015:

հնարավորությունը, որը նպաստելու է բարձրագույն կրթության միջազգայնացմանն ու «արտահանմանը»:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգի կառավարման իրավական հիմքերի բարեփոխման հիմնական նպատակները, մեր կարծիքով, պետք է լինեն.

ա) բարձրագույն կրթության ոլորտում իրավահավասարության ապահովումը և խտրականության բացառումը, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը,

բ) բուհերի ինքնավարության, ակադեմիական և հետազոտությունների ազատության ապահովումը, ակադեմիական շարժունությանը նպաստելը,

գ) հայագիտական հետազոտությունների գերակայությունը,

դ) կրթված, զարգացած և մրցունակ անհատի ձևավորմամբ հասարակության կայուն զարգացմանը նպաստելը,

ե) Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին և Եվրոպական հետազոտական տարածքին ՀՀ բարձրագույն կրթության համակարգի ինտեգրվածության շարունակական ընդլայնումը՝ ազգային կրթական առաջադեմ ավանդույթների և նվաճումների պահպանմամբ ու զարգացմամբ, ինչպես նաև միջազգային լայն համագործակցության ապահովումը,

զ) ներկայիս ասպիրանտական ծրագրերի համապատասխանեցումը Զայցբուրգյան սկզբունքներին²⁴ [6]՝ դրանք ընդգրկելով բարձրագույն կրթության համակարգում որպես որակավորման երրորդ աստիճան,

է) կրթության համակարգի բարեփոխումների ու նորարարությունների խթանման հիմքերի ստեղծումը, բուհ-հետազոտություն-տնտեսություն կապի ամրապնդումը ու կարգավորող չափանիշների ներդրումը:

Այս նպատակներին հասնելու, բարձրագույն կրթության համակարգի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար հարկավոր է այնպիսի օրենսդրական հիմքերի ստեղծում, որտեղ հստակորեն կսահմանվեն՝

-բարձրագույն կրթության ոլորտում պետական քաղաքականության իրականացման հիմքերը և պայմանները,

-բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության կատարողականի արդյունքային ցուցիչների հիմքերը,

-կրթական, հետազոտական, տեխնոլոգիական և նորարարական գործունեություն իրականացնող բուհերին և գիտահետազոտական կազ-

²⁴ Bologna Seminar on “Doctoral Programmes for the European Knowledge Society”, Salzburg, 3-5 February 2005.

մակերպություններին պետական աջակցության տրամադրման սկզբունքները և մեխանիզմները,

- բուհերի գործունեության թափանցիկության և հրապարակայնության համար անհրաժեշտ մեխանիզմները և պահանջները,

- միջազգային պահանջներից ելնելով բարձրագույն կրթության ոլորտում անհրաժեշտ պետական վերահսկողության իրականացման հիմքերը, սկզբունքները և մեխանիզմները:

Այսպիսով, ՀՀ-ում բարձրագույն կրթության ոլորտի արդյունավետ կառավարման և միջազգային չափանիշներին համապատասխան դինամիկ զարգացման համար մեծ խոչընդոտ է գործող օրենսդրությունը: Այն ընդունվել է շուրջ քսան տարի առաջ և չի արտահայտում բարձրագույն կրթության ոլորտում այժմ գործող իրերի դրությունը: Մասնավորապես, բարձրագույն կրթությունը երեք մակարդակների փոխարեն ունի ընդամենը երկուսը՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Վերջին հինգ տարիների ընթացքում բարձրագույն կրթության օրենսդրական բարեփոխումների բոլոր նախաձեռնությունները տապալվել են հասարակական լայն համաձայնության մթնոլորտի բացակայության, ՀՀ-ում կառավարությունների ու դրանց մոտեցումների փոփոխությունների պատճառով: Մինչդեռ բարձրագույն կրթության, դրա արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրման համար օր առաջ անհրաժեշտ են համապատասխան օրենսդրական կարգավորումներ, որոնք հիմք կհանդիսանան ոլորտի կայուն զարգացման համար:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում հիմնավորվում է ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի իրավական հիմքերի շուտափույթ փոփոխության անհրաժեշտությունը: Առաջարկվում են բարձրագույն կրթության համակարգը կանոնակարգող իրավական ակտերի բարեփոխումների հիմնական ուղղություններն ու նպատակները: Դրանք կնպաստեն ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացմանը, բարձրագույն կրթության զարգացման արդի վիճակին և միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը, դինամիկ զարգացմանը:

Հիմնադրանք. Բարձրագույն կրթություն, բարեփոխում, Բոլոնիայի գործընթաց, բակալավրիատ, մագիստրատուրա, դոկտորանտուրա, Զալցբուրգյան սկզբունքներ

НАПРАВЛЕНИЯ РЕФОРМИРОВАНИЯ ПРАВОВЫХ ОСНОВ УПРАВЛЕНИЯ СИСТЕМОЙ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РА

Атом Мхитарян

кандидат физ. мат. наук

Международный научно-образовательный центр НАН РА

В статье обосновывается необходимость немедленного изменения правовой основы сферы высшего образования РА. Предложены основные направления и цели реформирования правовых актов, регулирующих систему высшего образования. Это будет способствовать повышению эффективности управления сферой, модернизацию системы высшего образования, соответствию международным стандартам, динамичному развитию.

Ключевые слова: высшее образование, реформа, Болонский процесс, бакалавриат, магистратура, докторантура, Зальцбургские принципы.

DIRECTIONS FOR REFORMING THE LEGAL BASIS OF RA HIGHER EDUCATION SYSTEM MANAGEMENT

Atom Mkhitaryan

International Scientific-Educational Centre of NAS RA

. The article substantiates the need for an immediate change in the legal basis of the RA higher education sphere. The main directions and goals of the reforms of the legal acts regulating the higher education system are proposed. It will contribute to the increasion of the efficiency of the sphere of HE management, the modernisation and dynamic development of higher education system, compliance with international standards.

Kew words: higher education, reforms, Bologna process, bachelor, master, doctor, PhD, Salzburg principles.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հրաչյա Դանիելյան

Հյուսիսային համալսարանի հայցորդ

hro@rambler.ru

Էլեկտրոնային վճարային գործառնությունների կարգավորումների տարբեր երկրների կենտրոնական բանկերը միանշանակ մոտեցում չեն ցուցաբերում, սակայն ընդհանուր առմամբ առավել զգուշավորությամբ են մոտենում այս ոլորտին, փորձելով խուսափել փողի անկառավարելի էմիսիայից, վճարահաշվարկային հնարավոր խարդախությունների ռիսկերից: Հատկապես, մեր օրերում, երբ էլեկտրոնային վճարումները զարգացման բուռն դրսևորումներ են ցուցաբերում, կապված արագության, ցածր ծախսատարության, վիրտուալ միջավայրում հասանելիության հետ, կենտրոնական բանկերը փորձում են հնարավորինս բարելավել այդ ոլորտի կարգաբերումները, ընդունել համընդհանուր չափանիշներ, իրականացնել փոխհամաձայնեցված վերահսկողություն: Սակայն, այդ ամենին խոչընդոտում են էլեկտրոնային վճարումների գծով դեռևս առկա անորոշություններն ու կարգաբերումները, ինչպես նաև էլեկտրոնային փողերի շուկայի առանձնահատկությունների ոչ բավարար ուսումնասիրությունները:

Այս առումով, տարբեր տարածաշրջաններում անհրաժեշտություն ծագեց պետական մակարդակով կարգավորելու էլեկտրոնային վճարային հարաբերությունները: Դեռևս 2000 թվականին Եվրոպական պառլամենտը հրապարակեց էլեկտրոնային փողեր թողարկող ինստիտուտների բիզնես գործունեության կարգաբերման հրահանգ, որով կարգավորվում էր էլեկտրոնային փողերի էմիսիայով զբաղվող կազմակերպությունների գործունեությունը:¹ Այդ փաստաթղթով առաջին անգամ պաշտոնապես ամրագրվեց էլեկտրոնային փողը որպես էլեկտրոնային կրիչների վրա արձանագրվող արժեք, որի մեծությունը չպետք է նվազ լիներ թողարկման համար անհրաժեշտ իրական միջոցների ծավալից, և որը ընդունվում է որպես վճարամիջոց ոչ միայն թողարկողի, այլև ուրիշ սուբյեկտների կողմից: Կարգաբերման այդ հրանգով նաև էլեկտրոնային փողը հստակ առանձնացվեց միջոցների ավանդրումներից, որոնք որ գտնվում էին ավանդագրման երաշխիքների ներքո՝ սահմանված պետության կողմից: Հրահանգ 2000/46EC-ի առանցքային կարգավորումներից էր էլեկտրոնային փող թողարկող կազմակերպությունների հաշվետվողականության

¹ Directive 2000/46EC of the European parliament and of the Council of 18 September 2000 to the taking up, pursuant on the prudential of the business of electronic money institutions.

պահանջը, երբ նրանք կենտրոնական բանկին պարբերաբար հաշվետվություններ պիտի ներկայացվեին կապիտալի չափի, ակտիվների կառուցվածքի, հաճախորդներին սպասարկման թողունակության, գործունեության սահմանափակումների վերաբերյալ:

Խնդիր առաջացավ նաև կանխարգելելու էլեկտրոնային վճարային համակարգում փողերի լվացման և տնտեսական հանցագործությունների ռիսկերը, և այս նպատակով Եվրապաշխարհում հրապարակեց նոր հրահանգ, որը պետական կարգավորիչ գործառնություններ էր պարունակում:² Ժամանակի ընթացքը ցույց տվեց, որ որոշ առումներով 2000/46EC հրանգը այլևս չէր համապատասխանում էլեկտրոնային փողերի շուկայի կարգավորումներին, հատկապես խոչընդոտելով տեխնիկական նորամուծությունների ներդրմանը, և այդ նպատակով ընդունվեց 2009/110EC հրահանգը,³ որն արդեն պետական մակարդակով կարգավորում էր ինովացիոն տեխնոլոգիաներ կիրառող նոր մասնակիցների մուտքը էլեկտրոնային փողերի շուկա և հավասար պայմաններ էր ստեղծում ֆինանսական ինստիտուտների մրցակցության համար: Որպես բարելավումներ, 2000/46EC հրահանգի նկատմամբ 2009/110EC հրահանգը առաջ քաշեց նաև էլեկտրոնային փող թողարկող կազմակերպությունների կապիտալի նվազագույն պահանջի մեղմացումը, մեկ միլիոն եվրոյից այն նվազեցնելով 350 հազ եվրոյի: Բացի այդ, մեղմացվեցին նաև կապիտալի կառուցվածքի որակական պահանջները, որը ապահովեց միջին և փոքր ֆինանսական կազմակերպությունների մուտքը էլեկտրոնային փողի մրցակցային շուկա:⁴

Ի տարբերություն Եվրամիության տարածքի, ԱՄՆ-ում էլեկտրոնային փողերով գործառնությունների կարգավորումները իրականացվեցին ոչ թե ֆեդերալ, այլ նահանգային մակարդակով:⁵ Այս դեպքում արդեն առավելապես շեշտադրում էր կատարվում էլեկտրոնային փողերով գործարքների ապահովվածությանը, առևտրային բանկերի և ոչ բանկ կազմակերպությունների համար սահմանելով էլեկտրոնային վճարումների համակարգի մուտքի և ելքի չափանիշներ, վճարամիջոցների որոշակի շրջանակ: Ընդ որում, կառավարության պահանջով 10 000 ԱՄՆ դոլարը գերազանցող էլեկտրոնային գործարքների տեղեկատվությունը փոխանցվում էր հարկային մարմիններին: Այնուհետև պահանջ զգացվեց

² Directive 2005/60/EC of the European parliament and of the Council of 26 October 2005 on the prevention of the use of the financial system for the purpose of money laundering and financial terrorism.

³ Directive 2009/110/EC of the European parliament and of the Council of 16 September 2009 on the taking up pursuit and prudential supervision of the business electronic money institution.

⁴ Козенко Ю.А. Виртуальное золото как инновационный инструмент антикризисного финансирования / Ю.А. Козенко // Бизнес. Образование. Право. Вестник Волгоградского института бизнеса, 2012, № 4, стр. 190– 195.

⁵ Electronic funds transfers (Regulation E), 61 Fed. Reg. 19, 696, 1996.

երկրի մասշտաբով էլեկտրոնային վճարային գործարքների միասնական դաշտ ստեղծելու, և այդ նպատակով ԱՄՆ-ում կիրառվեց դրամային միասնական գործարքների ակտ⁶, որի առանձնահատկությունը կայացավ նրանում, որ վճարային ինստիտուտների կողմից էլեկտրոնային փողերի ձևավորման հիմք ընդունվեցին ոչ միայն կանխիկի մուտքագրումները, այլև դրամական միջոցների համարժեքները, որոնք ապահովված էին ֆեդերալ բանկի կողմից: Առաջացավ «դրամական արժեք» հասկացությունը, որը ենթադրում էր ոչ միայն կանխիկ, այլ ոչ ռիսկային փոխանակման ենթակա ֆինանսական ակտիվ: Հետևաբար, ի տարբերություն Եվրոպայի, ԱՄՆ-ում էլեկտրոնային փողի շուկան դարձավ առավել մրցակցային, քանի որ էլեկտրոնային փողի էմիսիայի գործընթացում ակտիվների ներգրավման պետության կողմից թույլատրելի դիապազոնը այստեղ առավել ընդգրկուն դարձավ, քան նախատեսված էր հրանագ 2000/46EC-ով:

Էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների պետական կարգավորման ասիական մոդելը ունեցավ որոշակի առանձնահատկություններ: Այսպես, վճարային համակարգի վերահսկողության սինգապուրյան ակտով էլեկտրոնային փողերի սահմանման այլ մոտեցում ցուցաբերվեց, որի առանցքային կետերը կայացան հետևյալում.⁷

- Էլեկտրոնային փողերը հանդիսանում են հատուկ սարքերում կրիչներում արձանագրված կանխավճարներ,
- Էլեկտրոնային փողերը հանդիսանում են վճարումային գործարքների կայացման երաշխիքներ:

Հատկանշական է, որ վճարային համակարգի կարգավորման սինգապուրյան ակտը նախատեսեց գործարքների ոլորտային սահմանափակում, եթե էլեկտրոնային փողերով գործարքների շրջանառությունը տարեկան չի գերազանցում 30 մլն ԱՄՆ դոլարը: Միայն այդ սահմանագծի գերազանցման դեպքում է էլեկտրոնային վճարային ինստիտուտների թույլատրվում բազմաոլորտային վճարումներ: Բացի այդ, էլեկտրոնային փող թողարկողները պարտավոր էին իրականացնել հետևյալ պահանջները.


- օգտագործողների էլեկտրոնային քսակներում ապահովել առավելագույնը \$1000 դրամի մնացորդ,
- միանգամյա գնումների վճարումների առավելագույն շեմը սահմանել \$20000,
- իրականացնել վճարումների ամենօրյա մոնիտորինգ և կասկածելի գործարքների տեղեկատվությունը անմիջապես փոխանել պետական համապատասխան գերատեսչություններին:⁸

⁶ Uniform Money Services Act, July 28, 2000.

⁷ The payment system (Oversight Act PSOA) #7, March 2006, Singapore.

⁸ Кочергин Д.А. Электронные деньги: организация эмиссии, проведение платежей,

Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների կարգավորման դաշտը հիմնականում գործում է ընդունված օրենքների և ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգերի հիման վրա, հաշվի առնելով նաև ոլորտին առնչվող միջազգային համընդհանուր կարգաբերումները (տես գծապատկեր 1): Ընդհանուր առմամբ, ՀՀ էլեկտրոնային վճարային համակարգի կարգավորման դաշտը, մեր կարծիքով, առավել սերտ է առնչվում Եվրոպական համակարգին:



Գծապատկեր 1 Էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների կարգավորման օրենսդրական դաշտը⁹

Այսպես, համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, էլեկտրոնային փողը թողարկողի նկատմամբ դրամական պահանջ է՝ ստացված դրամական միջոցների դիմաց, որոնց արժեքը չի կարող ավելի փոքր լինել, քան թողարկված էլեկտրոնային փողի արժեքը: Արձանագրվեց նաև, որ թվայնացված փողը դրամական արժեքն է, որը պահվում է էլեկտրոնային սարքի վրա, ընդունվում է որպես վճարամիջոց թողարկողից տարբերվող այլ անձանց կողմից, իսկ շահառուն վճարման ստացման վերջնական հասցեատերն է: Այսպիսով, էլեկտրոնային փողի այս սահմանման մեջ, ի տարբերություն վերոնշյալ եվրոպական, ամերիկյան կամ ասիական ձևակերպումներից, ընդգծվում է օգտագործողի կողմից թողարկողի նկատմամբ դրամական պահանջը և վերջնական հասցեատեր շահառուի դերակատարման կարևորությունը:

Բացի այդ, ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների նկատմամբ կենտրոնական բանկի կողմից սահմանվեցին են հստակ

регулирование денежного оборота, СПбГУЭФ, 2006, стр. 25–35.

⁹ Կազմվել է հեղինակի կողմից:

տնտեսական նորմատիվներ: Այսպես, դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա, կամ վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացման լիցենզիա ունեցող վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվ՝ հարյուր միլիոն դրամի չափով: Կենտրոնական բանկի խորհուրդը վճարահաշվարկային կազմակերպությունների համար կարող է սահմանել իրացվելիության տնտեսական նորմատիվ՝ բարձր իրացվելի ակտիվներ և ընթացիկ պարտավորություններ հարաբերակցության նվազագույն 100%-ի չափով:¹⁰

Հատկանշական է նաև, որ Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների համար սահմանել դրամական միջոցներ դեպոնացնելու կամ անվերադարձելի բանկային երաշխիք ներկայացնելու պահանջ: Ընդ որում՝ Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել դեպոնացվող գումարի նվազագույն չափը, ինչպես նաև այն գործակիցը, որը կարող է կիրառվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող յուրաքանչյուր կազմակերպության համար՝ ելնելով տվյալ կազմակերպության կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների քանակից, փոխանցումների ծավալներից աշխարհագրությունից, կիրառվող վճարային գործիքից: Այդ գործակիցը կարող է սահմանվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող յուրաքանչյուր կազմակերպության կամ կազմակերպությունների խմբերի համար:¹¹

Փաստորեն, էլեկտրոնային վճարահաշվարկային կազմակերպությունների համար դեպոնացված այդ գումարը, հանդիսանում է երաշխիք, որը օգտագործվել է բացառապես Կենտրոնական բանկի կողմից դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության պարտավորություններն այն անձանց նկատմամբ մարելու համար, որոնք դրամական միջոցներ են տրամադրել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը, կամ որոնց օգտին դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը դրամական միջոցներ է ստացել՝ դրամական փոխանցումներ կատարելու նպատակով: Ավելին, դեպոնացված այդ գումարները կամ բանկային երաշխիքները չեն կարող օգտագործվել օգտագործվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակեր-

¹⁰ Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, հոդ. 23, 2004:

¹¹ Նույն տեղը:

պության այլ պարտավորությունների մարման համար: ¹² Դրանք չեն կարող օտարվել, գրավադրվել կամ այլ կերպ օգտագործվել դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպության ընթացիկ գործունեության ժամանակ: ¹³ Այսպիսով, երաշխիքի բենեֆիցիարը հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկը, որի պահանջ է նաև, որ երաշխիքը տրամադրվի առնվազն մեկ տարի ժամկետով:

ՀՀ կենտրոնական բանկի մեկ այլ պահանջով, դրամական միջոցների դեպոնացումն իրականացվում է ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերից որևէ մեկում դեպոնացման համար բացված բանկային հաշիվը դրամական միջոցներով համալրելու միջոցով՝ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող և տվյալ բանկի միջև կնքված բանկային հաշվի սպասարկման պայմանագրի հիման վրա, որտեղ պետք է հստակ սահմանված լինեն սպասարկման հետևյալ պայմանները՝

1) հաշվում առկա դրամական միջոցները հանդիսանում են դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության՝ դրամական (փողային) փոխանցումների գծով պարտավորությունների մարման երաշխավորման միջոց, որը չի կարող գրավադրվել կամ օգտագործվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ընթացիկ տնտեսական գործունեության ժամանակ,

2) հաշիվը վարվում է ՀՀ դրամով,

3) հաշվի վրա միջոցների մուտքագրման սահմանափակումներ չկան,

4) հաշվից ելքերը կարող են կատարվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գրավոր կարգադրությամբ՝ միայն Կենտրոնական բանկի թույլտվության առկայության դեպքում, որը կարող է դրվել կարգադրության վրա կամ ներկայացվել Կենտրոնական բանկի կողմից վավերացված առանձին նամակով,

5) հաշիվը չի կարող փակվել առանց Կենտրոնական բանկի թույլտվության,

6) դեպոնացված միջոցների բանկային հաշիվը վարող բանկը չի կարող տվյալ հաշվից մարել վճարահաշվարկային կազմակերպության՝ իր կամ այլ անձանց նկատմամբ եղած պարտավորությունները: ¹⁴

¹² Նույն տեղում:

¹³ Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության սահմանվող տնտեսական նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը, ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 17/02, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 269-Ն որոշում:

¹⁴ Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության սահմանվող տնտեսական նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը, ՀՀ կենտրոնական

Հայաստանի Հանրապետությունում կենտրոնական բանկի կողմից կանոնակարգվում է նաև էլեկտրոնային փող թողարկողների ներկայացվող պայմանները և պահանջները, համաձայն որոնց էլեկտրոնային փող թողարկող կազմակերպությունը կարող է թողարկել միայն էլեկտրոնային փողերի փակ համակարգով գործող էլեկտրոնային փողեր, էլեկտրոնային փող թողարկող կազմակերպությունը չի կարող ներգրավված դրամական միջոցների դիմաց հաճախորդներին վճարել տոկոսներ, բոնուսներ կամ տրամադրել գեղյեր, ոչ բանկ կազմակերպությունը տրամադրել փոխառություններ հաճախորդներին:¹⁵ Ֆինանսական բոլոր կազմակերպությունների համար պետք է ընդունելի լինի, որ թողարկված մեկ միավոր էլեկտրոնային փողը համարժեք է ՀՀ 1 դրամին: Ընդ որում, արգելվում է դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպության գործունեության իրականացման վայրից դուրս իրականացնել էլեկտրոնային փողի թողարկում: Առավել ևս, երբ պահանջ է դրվում, որ հիմնական սերվերը գտնվի ՀՀ տարածքում:

Էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների մատուցման գծով ՀՀ կենտրոնական բանկը, ինչպես միջազգային պրակտիկայում, նույնպես ներկայացնում է որոշակի գումարային սահմանափակումներ: Այսպես, թողարկողի կողմից ձևավորված՝ յուրաքանչյուր օգտագործողին նույնականացնող Հաշվառման Հաշվում պահվող էլեկտրոնային փողը յուրաքանչյուր պահի չի կարող գերազանցել 1 000 000 ՀՀ դրամի համարժեքը՝ անկախ յուրաքանչյուր օգտագործողի անունով բացված հաշիվների քանակից: Իսկ օգտագործողի Հաշվառման Հաշվում պահվող մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փողը յուրաքանչյուր պահի չի կարող գերազանցել 200 000 ՀՀ դրամի համարժեքը:¹⁶

Հատկանշական է, որ ՀՀ կենտրոնական բանկը, ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության թույլատվության համար պահանջում է գործարարության ռազմավարության տեղեկանք, որտեղ պետք է ներկայացվեն.

բանկի կանոնակարգ 17/02, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 269-Ն որոշում, կետ 24:

¹⁵ Էլեկտրոնային փող թողարկելու թույլտվության տրամադրման, կասեցման և դադարեցման կարգն ու պայմանները, էլեկտրոնային փող թողարկողներին ներկայացվող պահանջները, ՀՀ ԿԲ կանոնակարգ 16/1, 2010 թ. ապրիլի 13, թիվ 74-Ն որոշում:

¹⁶ Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջները, ՀՀ ԿԲ կանոնակարգ 16/02, 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն որոշմամբ:

- ոլորտի վերլուծություն (ոլորտի մասնակիցները, հիմնական մրցակիցները),
- ֆինանսական այն շուկաների նկարագիրը, որոնցում վճարահաշվարկային կազմակերպությունը պատրաստվում է իրականացնել իր գործունեությունը (հեռանկարային զարգացման միտումները, ռազմավարության հիմնական սկզբունքները),
- հաճախորդների խմբի բնութագիրը և կանխատեսվող թիվը,
- կազմակերպության մրցակցային դիրքավորումը,
- գործունեության խթանման ռազմավարություն,
- ծառայությունների մատուցման գնային ռազմավարությունը,
- ներդրումային նախատեսվող ծրագրերը,
- առաջիկա երեք տարիների համար նախատեսված եկամուտների և ծախսերի հաշվարկը,
- բնագավառում առաջացող ռիսկերի գնահատումը և դրանց կանխարգելման ուղիները:¹⁷

Եզրակացություններ

Այսպիսով, էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների կարգավորման միջազգային և հայաստանյան փորձի ուսումնասիրությունների հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների:

Առաջին. գործնականում միանշանակ մոտեցում չի ցուցաբերվում էլեկտրոնային փողերի ճանաչման հարցում: Եվրոպայում այն դիտարկվում է որպես վճարամիջոց, ԱՄՆ-ում՝ դրամական միջոցների էլեկտրոնային փոխանցումների գործիք, որն առավել մոտ է կանգնած չեկերով գործարքների իրականացման ոլորտին, իսկ ասիական երկրներում էլեկտրոնային փողերը առավելապես ընդունվում են որպես էլեկտրոնային կրիչներում պահվող կանխավճարներ՝ ինտերնետ միջավայրում գնումներ կազմակերպելու համար: Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային փողը առավելապես դիտարկվում է որպես թողարկողի նկատմամբ դրամական պահանջ՝ վերջինիս կողմից ստացված դրամական միջոցների դիմաց:

Երկրորդ. տարբեր տարածաշրջաններում գործում են էլեկտրոնային վճարային համակարգերի կարգավորման տարբեր մոտեցում-

¹⁷ «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը », կանոնակարգ 19-ի հավելված, հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ:

ներ: Եթե Եվրոպայում և ասիական երկրներում առավել խստապահանջ նորմատիվներ են սահմանվում էլեկտրոնային վճարային շրջանառության համար, ապա ԱՄՆ-ում դրանք մեղմացված են և պետության կողմից էլեկտրոնային շուկայի վրա ներագդեցությունը համեմատաբար առավել թույլ է:¹⁸ Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա այստեղ վճարահաշվարկային գործունեության իրականացման համար սահմանափակումները առավելապես շեշտադրվում են տնտեսական նորմատիվներին, որոնք առնչվում են կազմակերպությունների կապիտալի թույլատրելի նվազագույն չափին և հրատապ իրացվելիության տոկոսային սահմանագծին:

Երրորդ, ՀՀ-ում էլեկտրոնային փող թողարկող կազմակերպությունների գործունեության հնարավոր ռիսկային վնասների փոխհատուցման համար կենտրոնական բանկի կողմից պահանջվում է գումարային դեպոնացում, որը հանդիսանում է պետության կողմից դրամական երաշխիք՝ այդ կազմակերպությունների պարտավորությունների մարման համար: Սակայն, մյուս կողմից, դեռևս հստակեցում է պահանջվում դեպոնացվող գումարների նվազագույն չափաբաժինների գծով, նամանավանդ, երբ կիրառվում են դեպոնացվող գումարների ճշգրտման գործակիցներ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող յուրաքանչյուր կազմակերպության համար, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից ցուցաբերելով սուբյեկտիվ մոտեցումներ: Կարծում ենք, որ ՀՀ կենտրոնական բանկը պետք է հստակեցնի և հրապարակի դեպոնացվող գումարների նվազագույն չափաբաժնի, և այն ճշգրտող գործակիցների հաշվարկման կարգը՝ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների համար:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Էլեկտրոնային փող թողարկող կազմակերպությունների գործունեության թույլատրության համար տեղեկանքի ձևով ՀՀ կենտրոնական բանկը պահանջում է տեսանելի ապագայում տնտեսական գործունեության կայունության հիմնավորման վերլուծություն ու կանխատեսումների հաշվարկ: Եվ քանի որ յուրաքանչյուր կազմակերպություն կարող է անհատական մոտեցում ցուցաբերել գործարարության ռազմավարական արդյունքների չափայնության մեթոդաբանության գծով, հաշվարկների հիմքում դնելով սուբյեկտիվ՝ նույնիսկ իր համար շա-

¹⁸ Аксенов В.С., Захарова Н.В. Государственное регулирование обращения электронных денег зарубежных стран, <https://cyberleninka.ru/article/n/gosudarstvennoe-regulirovanie-obrascheniya-elektronnyh-deneg/viewer>

հեկան մոտեցումներ, ուստի հողվածում առաջարկում ենք ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակել էլեկտրոնային կազմակերպությունների մեկնարկակին իրականացվող կանխատեսվող ռազմավարական տնտեսական արդյունքների չափայնությունը կանոնակարգող ուղեցույց, որով հնարավորինս կչեզոքացվեն տնտեսական գործունեության հիմնավորման սուբյեկտիվ մոտեցումները:

Հիմնաբառեր. էլեկտրոնային փող, էլեկտրոնային փողի հիմնահարցերի կառավարում, էլեկտրոնային փողի ներդրման կանոնակարգեր:

ПРОБЛЕМЫ РЕГУЛИРОВАНИЯ ПЛАТЕЖНО-РАСЧЕТНЫХ УСЛУГ

Грачя Даниелян

Соискатель Северного университета

Центральный банк Республики Армения требует анализа и обоснования прогнозов стабильности экономической деятельности в обозримом будущем в виде справки о деятельности организаций, выпускающих электронные деньги. А поскольку каждая организация может применять индивидуальный подход к методологии измерения стратегических результатов бизнеса, основанный на субъективных, даже выгодных подходах, в этой статье предлагается Центральному банку Армении разработать руководство, регулирующее прогнозируемые стратегические экономические результаты. С этим, субъективные подходы к обоснованию хозяйственной деятельности будут максимально нейтрализованы.

Ключевые слова: электронные деньги, управление выпуском электронных денег, правила внедрения электронных денег.

ISSUES OF ELECTRONIC PAYMENT SETTLEMENT SERVICE REGULATION

Hrachya Danielyan

Phd student of Northern University

The Central Bank of the Republic of Armenia requires an analysis of the substantiation of the stability of economic activity in the foreseeable future and the calculation of forecasts in the form of a certificate for the activity of e-money issuing organizations. And since each organization can take an individual approach to the methodology of measuring the strategic results of business, based on subjective, even beneficial approaches, so in this article is suggested the Central Bank of Armenia to develop a guide regulating the forecasted strategic economic results. Subjective approaches to substantiation of economic activity will be neutralized as much as possible.

Key words: electronic money, management of electronic money issues, regulation of electronic money implementation.

THE MANAGEMENT OF THE PAYMENTS AND HIERARCHY OF THIS SYSTEM

Behnood Sourì

PhD student, European University

behnood.souri@gmail.com

Payment systems contribute to the effective implementation of monetary policy, financial stability and economic development. Having an efficient payment and settlement system speeds up the money flow, acts as a link between financial intermediation institutions, increases the clarity and efficiency of remittances, and, most importantly, significantly reduces the likelihood of financial risks. The efficient and reliable operation of payment and settlement systems is conditioned not only by the development of the economy of commercial banks and financial institutions, but also by the economy of the whole state in general. If we compare the economy with the back of the human body, the payment system can be compared with the

burning vessels that feed the functioning organism with the necessary resources for life, in this case with money.¹⁹

Therefore, the functions of organizing the payment and settlement system are performed by the operator, ie the participant of the payment and settlement system, who is responsible for the operation of the payment and settlement system, who is authorized by other participants of the system to clear (or) final settlement.

As a rule, the formation and subsequent control of payment and settlement systems is carried out by the central bank, as failures in the operation of these systems can reduce the confidence of the population and economic entities in financial institutions. In such cases, financial institutions may face serious difficulties in fulfilling their financial obligations to their partners, and then problems will arise not only in the banking system, but also in the financial system as a whole, as a result of which the financial market will be shaken.

It is also noteworthy that the payment system does not only involve the transfer of funds between entities involved in the economic sphere. The payment part of the system of course assumes a "money transfer" function, but the payment and settlement part generally assumes "money transfer + services". In this regard, according to the current legislation, the payment and settlement system is the totality (generality) of the payment instruments, clearing, transfer of funds, final rules, procedures, procedures, the latter, which ensures the payment to the beneficiary.²⁰ Like the components of any system, the components of the payment and settlement system are interconnected, complementing each other to ensure the stable operation of the system (see Figure 1).

An important part of cash settlement is the payment made to one of the participants in the transaction, same the transfer of value. The totality of all cash payments is summed up in terms of cash or payment turnover. The payment cycle of the country includes all monetary calculations related to the receipt of funds for the goods, goods, services, works sold, as well as the receipt and return of funds through the financial-credit system, including the organization-population relationship (budget revenue generation, Budget allocations and transfers, loan resources development, loan allocation and repayment, payments to the population: salaries, pensions, benefits, other payments, citizen relations, internet purchases, etc.).

¹⁹ <https://ideas.repec.org/b/sea/rstudy/rp90.html>.

²⁰ Law of RA "Payment and Settlement Systems and Organizations, 2004, Article 3




Figure 1 The essential stages of the payment settlement system activity.²¹

The organization of calculations has a significant socio-economic significance. Doing so on time allows organizations to successfully complete their working capital cycle, transfer money from their commodity equity (C-M), as well as enable purchasing organizations to make uninterrupted payments (M-C) for commodity values acquired. It is noteworthy that in recent years, Internet banking has been developing rapidly, when the population not only saves time by actively shopping online, paying utility bills, but also contributes to the acceleration of trade, accelerating the turnover of capital.

Transactions included in the payment and settlement system are multi-layered, which are related to currency transfers in interbank intra-bank or international domains. These functions will not occur unless payment instruments are used. A payment instrument is a paper, electronic, voice message, document, or agreement that allows a holder or user to make payments, regardless of the form and method of use, application, or execution. As a rule, payment instruments are debit and credit (see Figure 1). The use of a credit payment instrument is initiated by the payer, during which the payment document (instrument) moves in the same direction with the transferred funds. Debit transfer is initiated by the recipient, during

²¹ Crated by author.

which the payment document (instrument) and the transferred funds move in the opposite direction to each other.




Figure 1. The approaches for classification of payment instruments²²

However, in any case, the payment transaction will not take place if it is not processed by banks, which collects, maintains, processes, transmits information in some payment documents, in some cases identifies the participating parties, and confirms the validity of the payment instrument (payment instrument). It is the certification of the transfer of funds.²³

At this stage of the payment and settlement process, clearing is especially carried out, which is the process of collecting, grouping, exchanging payment and settlement documents, as well as calculating the positions of the participants of the payment and settlement system for the final settlement. Thus, the mutual claims and liabilities arising between individuals and legal entities on goods, works performed, securities are

²² Composed by author.

²³ Michael Tompkins, Payments Canada Research Unit, and Ariel Olivares, Bank of Canada. "[Clearing and Settlement Systems from Around the World: A Qualitative Analysis](https://www.payments.ca)". / www.payments.ca. Retrieved 19 November 2018.

settled through non-cash settlements. Clearing is a netting that is the offset of monetary claims or liabilities arising from payment documents submitted to each other by two or more payment system participants.²⁴

Eventually, the settlement transaction ends with the final settlement operation, as a result of which the monetary liabilities arising between two or more members of the payment and settlement system related to the transfer of funds are repaid (see Figure 1).

Although non-cash payments in international banking practice tend to reduce paper payment instruments that require high processing costs, the volume of payments made with such instruments is still a significant part and will remain so for some time. Electronic payments are rapidly evolving in the world, especially the use of plastic cards in small payments is expanding, and in the near future it is likely that the latter will be a predominant part of the retail, non-cash payment system.

E-money is an electronically exchanged value through technology (computer, mobile phone, etc.), which means that e-money is based on cash but does not have the tangible appearance typical of banknotes and coins. As with traditional money, electronic money can be used to buy goods and services, to make international transactions. Most of the money used in the current financial system is circulated in a digital environment.

In practice, e-money allows you to make payments on your mobile phone or computer without cash, visiting a bank or withdrawing money from an ATM. If desired, e-money can be converted into banknotes, for example, by cashing from an ATM. In the case of an e-wallet, e-money is issued on the basis of a card. The money is deposited in a card or other device, used through appropriate infrastructure, such as a subway station. The amount is reduced during use or increased during recharging in real time. In the case of virtual money, electronic money is issued on the basis of a computer system.²⁵

Changes in current public life and progress has necessitated day-to-day management of consumer funds, and internet banking is a prime example of the use of new payment technologies that allow consumer banking to reach a new level of quality, providing faster, more convenient and secure banking.

A letter of credit is one of the payment instruments for delivery documents (see Figure 2). A letter of credit is, in fact, a way for the buyer to have a full guarantee that the bills, receivables and bills will be paid on time.

²⁴ Law of RA "Payment and Settlement Systems and Organizations, 2004, Article 3.

²⁵ The Future of Money-Like Things.

<https://www.theatlantic.com/technology/archive/2014/05/future-payment-systems/370902/>

Therefore, this horse mostly protects the interests of the supplier-seller organization. The letter of credit can be presented by the bank by the order of the customer-seller as a monetary obligation of the bank. It is an independent transaction between the bank and the customer-payer, separated from the purchase agreement, and is a form of banking service.

In practice, the letter of credit is opened as soon as the payer receives information from the supplier that the goods are ready for delivery. First, covered (deposited) և uncovered (guaranteed) letters of credit are opened. In the first case, the issuing bank writes off the payer's settlement account and transfers it to the supplier bank in the amount of the full letter of credit, where it is deposited in a separate balance sheet account. The deposit can also be made at the expense of the loan received by the buyer of the issuing bank.

An uncovered letter of credit does not provide for the initial deposit of funds. Payments are made from the payer's settlement account, and in case of lack of funds, the issuing bank guarantees payment from its own funds. However, this type of letter of credit can be used if the issuing bank has a correspondent account with the executing bank, from which the funds are written off as payment.²⁶




Figure 2 The hierarchy of payment settlement system²⁷

²⁶ Turban, E. King, D. McKay, J. Marshall, P. Lee, J & Vielhand, D. , Electronic Commerce A Managerial Perspective. London: 2008: Pearson Education Ltd. p. 554.

²⁷ Composed by author.

In general, the participants of the Armenian payment and settlement system may be the Central Bank of the Republic of Armenia, commercial banks operating in the territory of the Republic of Armenia, payment and settlement organizations, other persons authorized to provide payment and settlement services under the legislation of the Republic of Armenia or international agreements. However, in all cases, the hierarchy of the payment and settlement system can be represented at three levels: intra-banking, inter-bank and international (see Figure 2).

Only the head office and branches of the given bank or payment service provider are involved in the interbank payment and settlement system. And the payment system inside the country is the making of interbank payments in the territory of a specific state or outside the territory, the operator of which is a resident of that state. And finally, the international payment system is a foreign payment system that provides payments outside the territory of a specific country, the operator of which is not a resident of a specific country.

Table 1

Main indicators of RA payment and settlement organizations (million drams)²⁸

Indicators	2014	2015	2016	2017	2018
Assets	28 496,8	30 245,8	32 107,3	33, 531,7	41 376,7
Liabilities	9 478,1	11 469,7	11 365,8	15 169,2	20,645,1
Overall Capital	19 018,7	18 776,1	20 741,5	18 362,5	20 731,6
Accumulated profit	1 801,5	1 454,4	644,3	2 299,7	1 755,6
Quantity of entities	8	7	7	7	10

As the role and significance of payment and settlement systems is essential for the country's financial stability and monetary policy, the central bank monitors this process. Thus, in the electronic payment system of the Central Bank of Armenia only in 2019, 2.7 million payments were made in the amount of 2 0007.7 billion AMD (payment message), ensuring a growth of 30.3% և 6.6%, respectively, compared to the previous year. The growth of interbank payments made 47.6% as compared to the previous year, the growth of budget payments - 10.7%.²⁹ In recent years, there has been an

²⁸ Statistics of RA finance 2019, //armstat.am, p. 63.

²⁹ Financial Stability Report, 2020, // Central Bank of Armenia, p. 38.

increase in the assets and capital of the payment and settlement organizations operating in the Republic of Armenia (see Table 1).

Abstract: The modern economy is a set of many day-to-day transactions, which is carried out through calculations of payments between "economic entities". The methods of execution of these payments, the current arrangements, the technical means of execution are described by the payment system. We are currently entering a period of dynamic change that encompasses all areas of public life, including the financial sector. This is especially evident in the development of advanced service delivery technologies. The advent of new means of communication, e-commerce, and additional technical possibilities for the Internet has dramatically transformed existing perceptions of banking services. In this sense, an effective payment and settlement system is one of the most important elements of the economy of any state, which to some extent characterizes its level of development. The stability of the country's financial system is directly related to the stability of the internal payment system. It is one of the most important means of enabling the central bank, commercial banks to implement monetary policy more operatively, to ensure the management of the economy.³⁰

Key words: payment systems, electronic valets, management of electronic transactions, on-line payments.

ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Բեհնուդ Սուրի

Եվրոպական համալսարանի ասպիրանտ

Ժամանակակից տնտեսությունը ամենօրյա բազմաթիվ գործարքների ամբողջականություն է, որն իրականացվում է վճարումների և տնտեսվարող սուբյեկտների միջև հաշվարկների միջոցով: Այդ վճարումների և հաշվարկների իրականացման ձևերը, գործող կարգավորումները և կատարման տեխնիկական միջոցները բնութագրում է վճարահաշվար-

³⁰ Biago Bossone and Massimo Cirasino, "The Oversight of the Payment Systems: A Framework for the Development and Governance of Payment Systems in Emerging Economies" The World Bank, July 2001, p.7

կային համակարգը: Ներկայումս թևակողում ենք դինամիկ փոփոխությունների ժամանակաշրջան, որն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները, այդ թվում նաև ֆինանսավարկային ոլորտը: Դա արտահայտվում է հատկապես նրանով, որ մշակվում են ծառայությունների մատուցման առաջավոր տեխնոլոգիաներ: Կապի նոր միջոցների, էլեկտրոնային առևտրի և ինտերնետի լրացուցիչ տեխնիկական հնարավորությունների ի հայտ գալը կտրուկ ձևով վերափոխեցին բանկային ծառայությունների մատուցման վերաբերյալ գոյություն ունեցող պատկերացումները

Հիմնաբաներ. վճարային համակարգեր, էլեկտրոնային դրամապանակներ, վճարային գործարքների կառավարում, առցանց վճարումներ:

ИЕРАРХИЯ ПЛАТЕЖНЫХ СИСТЕМ И МЕНЕДЖМЕНТ

Бейнуд Сури

Европейский университет, аспирант

Современная экономика - это совокупность множества ежедневных операций, которые осуществляются посредством расчетов платежей «между хозяйствующими субъектами». Способы осуществления этих платежей, расчеты, текущие договоренности, технические средства исполнения описаны платежной системой. В настоящее время мы вступаем в период динамичных изменений, которые охватывают все сферы общественной жизни, включая финансовый сектор. Это особенно заметно в развитии передовых технологий предоставления услуг. Появление новых средств связи, электронной коммерции и дополнительных технических возможностей Интернета резко изменило существующие представления о предоставлении банковских услуг.

Ключевые слова: платежные системы, электронные кошельки, менеджмент, интернет платежи.

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄԱՅԱՆ ՎՆԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ

Արմեն Ճուղուրյան

տնտեսագիտության դոկտոր

jarmen1@yandex.ru

Նոննա Խաչատրյան

տնտեսագիտության թեկնածու

nonnakhachatryan@yahoo.com

Արցախյան գոյամարտը պատերազմ է նաև տնտեսական դաշտում: Եթե չքննարկենք պատերազմում թույլ տրված ռազմավարական, և հատկապես դիվանագիտական սխալները, ապա պետք է արձանագրենք ոչ պակաս կարևորվող տնտեսական քաղաքականության բացթողումները, որոնք էական դերակատարում ունեցան պատերազմի ելքի վրա: Անկախացումից ի վեր, վերջին երեսուն տարիներին չկարողացանք ուղղել արտաքին պարտքի տակ կքած հայրենի տնտեսության ողնաշարը, անհեռատես տնտեսական քաղաքականությամբ նպաստեցինք երկրից կապիտալի փախուստին, փոխարենը չկարողանալով ապահովել օտարերկրյա ներդրումային գրավիչ դաշտ:

Հետպատերազմական շրջանում մեր հայրենիքը կանգնեց տնտեսական նոր մարտահրավերների առջև: Պատերազմական ավերածությունների վերականգնում Արցախում, Հայկակական բանակի զինանոցի համալրում և արդիականացում, զոհված և հաշմանդամ դարձած մեր զինվորների ընտանիքների արժանապատիվ սոցիալական պայմանների ապահովում, ահա առնվազն այն պարտադիր պայմանները, որ մեզ պարտավորեցնում է պատերազմի ավարտը: Մակայն, առաջիկա տարիներին դրան զուգահեռ կարևորվում է նաև երկրի տնտեսության արագընթաց հզորացումը, որն առաջին հերթին հասցեագրվելու է արդիական և մարտունակ բանակի ստեղծմանը: Կազմակերպելով հայրենանվեր տնտեսավարում, ունենալով հզոր տնտեսական համակարգ, կունենանք նաև հզոր բանակ, որն անպայման իր գործը կանի տեսանելի ապագայում:

Հզոր բանակ ստեղծելու ճանապարհին

Քանի դեռ մենք ունենք թուրքալեզու հարևաններ, ապա պետք է ունենանք նաև ցանկած պահին նոր պատերազմ սկսելու սպասումներ: Իսկ այդ պատերազմում անպայման կհաղթենք, եթե կատարենք հետևյալ տնտեսական քայլերը:

Առաջին, համախմբել երկրի և սփյուռքի տնտեսական ռեսուրսները ի նպաստ ռազմարդյունաբերության զարգացման, արտադրելով

Ժամանակակից գինատեսակներ, որոնք նաև կարտահանվեն և կվաճառվեն միջազգային շուկաներում: Չենք կարծում, որ Իսրայելը մեր նկատմամբ այդ առումով ունի առանձնահատուկ առավելություններ:

Երկրորդ, ազատգրվել սփյուռքից և միջազգային դոնորներից փող խնդրելու սկզբունքից: Աշխարհասփյուռ հայերի նվիրատվությունները հրավառության պես մի բան են, որ մեկ ակնթարթ երևում են ֆինանսների երկնակամարում և հաջորդ ակնթարթում մարում ու հանգչում են: Հիմա եկել է այն ժամանակը, որ առավելապես անհրաժեշտ են ոչ թե նվիրատվություններ՝ այլ ներդրումներ հայրենիքում, դրանով իսկ կուտակելով ու բազմապատկելով ազգային տնտեսության զարգացման պաշարները:

Երրորդ, չպետք է տուրք տալ հուսախաբությանը և անտեսել Արցախի սոցիալ-տնտեսական զարգացումը: Ամեն ինչ արվելու է, որ Արցախը հայաթափ չլինի, առաջարկելով այնտեղ գործարարություն վարելու համար գրավիչ պայմաններ: Շատ կարևոր է նաև, որ յուրաքանչյուր հայ գործարար իր ձեռներեցության ինչ-որ հատված, լինի այն մեծ կամ թեկուզ շատ փոքր, փոխկապակցի Արցախի տնտեսության հետ:

Համազգային տուրքի ինստիտուտի կիրառում

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը իր զարգացման ընթացքում առավել քան լուրջ պետք է վերաբերվեր իրեն ուղեկցող Արցախյան գոյամարտին, կազմավորելով ռազմարդյունաբերական համալիր, ձևավորելով պատերազմական սոցիալ-տնտեսական վնասների փոխհատուցման ֆինանսական ռեսուրսներ և ապահովագրական ֆոնդեր: Սակայն, չգիտես թե ինչու, այդ հարցերում հապաղեցինք, որի հետևանքները առավել ցավոտ են դրսևորվում պատերազմական գործողությունների սրացման ֆոնդին:

Կարծում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի առաքելությունը ներկայումս պետք է խմբագրվի, ելնելով Հայաստանի Հանրապետության և Արցախի հանրապետության առջև կանգնած պատերազմական սպառնալիքներից: Եթե վերլուծենք Համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերը, ապա պարզ կդառնա, որ դրանք բազմազան են և միմյնաց նկատմամբ գրեթե չունեն փախկապակցվածություն: Ուստի առաջարկում ենք, որ հիմնադրամի առաքելությունում լրացում կատարվի, հստակ շեշտադրումներ անելով համազգային ներուժով երկու հանրապետությունների պաշտպանողականության շարունակական ամրապնդմանը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը աշխատափյուռ հայության հավաքական դրամական նվիրաբերումների կազմակերպչական գործառույթների շրջանակն է, որը հիմնականում համալրվում է տարեկան դրամահավաք մարաթոններով: Սակայն ֆորս մաժորային իրավիճակներում, դիցուք պատերազմի առաջին իսկ երեք շաբաթներում,

«Հայաստան» համահայկական հիմնադրամում հայրենասիրական զարթոնքի ֆոնին հավաքագրվեց ավելի քան 120 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2020 թվականի հոկտեմբերի 21-ից նոր շարժում սկսվեց, “50 plus” անվանամբ, նպատակ ունենալով ոչ միայն հախուռն ձևով միանվագ, այլ ամսական կտրվածքով կանոնակարգված նվիրաբերումների:¹

Առավել քան համոզված ենք, որ ֆինանսական ներհոսքերը հիմնադրամում պետք է կանոնակարգվեն, միանվագության մոտեցումից անցում կատարելով ամսական նվիրատվությունների: Ընդ որում, անհրաժեշտ ենք համարում սահմանելու «ազգային տուրք», որը պիտի հիմնադրամին վճարվի անկախ իր բնակության վայրից յուրաքանչյուր հայ, իր ամսական եկամտի 1% -ի չափով: Այս պարագայում, «Հայաստան» համահայկական հիմնադրամը բնականաբար հնարավորություն կունենա կանոնակարգված ձևաչափով ամսական կայուն դրամական ներհոսքերի հավաքագրմանը աշխարհասփյուռ հայությունից, հաջորդիվ այն հասցեագրելով պատերազմի սոցիալ-տնտեսական բացասական հետևանքների շարունակական վերացմանը:

«Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ը հիմնականում համալրվում է դրոշմանիշային վճարներով, որոնք կատարում են ֆիզիկական անձինք, օրենքով սահմանված կարգով, ամսական 1000 դրամի չափով: Սակայն հարկ է նշել, որ միայն պատերազմի առաջին երեք շաբաթներում “Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ”-ին հախուռն, առանց որևէ օրենսդրական պարտադրանքի, հայ ժողովրդի կողմից 4,5 մլն դրամ է նվիրաբերվել:² Միաժամանակ պետք է արձանագրել նաև, որ ուշ թե շուտ պատերազմի էֆորիան կանցնի, այդ նվիրատվությունները կնվազեն, իսկ գոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների սոցիալական հոգսերը կմնան նույնը, որոնք պետք է տասնյակ տարիներ փոխհատուցվեն ապահովագրության հիմնադրամից:

Այս առումով առաջարկում ենք հանդես գալ օրենսդրական փոփոխությամբ, փոխարինելով 1000 դրամանոց դրոշմանիշային մուծումները՝ քաղաքացիների ամսական եկամուտների նկատմամբ 2%-ով վճարումների սահմանմամբ: Այս դեպքում, կվերականգվի վճարումների արդարությունը և կվերախմբագրվի բոլորիս սոցիալական պարտավորվածությունը հետևյալ երկու պարզ պատճառով: Նախ, քաղաքացին, որ մի քանի տեղից եկամուտ էր ստանում և յուրաքանչյուրի դիմաց դրոշմանիշային վճարումներ կատարում, այլևս հնարավորություն չի ունենա ապահովագրական հիմնադրամից ետ ստանալու ամսական մեկից ավելի կատարված մուծումները: Եվ երկրորդ, որն ավելի կարևոր է, ապահովագրական հիմնադրամին մուծումները կիրականացվեն պրոգրեսիվ

¹ “50 Plus”hy.armradio.am.

² Facebook.com/1000piuse.am

կարգով, և բարձր ու ցածր եկամուտ ստացողների ամսական մուծումների միջև չի դրվի համահարթեցում, որն արվում է այժմ:

Ինչպես կանխել Արցախի հայաթափումը

Պատերազմի արհավիրքներով անցած և Երևանում ապաստան գտած արցախցու դիմաց հիմա արդեն դժվար է դնել հետդարձի ճամփան բռնելու պարտադրանքը: Չէս կարող մեղադրել Արցախ վերադառնալ հրաժարվող հայ մարդուն, որի երկրորդ սերունդն է արդեն անցնում պատերազմի միջով՝ դրան զուգահեռ մշտապես ակնատեսը լինելով երևանյան ապահով կյանքին: Ադրբեջանի փախստականների վերադարձի ռազմավարությունն էլ հենց միտված է դրան, որ պերմանենտ պատերազմի սպառնալիքներով հայերը թողնեն Արցախը, իսկ թուրքալեզու ցեղերը իրենց վայրագ վարքագծին հարիր, արագորեն հաստատվեն հայաթափված տարածքներում: Նրանք դա անպայմանման կանեն պետությունից նավթադուլարներով նպաստ և ֆինանսական օժանդակություն ստանալով: Անգամ վտանգ և ռիսկեր ենք տեսնում, որ ադրբեջանական անձնագրերով այլ աղքատ երկրներից ահաբեկիչները, ինչպես որ նավթադուլարների ուժով կոմիում էին մեր դեմ, այնպես էլ նույն ֆինանսական աջակցությամբ կվերաբնակեցվեն Արցախում:³

Իսկ ինչ պիտի անենք մենք, որ չունենք նավթային ռեսուրսներ և ունենք ընդամենը հայրենասիրություն և մաքառելու կամք: Եկեք անկեղծանաք, որ հայրենասերական հորդորներով այլևս չենք կարող կանխել Արցախի հայաթափման ռիսկերը: Այստեղ պետք ենք պետականամետ և սոցիալ-տնտեսական նոր մոտեցումներ:

Առաջին. ի վերջո պիտի գիտակցենք, որ միայն արցախցու պարտքը չէ պահելու իր հողը: Եթե Հայաստանից մեկնած հազարավոր հայ զինվորները զոհվում են արցախյան հողում, ուրեմն հարյուր հազարավոր հայեր պետք է հարգեն նրանց պայծառ հիշատակը և մասնակիցը դառնան Արցախի դեմոգրաֆիական փրկությանը: Անհրաժեշտ ենք գտնում, որ Հայաստանցի մասնագետների մի մասը տարեկան երկու-երեք ամիս գործուղվի Արցախ, այնտեղ կատարի իր առաքելությունը, եթե անգամ չի ուզում մշտապես հաստատվել Ստեփանակերտում: Այդ մարդը կարող է լինել ուսուցիչ, բանվոր, կամ գյուղատնտես, որի գործունեությունը կարգավորվելու և խրախուսվելու է պետական մակարդակով:

Երկրորդ. Արցախում իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը ոչ միայն ազատվելու է հարկերից, այլև ՀՀ ձեռներեցներին տալու է նաև բազում սոցիալ-տնտեսական անձնական, և անգամ՝ ընտանեկան արտոնություններ: ՀՀ բնակիչները պետք է համոզված լինեն, որ

³ Ճուղուրյան Ա., Ինչպես հաղթել տնտեսական պատերազմում, Առավոտ օրաթերթ, 21 նոյեմբեր, 2020:

Ստեփանակերտում իրականացվող գործարարության արդյունքում արդեն իսկ Երևանում կստանան անվճար սովորելու, վարկեր ստանալու, բիզնես զարգացնելու, հանգիստը կազմակերպելու պետական աջակցություն և հանրային օժանդակություն:

Երրորդ. անգամ, եթե հայ մարդը հանգամանքների բերումով հնարավորություն չունի անմիջական մասնակիցը դառնալու արցախյան սոցիալ-տնտեսական կյանքին, ապա նա պարտավոր է համազգային տուրք վճարելով եկամուտներից, իր մասնաբաժինը ունենալ Արցախի տնտեսական հզորացմանը:

Ի վերջո, երեսուն տարի արցախյան հարցում ամպագորգոռ կոչերով հայրենասիրություն քարոզեցինք, բայց այդ հողը շենացնելու շատ քիչ բան արեցինք: Հիմա արդեն մտնում ենք տնտեսական ռեսուրսների պատերազմի փուլ, որտեղ ունենք շատ ավելի ուժեղ հակառակորդ: Ուրեմն ժամանակն է ուշքի գալ, ձգել մեր գոտիները, տնտեսական ռեսուրսներ և խթաններ որոնել, լուծելու համար Արցախի ակտիվ վերաբնակեցման խնդիրը: Այլապես այն շատ ավելի արագ այն կանեն մեր թշնամիները, որոնք անգամ առանց մի կրակոցի կհասնեն մեր պատմական հայրենիքի հայաթափման իրենց վաղեմի երազանքին:

Ինչպես հաղթել տնտեսական պատերազմում

Հետպատերազմյան շրջանում Հայաստանի Հանրապետության տնտեսությանը ծանր ժամանակներ են սպասվում: Իրոք, որտեղի՞ց պետք է գտնվեն տնտեսական անհրաժեշտ ռեսուրսներ բանակի ռազմապաշարը վերականգնելու, զինանոցը արդիականացնելու, պատերազմի ավերածությունները վերականգնելու, գոհվածների ու վիրավորների ընտանիքների արժանավայել կյանքը ապահովելու համար: Ավելին, պատերազմի պարտությունը հասարակության մեջ ստեղծում է բացասական տրամադրություններ, որոնք տնտեսական ակտիվության նվազման էական դիսկեր են պարունակում: Պատերազմի վերսկսման լուրջ վտանգներ զգացող տնտեսական կապիտալը թերևս մի քանի տարի կպասիվանա Հայաստանում և ուղիներ կգտնի երկրից արտագաղթելու: Եվ եթե տնտեսական պատերազմում տանուլ տվեցինք, հաստատ պարտվելու ենք ռազմի դաշտում, ունենալով թույլ թիկունք: Եվ հիմա է, որ հրատապ միջոցներ պետք է ձեռնարկվեն երկրի ճահաճացած տնտեսությունը աշխուժացնելու, և աշխատասեր ու ստեղծարար հայի համար իր հայրենիքում արժանապատիվ կյանք ու պատերազմական ամուր թիկունք ապահովելու համար:

Իսկ ցանկացած տնտեսություն աշխուժացնելու համար զարգացման ռեսուրսներ են պետք, որը հենց այս պահին, մենք չունենք: Տասնյակ տարիներ սպասեցինք, որ ութ միլիոնանոց սփյուռքը վերջապես ներդրումներ կատարի հայրենիքում, որը ցավոք, կյանքի չկոչվեց և սահմանափակվեց ընդամենը նվիրատվություններով: Իսկ հիմա, դա էլ չի

լինելու, քանի որ սփյուռքին ոգևորեցինք հաղթելու ստահոտ լուրերով, սփյուռքահայից ստացանք վերջին խնայողությունները ու փոխարենը՝ հրամցրինք հիասթափություն և պարտության դառը իրողություն:

Իհարկե գոյություն ունի նաև է “տնտեսական հոգևարքից” դուրս գալու մեկ այլ ճանապարհ, երբ արտաքին պետական պարտք ես վերցնում և գոնե դրանով իսկ ժամանակավոր կանխում ճգնաժամային ցնցումները: Այս տխուր պրակտիկան, արդեն տասնամյակներ կիրառվում է Հայաստանում, որով մեր հայրենիքը տարեց տարի կորցնում է իր տնտեսական անկախությունը և թուլացնում դիրքերը ազգերի ընտանիքում:

Եվ ուրեմն, որն է ելքը և ինչ պետք է անենք: Սպասվելիք ճգնաժամից դուրս գալու միակ ելքը, որ հիմա տեսնում ենք, Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի Հանրապետության տնտեսության սերտ ինտեգրացումն է: Որպես աշխատասեր և ստեղծարար ժողովուրդ, մենք չենք էլ պատրաստվելու փող մուրալ մեր դաշնակցից, այլ ընդամենը ակնկալելու ենք, որ ՌԴ-ն իսկապես հանդես գա դաշնակցային ազնիվ դիրքերից և օժանդակի Հայաստանի տնտեսական զարգացմանը: Այս առումով, անհրաժեշտ եմ համարում Հայաստանում հիմնելու հայ-ռուսական համատեղ արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց արտադրանքի իրացման շուկան լինելու է հենց Ռուսաստանը: Դրան հավելելով պիտի շեշտեմ, որ կան հաշվարկներ, համաձայն որոնց, եթե ՌԴ-ից Հայաստանին քվոտա տրվի ապահովելու Մոսկվայի գյուղութեբքների սպառման ընդամենը 15%-ը, ապա դրանով բավական կլինի ապահովելու հայրենի գյուղատնտեսական ոլորտի թռիչքաձև զարգացումը:

Ժամանակն է, որ ընդամենը թղթի վրա գործող Եվրասիական տնտեսական միությունը հայերիս համար դառնա իրականություն, և մենք իրոք կարողանանք զարգացնել տնտեսություն՝ գոնե ռուսական շուկայի ուղղվածությամբ: Այս պարագայում, կշահենք նաև նրանով, որ Ռուսաստանը հայաստանում կունենա ոչ միայն ռազմաքաղաքական, այլև տնտեսական շահեր, և դրանով իսկ, առաջիկայում կբարձրանան մեր հաղթանակի հնարավորությունները:

Ինչ պետք է չանել

Հետպատերազմական շրջանը առավել դաժնությամբ է փորփրում մեր հասարակության վերքերը և խորացնում համահայկական ընկճախտը: Եթե պատերազմի օրերին ապրում էինք հաղթելու հույսով և դրանով իսկ դիմակայում արհավիրքին, ապա կապիտուլացիան մեզ կանգեցրեց հուսահատության անդունդի եզրին, որից այն կողմ, արդեն ազգային անվտանգության կորուստն է: Ուրեմն ինչ պետք է չանել, որ այլևս չմոտենանք այդ անդունդի եզրին և աստիճանաբար շտկենք ստեղծված իրավիճակը:

Առաջին. երբեք ու երբեք չհուսախափվել և չմտածել արտագաղթի մասին: Անկախության ձեռք բերման օրերից ի վեր հայ ժողովուրդը, փոխանակ հավաքվելու իր հայրենի բնօրրանում, սկսեց արտագաղթել, իսկ պատերազմին հաջորդող առաջիկա տարիներին երկիրը լքելու տրամադրությունները ավելի կարվեն: Չպետք է տուրք տալ հուսախափությանը և լքել հայրենիքը, նամանավանդ, սփյուռքից սպասված զանգվածային հայրենադարձությունը այդպես էլ իրականություն չդարձավ: Նորից ու նորից օրինակ վերցնենք հրեաներից, որոնք տարեց տարի դեմոգրաֆիական առաջընթաց ունեն Իսրայելում:

Երկրորդ, հրաժարվել ագրեսիվ հռետորաբանությունից մեր հայաստանյալ հարևաններին նկատմամբ: Տարիներ շարունակ, ակնհայտորեն ցույց տալով ազգային ձգտումները՝ պահանջատեր լինելու հայկական պատմական հողերին, ավելորդ անգամ լարվածություն ստեղծեցին և արդյունքում ստացանք բուլղարացի Էֆֆեկտ, որով արդեն իսկ ի լուր աշխարհի, թշնամի բացահայտ հավակնություններ է հրապարակվում Երևանին, Սյունիքին, Սևանին տիրանալու նկատմամբ: Ուրեմն, պետք է հրաժարվենք թշնամու նկատմամբ ագրեսիվ հռետորաբանությունից և փոխարենը ուժեղացնենք մեր պաշտպանունակության զգոնությունը:

Երրորդ, չպետք է հուսադրվել գերպետությունների աջակցությամբ և կորցնել ինքնապաշտպանության զգոնությունը, քանի որ հենց պատմությունն է ցույց տալիս, որ Հայաստանը միշտ էլ եղել է գերպետությունների առևտրի մանրադրամ: Չպետք է տուրք տալ այն քարոզչությանը, թե կբացվեն մեր թշնամիների հետ սահմանները և կգործեն տնտեսությունը աշխուժացնող հաղորդակցման ուղիներ: Երբեք չպետք է թույլ տրվի, որ թուրքալեզու տնտեսությունը մխրձվի մեր մեջ և քայքայիչ աշխատանքներ տանի առանց այն էլ հայկական տկար տնտեսական միջավայրում:

Չորրորդ, չպետք է շտապել, այլ պետք է զինվել համբերությամբ և սպասել թշնամու թուլացմանը տեսանելի ապագայում: Նավթադուլարներով միջազգային հանրությունից հաղթանակը գնած, և ոչ սեփական արիությամբ հաղթանակ վաստակած պետությունը տարիներ անց կորցնելու է իր միջազգային մրցունակությունը՝ պայմանավորված նավթի գործոնով: Էլեկտրոմոբիլների լայնամասշտաբ կիրառումը, գլոբալ տաքացումները ի վերջո կրճատելու են նավթի պահանջարկը աշխարհում և նավթ արդյունահանող երկրները պարզապես կորցնելու են իրենց աշխարհաքաղաքական դիվիդենդները, որն էլ աշխատելու է ի նպաստ հայ ժողովրդի:

Հինգերորդ, ի վերջո տուրք չտալ անկախության դասական գաղափարներին, որոնք ընդամենը դասագրքային են և կյանքի չեն կոչվում հատկապես աշխարհագրորեն փոքր և տնտեսապես թույլ երկրների համար: Անընդհատ հողորտալ, թե անկախ ու ինքնավար ենք և անելու ենք այն, ինչ ուզում ենք, առանց հաշվի նստելու գերհզորների

հետ, նշանակում է պարզապես անկախության դրոշի ներքո երկիրը տանել կործանման: Ուրեմն, պետք է հրաժարվել ավելորդ ինքնահավանությունից և հատուկ նրբանակատություն ցուցաբերել դիվանագիտական գործին, այսօրվա այրունաքամ լինող հայրենիքը ոտքի կանգնեցնելու և հետքաշվելու այն կործանարար անդունդից, որի շեմին արդեն հասել ենք:

Հետպատերազմյան տնտեսության ճանապարհային քարտեզը

Պատերազմից հետո ունենք մեկ այլ Հայաստան, որտեղ իշխում է պարտվողի բարդույթը: Եվ որքան արագ դուրս գանք այդ շուկային իրավիճակից, այնքան արագ կվերականգնենք կորցածը: Այս գործընթացում իր առանցքային դերակատարումն ունի երկրի տնտեսական զարգացումը, որը հիմնովին վերանայումների կարիք ունի:

Հետպատերազմյան շրջանում ՀՀ տնտեսության զարգացման ճանապարհային քարտեզը մեր կողմից նախատեսում է երեք հաջորդական փուլերով տնտեսական խնդիրների լուծումներ, կարճաժամկետ միջոցառումներ (մինչև 1 տարի) և միջնաժամկետ միջոցառումներ (1-3 տարի): Կարծում ենք, որ հետպատերազմյան տնտեսության զարգացման առաջնահերթությունները պետք է թիրախավորել ԵԱՏՄ շուկային: Այսօր արդեն փաստ է, որ Ռուսաստանի Դաշնությունը իր աշխարհաքաղաքական հետաքրքրությունների վեկտորը ուղղել է դեպի Հարավային Կովկաս, և մենք օգտվելով այդ հանգամանքից պետք է ակնարկենք մեր դաշնակցին, որ զիջումներ անելով ռազմի դաշտում, ակնկալում ենք նրանից տնտեսական փոխշահավետ համագործակցություն՝ հայրենական համատեղ ձեռնարկությունների կազմավորման և ռուսական շուկայում հայկական ապրանքների քվոտավորման առումով:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար հրատապ միջոցառումներ են անհրաժեշտ մակրոտնտեսական խթանիչների ակտիվացման ոլորտում, ընդլայնելով երկրում գործող հարկային և մաքսային արտոնությունների շրջանակը, նվազեցնելով վարկային տոկոսադրույքները, պետական պարտատոմսերի թողարկմամբ տնտեսությունում ներարկելով էժան փողեր, որոնք կծառայեն հանրային ոլորտի զարգացմանը:

Կարևոր ենք համարում նաև ազգային տնտեսության զարգացմանն ուղղված ռեսուրսների գույքագրումը: Ժամանակն է հրաժարվել պոպուլիստական կոչերից, տնտեսական հեղափոխություն անելու կեղծ գաղափարներից և սթափ գնահատել, թե ինչ ռեսուրսներ ունենք դրսում ու ներսում, և ինչպես կարող ենք դրանք մոբիլիզացնել՝ հանուն հետպատերազմյան տնտեսության ամրապնդման: Հանրահայտ ճշմարտություն է. ազգային կայուն զարգացող տնտեսությունն է, որ կանգնած է ազգային իդեալի իրականացման թիկունքում:

Որոնք են լինելու հետպատերազմյան կառավարության տնտեսական քայլերը

Վերջերս սոցիալական ցանցերում շատ է քննարկվում մեր հայրենի տնտեսության ապագան, և հնչում են հուսադրող մտքեր, թե ամեն ինչ կորած չէ և նույնիսկ վարդագույն սցենարներ են ներկայացվում, օրինակ բերելով երկրորդ համաշխարհային պատերազմի փլատակների տակից վերածնված և թռիչքաձև տնտեսական աճ ապրած Ճապոնիայի կամ Գերմանիայի փորձը: Ուզում եմ այս առիթով իմ համոզմունք հայտնել, թե պետք չէ հերթական անգամ նորից ոգևորվել միջերով և ուտոպիական գնահատումներով, ինչը որ տասնամյակներ շարունակ արվեց հայ հասարակություն կողմից, անտեղի ռոճացնելով մեր բանակի “անպարտելիությունը”, և ի վերջո մեզ կանգնեցրեց կոտրած տաշտակի առջև: Պատերազմը տանուլ տնեցինք նաև հենց այն պատճառով, որ չկարողացանք ինչպես որ հարկն է, թե դիվանագիտորեն և թե տնտեսապես գնահատել այն ռիսկերը, որոնք իրականություն դարձան ռազմական գործողությունների առաջին իսկ օրերին:

Փլատակներում հայտնված հետպատերազմյան Գերմանիան և Ճապոնիան տնտեսական զարգացման ակնառու հաջողություններ ունեցան, քանի որ լուրջ աջակցություն ստացան Արևմուտքից: Իսկ մենք դրսից լրաջուգույն տնտեսական աջակցությամբ երբեք չենք ստացել և չենք էլ ստանալու, բացի մանր-մունր հումանիտար օգնություններից: Եվ ուրեմն չունենալով արևմուտքից նշանակալից տնտեսական օգնություն, որքան էլ որ հույսներս դնենք հայի ստեղծարարության և ձեռներեցական հմտությունների ներուժի վրա, միննույն է, դրանով տնտեսություն չենք վերականգնի, եթե կառավարությունը հետպատերազմյան շրջանում չկատարի երկու կարևորագույն քայլ:

Առաջին. իրականացնի պետականացման ակտիվ գործընթաց: Մեփականաշնորհումը, որը թվում էր, թե Հայաստանին տալու է զարգանալու լայն հնարավորություն և շուկայական մրցակցային ուղիներ, այդպես էլ չարդարացրեց իրեն, և հիմնականում երկրում ձևավորեց տնտեսական քրեաօլիգարխիկ համակարգ: Այս առումով, անհրաժեշտություն է ձեռնարկել հրատապ միջոցառումներ պետականացնելու հատկապես լեռնահանքային ոլորտի կազմակերպությունները, որոնք շահագործելով ազգային ընդերքը, ոչ բավարար չափով են հատուցում պետությանը և դրանով իսկ՝ ապահովում են մասնավոր գերշահույթներ: Մետաղական հանքաքար մշակող հայրենական կազմակերպությունները, որոնց գործունեությունը գրանցված է օֆշորներում, անհապաղ պետք է վերակազմավորվեն, անցնեն պետության ձեռքը և ծավալեն պետականամետ գործունեություն, դրանով իսկ վերջ տալով ազգային հարստություն համարվող ընդերքի թալանը:

Երկրորդ, ներկայումս կարևորում է արժեթղթավորման ակտիվացումը, երբ պետական երաշխիքներով թողարկվելու են ոչ միայն

կարճաժամկետ, այլև միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսեր, դրանով իսկ հավաքագրելով հայրենիքում, և ինչու չէ, նաև սփյուռքում առկա ազատ դրամական միջոցները և դրանք վերառադրելով ռազմարադյուսքերական ոլորտի զարգացմանը: Հայ ժողովուրդը պետք է հայացքն ուղղի կառավարությանը և իր դրամական ազատ ռեսուրսները վստահի հայոց պետականությանը, ի շահ երկրի տնտեսության վերականգմանը: Թողարկելով պետական պարտատոմսեր, պետությունը հնարավորություն կունենա կուտակելու անհրաժեշտ ֆինանսական պաշարներ նոր գործարանների, ֆաբրիկաների, ծառայությունների ոլորտների զարգացման համար, որոնք չեն գործելու մասնավոր ոլորտում, այլ լինելու են պետական:

Կարծում ենք, որ հետպատերազմյան Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսության զարգացմանն ուղղված քայլերում պետք է հստակ ընդգծված լինի պետական միջամտությունը, որը տարիներ շարունակ համեստ դերակատարում ունեցավ, անտեսվեց, իր տեղը զիջեց շուկայական ազատ տնտեսավարմանը, և արդյունքում “ոչ պատերազմ և ոչ խաղաղություն” իրավիճակում հայտնված երկրի համար ունեցավ աղետալի հետևանքներ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պատերազմից հետո ունենք մեկ այլ Հայաստան, որտեղ իշխում է պարտվողի բարդույթը: Եվ որքան արագ դուրս գանք այդ շոկային իրավիճակից, այնքան արագ կվերականգնենք կորցածը: Այս գործընթացում իր առանցքային դերակատարումն ունի երկրի տնտեսական զարգացումը, որը հիմնովին վերանայումների կարիք ունի: Հոդվածում առաջարկվում է ճանապարհային քարտեզ, որում նեկայացված են անհապաղ, կարճաժամկետ և միջնաժամկետ սոցիալ-տնտեսական միջոցառումներ, որոնցով հնարավոր կլինի հաղթահարել հետպատերազմյան վնասները ՀՀ-ում:

Հիմնաբառեր. ճանապարհային քարտեզ, համազգային տուրք, տնտեսական պաշարների գույքագրում, հակաճգնաժամային միջոցառումներ:

ДОРОЖНАЯ КАРТА ВОСТАНОВЛЕНИЯ ПОСЛЕВОЕННОГО СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО УЩЕРБА

Джугурян Армен

доктор экономических наук, проф. Северного университета

Хачатрян Нонна

кандидат экономических наук, доцент Ереванского
государственного университета

После Карабахской войны в Армении сложилась другая ситуация, где правит комплекс побежденного. И чем раньше мы выйдем из этой шокирующей ситуации, тем скорее мы вернем то, что потеряли. Ключевую роль в этом процессе играет экономическое развитие страны, которое требует тщательного анализа. В статье предлагается дорожная карта с изложением ближайших, краткосрочных и среднесрочных социально-экономических мер, которые могут содействовать преодолению послевоенного ущерба в Армении.

Ключевые слова: дорожная карта, национальная пошлина, инвентаризация экономических ресурсов, антикризисные меры.

ROADMAP FOR SOCIAO-ECONOMIC RECOVERY FROM POST-WAR DEAMAGE

Armen Thsughuryan,

Doctor of economics, Northern University

Nonna Khachatryan,

PhD in Economics, Yerevan State University

After Artsach the war, we have another Armenia, where the loser complex rules are dominated. And the sooner we get out of that shocking situation, the better we will recover what we lost. The economic development of the country plays a key role in this process, which needs to be thoroughly reviewed. The article proposes a roadmap outlining immediate, short-term and medium-term socio-economic measures that can help to overcome post-war damage in Armenia.

Keywords: road map, national toll, inventory of economic resources, anti-crisis measures.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Վահան Գևորգյան
Հյուսիսային համալսարանի հայցորդ
gevorgyan_vahan@yahoo.com

ՀՀ բուհերի ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման մոտեցումները տարբեր ուղղություններ են արտահայտվում: Այսպես, ֆինանսական պաշարների համալրման առանցքային աղբյուր է հանդիսանում կրթական ծառայությունների միջազգայնացումը և հայրենական կրթական գործունեության արտահանումը օտարերկրյա ուսանողներ ընդգրկելու ճանապարհով:⁴ Կարծիք է հայտնվում նաև, որ ՀՀ բուհերի ֆինանսական պաշարների կայունություն կապահովվի միջազգային կրթահամակարգերին ինտեգրման պարագայում, երբ միջազգային համագործակցության արդյունքում հայրենական համալսարանները հնարավորություն կունենան ընդլայնելու ստացվող միջազգային դրամաշնորհների շրջանակը:⁵

Հեղինակները համալսարանների ֆինանսական պաշարների կուտակումներն ու օգտագործումը փորձում են փոխկապակցել նաև մակրոտնտեսական կարգավորումների հետ: Այս դեպքում արդեն մասնագիտական կրթության ֆինանսավորման գործընթացի և ազգաբնակչության եկամուտների, ծախսերի, շրջանավարտների սոցիալ-տնտեսական սպասումների միջև փոխկապակցվածություններ են սահմանվում, որով գնահատականներ են տրվում համալսարանների ֆինանսական պաշարների կուտակումների և արդյունավետ օգտագործումների գծով:⁶ Բսկ միկրոտնտեսական հարթությունում բուհերի ֆինանսական պաշարների արդյունավետ կառավարման ուղի է առաջարկվում ուսանողների միջհամալսարանական շարժունության ճանապարհով կրեդիտների փոխանա-

⁴ Բարխուդարյան Գ., [ՀՀ կրթական ծառայությունների միջազգային առևտրի որոշ հարցեր](#) |, «Ազգային կրթական համակարգի բարեփոխումները», Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների 21-րդ գիտական նստաշրջան, Երևան, 2007, էջ 43-48:

⁵ [Հ. Սարգսյան, Գ. Բարխուդարյան, Տնտեսության և կրթության փոխգործակցման որոշ հիմնահարցեր](#), Բանբեր, ԵՊՏՀ, թիվ 2, Երևան, 2006թ., էջ 29-43:

⁶ Ավալյան Գ., Մասնագիտական կրթության ֆինանսավորման մակրոտնտեսական կարգավորման խնդիրները, Միջազգային գիտաժողովի նյութեր, Հյուսիսային համալսարանի հրատարակչություն, Երևան 2012թ. էջ 625-629:

կումը, երբ հնարավորություն է ստեղծվում օպտիմալ բաշխելու կրթական ծառայությունների ֆինանսավորումը ըստ մասնագիտական կրթական ծրագրերի:⁷


Բուհերի ֆինանսական պաշարների արդյունավետ կառավարման ուղի է առաջարկվում նաև նորմատիվային հաշվառման ներդրման ճանապարհով մասնագիտական կրթական ծառայությունների ծախսերի ու եկամուտների հաշվառումը՝ «սահմանված նորմատիվներ-շեղումներ-փաստացի արդյունքներ» կտրվածքով:⁸ Սակայն, դրա հետ մեկտեղ, բուհերի ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետության գնահատումը, առավել ևս կառավարումը դեռևս իր համակարգված մոտեցումը չի ստանում մասնագիտական գրականությունում, այլ ընդամենը հանդես է գալիս առանձին ուղղություններով: Այս առումով, մեր կողմից առաջարկվում է բուհերում ֆինանսական պաշարների արդյունավետ օգտագործման հայեցակարգ, որը հաշվի է առնում ինչպես պաշարների ձևավորման հնարավորությունները, վերահսկողության մոտեցումները, գիտակրթական գործունեության ֆինանսական կայունությունը, այնպես էլ ըստ կոնկրետ նպատակադրումների՝ այդ գործունեության հատույցը՝ (տես գծապատկեր 1):

Ֆինանսական պաշարների օգտագործման գնահատման մեր կողմից առաջարկվող հայեցակարգը կառուցվում է արդյունավետության չափում – մոնիթորինգ – տեղեկատվության ապահովում երեք հիմնապոլների վրա: Ընդ որում, արդյունավետության չափման հիմքում դրվում են կրթական ծառայությունների մատուցմանը առնչվող շահառուների սպասումները: Ֆինանսական պաշարի ձևավորմամբ ու օգտագործմամբ

⁷ Ավալյան Գ., Կրթական ծառայությունների ծախսերի կառավարման հիմնախնդիրները բուհերում, ,Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա, ամսագիր Երևան 2011թ.9/135, էջ 71-72:

⁸ Պողոսյան Ա., Նորմատիվային հաշվառման և կրթական ծառայությունների ծախսերի վերահսկողության փոխառնչությունները համալսարաններում, Պատմություն և քաղաքականություն, թիվ 5 (10), 2020, էջ 121-125:

շահագրգիռ են ինչպես բուհի ներքին շահառուները՝ ուսանողություն, պրոֆեսորադասախոսական անձնակազմ, վարչակազմ, այնպես էլ արտաքին շահառուները՝ գերատեսչական պատկամ մարմիններ, բուհական կոնսորցիումում ընդգրկված համալսարաններ, գործընկեր գիտահետազոտական կառույցներ և այլն:



Գծապատկեր 1. Ֆինանսական պաշարների արդյունավետ օգտագործման առաջարկվող հայեցակարգը բուհերում⁹

Բնականաբար, յուրաքանչյուր շահառու իր մոտեցումներն ունի ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետությունը գնահատելիս: Այսպես, ուսանողությունը որպես ստացած կրթության արդյունավետության չափանիշ է համարում առաջին հերթին մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռք բերումը, որով նա դառնում է մրցակցային աշխատաշուկայում: Հետևաբար, շրջանավարտի տեսանկյունից որպես իր կրթության վրա ծախսված ֆինանսական պաշարի արդյունավետ օգտագործման ցուցիչներ հանդես կգան բուհն ավարտելուց հետո աշխատանք գտնելու արագությունը, որպես մասնագետի՝

⁹ Կազմվել է հեղինակի կողմից:

գործատուի վարձատրության չափը, կարերիայի աճի հնարավորությունները:

Որպես ներքին շահառուներ, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմին հետաքրքրում են նաև բուհի մրցակցային վարկանիշիային համբավի ձևավորումը կրթական շուկայում, սովորողների թվաքանակի աճը, համալսարանի գործունեության ընդլայնումը, գիտակրթական ծառայությունների մատուցման անհրաժեշտ ֆինանսական պաշարների կուտակումը, որակի ապահովման մասնագիտացված կազմակերպությունների կողմից բուհի որակական բարձր աստիճանի վերագրումը:

Գործընկեր կազմակերպությունները, որոնք գիտակրթական ծառայությունների մատուցման արտաքին շահառուներն են հանդիսանում, նախընտրում են աշխատել այնպիսի համալսարանների հետ, որոնք իրենց ֆինանսական պաշարները առավելապես ուղղորդում են գիտահետազոտական աշխատանքներին, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջազգային շարժունությանը, միջազգային չափանիշներով կրթական ծրագրերի իրականացմանը: Իր հերթին, պետական և պատկամ գերատեսչական մարմինները հետևողական են լինում, որ համալսարանները իրենց ֆինանսական պաշարները օգտագործեն այնպես, որ ապահովվի պետական կրթական չափորոշիչներով ընթացող կրթություն, անհրաժեշտ կրթական որակ, ուսանողների շրջանում բարձր թվանիշներով ՄՈԳ:

Բնականաբար, հաշվի առնելով մասնագիտական կրթության ներքին և արտաքին շահառուների թվարկված բազմաբովանդակ սպասումները, ֆինանսական պաշարների արդյունավետ օգտագործման հայեցակարգային մոտեցումը պետք է ապահովվի արդյունավետությունը բնութագրող միասնական չափայնություն, որը մեր կողմից առաջարկվում է ներկայացնել հարաբերական ցուցանիշների՝ կոնկրետ գործակիցների միջոցով: Հետևաբար, մեր կողմից առաջարկվող ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետության հայեցակարգը առաջին հերթին պահանջում է մասնագիտական կրթության ծառայությունների մատուցման շահառուների սպասումների բազմագործոն գնահատում և միասնական չափայնություն, որի հիման վրա իրականացվում են կառավարչական համապատասխան որոշումներ (տես գծապատկեր 1):

Սակայն, մինչ ֆինանսական պաշարների արդյունավետ օգտագործման գծով կառավարչական որոշումների ընդունումը, կարևորվում է նաև պաշարների ձևավորման և օգտագործման մշտադիտարկումը: Այս պարագայում, հայեցակարգային կարևոր պահանջ է դրվում պարբերաբար գնահատելու դրամական ներհոսքերի ձևավորման և կուտակման անհրաժեշտ պաշարների ապահովվածությունը՝ ըստ դրանց ծախսի համապատասխան ուղղությունների: Հետևաբար, կարևոր են համարվում կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսական

պաշարների անրաժեշտ մակարդակների առկայությունը համապատասխան գիտակրթական ծրագրերի ամբողջական և կայուն իրականացման ուղղություններով: Դրամական հոսքերի խմբային համադրումները ըստ ձևավորման և ծախսի ժամկետայնության բուհի ֆինանսական պաշարների արդյունավետ օգտագործման հայեցակարգային երկրորդ հիմնասյան կարևորագույն պահանջ են ներկայացնում, քանի որ բնութագրում են գիտակրթական ծառայությունների իրականացման ֆինանսավորման ապահովվածությունը (տես գծապատկեր 1):

Ֆինանսական պաշարների ձևավորման և օգտագործման արդյունավետության հայեցակարգային երրորդ հիմնասյունը արդյունավետության տեղեկատվական հոսքերի համակարգումն է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բուհերում ֆինանսական պաշարների թե՛ ձևավորման, և թե՛ օգտագործման տեղեկատվությունը, որը ստացվում է տարբեր ստորաբաժանումներից, գործնականում իր համակարգումը թերևս չի ստանում, որը դժվարացնում է ոլորտին առնչվող ամբողջական հաշվետվողականության իրագործումը: Այդ իսկ պատճառով, հայեցակարգային կարևորագույն պահանջ ենք համարում կրկնակի գրանցման հիման վրա ֆինանսական պաշարների ձևավորման և դրանց օգտագործման հատույցի տեղեկատվական հոսքերի համակարգումը կառավարչական հաշվառման կազմակերպման միջոցով (տես գծապատկեր 1): Այս պարագայում, հնարավորություն է ստեղծվում ըստ պատասխանատվության կենտրոնների պաշարների արդյունավետ օգտագործման հաշվետվողականության կազմակերպման, որը հետադարձ կապ է ապահովվում կրթական ծառայությունների մատուցմանը առնչվող շահառուների և բուհի միջև: Արդյունքում, ձևավորվում է այնպիսի հաշվետվողականության միջավայր, որը թույլ է տալիս ոչ միայն գնահատելու բուհի ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետությունը, այլև այն բարձրացնելու ուղղությամբ թիրախավորված կառավարչական որոշումների կայացմանը:

Ի վերջո, ֆինանսական պաշարների արդյունավետ օգտագործման մեր կողմից առաջարկվող հայեցակարգի կառուցման առանցքային նպատակներն են հանդիսանում.

Առաջին, ֆինանսական պաշարների արդյունավետ օգտագործման գնահատումը ներկայացնել հայեցակարգային ձևաչափով, նրանում ներկայացնելով և չափելի դարձնելով բոլոր շահառուների սպասումների իրականացման աստիճանը, և դրա հիման վրա՝ բարելավումների հետագա ծրագրերի առաջադրումը:

Երկրորդ, համախմբելու և ներդաշնակեցնելու ֆինանսական պաշարների ձևավորման և օգտագործման կառավարչական մի շարք գործառույթներ, ինչպիսիք են նպատակադրումը, վերահսկողությունը, կազմակերպումն ու շահադրդումը:

Երրորդ, իրականացնելու այնպիսի կառավարչական որոշումներ, որոնք ոչ միայն նպաստում են ֆինանսական անհրաժեշտ պաշարների առկայությանը և ֆինանսական կայունության ապահովումանը, այլև պաշարների թիրախավորված օգտագործմանը՝ ի նպաստ բուհի մրցակցային գործունեության դիրքերի բարելավմանը կրթական ծառայությունների մատուցման շուկայում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ բուհական համակարգում ֆինանսական պաշարների ձևավորման և օգտագործման ընթացքը ինչպես գործնականում, այնպես էլ մասնագիտական գրականության մեջ դիտարկվել է զուտ վերահսկողության տեսանկյունից, առանց պատշաճ ուշադրություն դարձնելու պաշարների օգտագործման արդյունավետության գնահատումներին: Ավելին, օրենսդրական պահանջով համալսարանները այսօր էլ ներկայացնում են տարեկան ֆինանսական հաշվետվություններ, ռեկտորները իրենց տարեկան հաշվետվություններում նշում են ֆինանսների ձևավորման և ծախսման ուղղությունները, սակայն ֆինանսների օգտագործման արդյունավետության գնահատումները դեռևս դուրս են մնում հաշվետվողականության շրջանակից: Ստեղծված իրավիճակի առանցքային պատճառներից ենք համարում բուհերում ֆինանսական պաշարների արդյունավետ օգտագործման հայեցակարգերի մշակման և կիրառման բացակայությունը:

Հիմնադրամեր. ֆինանսական պաշար, ֆինանսական կայունություն, ֆինանսական արդյունավետություն, կառավարչական որոշումներ:

КОНЦЕПЦИЯ ЭФФЕКТИВНОГО ИСПОЛЬЗОВАНИЯ ФИНАНСОВЫХ РЕСУРСОВ В УНИВЕРСИТЕТАХ

Ваган Геворгян

Соискатель Северного университета
gevorgyan_vahan@yahoo.com:

Процесс формирования и использования финансовых ресурсов в системе высшего образования Республики Армения наблюдается как на практике, так и в профессиональной литературе с точки зрения чистого контроля, без должного внимания к оценкам эффективности использования ресурсов. Более того, в соответствии с требованиями закона университеты по-прежнему представляют годовую финансовую отчетность, а ректоры указывают направление расходов в своих годовых отчетах, но оценка эффективности использования финансовых средств все

еще выходит за рамки ответственности. Одна из основных причин сложившейся ситуации - отсутствие разработки и применения концепций эффективного использования финансовых ресурсов в университетах.

Ключевые слова: финансовые ресурсы, финансовая устойчивость, финансовая эффективность, управленческие решения.

CONCEPT OF EFFECTIVE USE OF FINANCIAL RESOURCES IN HIGHER EDUCATION INSTITUTIONS

Vahan Gorgyan

Phd student, Northern University

gevorgyan_vahan@yahoo.com:

The process of formation and use of financial resources in the higher education system of the Republic of Armenia has been observed both in practice and in the professional literature from the point of view of pure control, without paying proper attention to the assessments of the efficiency of the use of resources. Moreover, as required by law, universities still submit annual financial statements, with rectors noting the direction of spending and spending in their annual reports, but assessments of the efficiency of the use of finance are still outside the scope of accountability. One of the key reasons for the current situation is the lack of elaboration and application of concepts for the efficient use of financial resources in universities.

Keyword: financial resources, financial stability, financial efficiency, management decisions.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

<i>Գրիգոր Ասատրյան</i>	Հումանիզմը արդի սոցիալ-քաղաքական պրոցեսների համատեքստում.....	4
<i>Վալերի Միրզոյան</i>	Խրիմյան Հայրիկի սոցիալ-փիլիսոփայական դիտարկումները.....	15

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

<i>Лусине Флджян Кристине Григорян</i>	Системное мышление как основа инновационной экономики.....	40
<i>Աստղիկ Պողոսյան</i>	Մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձի ներդրման ուղիները ՀՀ-ում.....	51
<i>Ատոմ Մխիթարյան</i>	ՀՀ բարձրագույն կրթության համակարգի կառավարման իրավական հիմքերի բարեփոխման ուղղությունները.....	64

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

<i>Հրաչյա Դանիելյան</i>	Էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների կարգավորման հիմնախնդիրները...	69
<i>Behnood Souri</i>	The management of the payments and hierarchy of this system.....	79

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<i>Արմեն Ճուղոյրյան Նոննա Խաչատրյան</i>	Հետպատերազմյան վնասների սոցիալ-տնտեսական վերականգման ճանապարհային քարտեզը.....	88
<i>Վահան Գևորգյան</i>	Ֆինանսական պաշարների արդյունավետ օգտագործման հայեցակարգը բուհերում.....	99

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ»-Ի ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Հյուսիսսփայլում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A 4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):
- Հոդվածի վերջում գրել հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում, հիմնաբառերը:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով.
 - Երևանի Հյուսիսային համալսարան, խմբագրական խորհուրդ,
 - ուղարկել hyusisayin@gmail.com էլեկտրոնային փոստին:

ՀՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅ
2020 2 (6)

ЮСИСАПАЙЛ
НАУЧНЫЙ ЖУРНАЛ
2020 2 (6)

HYUSISAPAYL
SCIENTIFIC JOURNAL
2020 2 (6)

Համարի պատասխանատու՝ Ա. Ճուղուրյան

Համակարգչային ձևավորում՝ Ի. Մարուխյան

*Տարեգրքի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է
Հյուսիսային համալսարանի [www//northern.am](http://www.northern.am) պաշտոնական
կայքում:*

Չափաը՝ 60x84 ¹/₁₆
Տպագրություն օֆսեթ՝ 6.6 մամ.
Տպաքանակ՝ 120
Տպագրված է՝ Մեկնարկ ՄՊԸ-ում
Երևան-25, Արմյան 41